231. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային պատին, արտաքուստ, լուսամուտի գլխին, 8 տող.



Ի ՆԽ (991) Թ[ՈՒ ԱԿԼԱՆՈՒԹԵԱՆՍ], ՍԻՄԵՈՆ ՀԱՅՐ, Ե–
Ի ՏԻՐԱՆՈՒՆ ԵՐԵՑ, ՇԻՆԵՑԱՔ
ԶԵԿԵՂԵՑԻՍ
ՓՐԿՈՒ–
ԹԵԱՆ
ՍԻԲԱՏԱ
ԵՒ ԳՈՒՐ–
ԳԵՆԱ:

Հրատ. Բժշկյանց, 77, Ղրիմեցի, 11, Ջալալյանց, Ա, 79-80, Կռունկ, 1862, 4, 35, Երիցյան, 86, Երզնկյանց, 17, ՎՏ,10, Մովսեսյան, 20, Ղաֆադարյան, Հաղբատ, 141-142, Ոսկյան, Գվ, 90:

Ծանոթ. Եկեղեցու կառուցման-ավարտման և, ըստ այդմ, վանքի հնագույն հիշատակագրությունն է: Մատենագիրները եկեղեցու կառուցումը վերագրում են Խոսրովանուշին, Գուրգեն Ա (Կյուրիկե) և Սմբատ Բ թագավորներին, իսկ այստեղ՝ *հայր Սիմեոնին* և *Տիրանուն երեցին:* Արձանագրությունը շինողի դերում ներկայացնում է հոգևոր առաջնորդներին, սակայն նկատի առնելով նպաստավորողներին, չի մոռանում նրանց հոգու փրկության վճռի կայացումը: *Շինեցաք զեկեղեցին* բառացի չպիտի հասկանալ, այլ՝ ավարտելու վավերացում: Նկատի ունենալով նաև, որ այդ ժամանակ՝ 991 թ., արդեն մահացած էին Աշոտ Ողորմածը (977 թ.) և Խոսրովանուշը (988 թ.), վանականներն ավելի քան *ազատ են վարվել* ՝ իրենց վերագրելով եկեղեցու շինարարության պատիվը: Կ. Ղաֆադարյանի ենթադրությամբ՝ եկեղեցու շինարարությունը սկսվել է 976 թ. (ինչպես նշում է Սամուել Անեցին) և ավարտվել 991-ին՝ համաձայն սույն վկայության:

6-րդ տողում Սմբատ անունը գրված է *Սիբատ:* Կ. Ղաֆադարյանը այն համարում է բարբառային: Կարծում ենք, որ անվան այդօրինակ գրությունը արաբական արտաբերության արդյունք է (տես А. Хачатрян, Корпус арабских надписей Армении VIII-XVII вв., Ереван, 1987 с. 176): Նա շտկել է նախկին հրատարակիչների մի շարք վրիպումները:

Ի դեպ, կարևոր այս արձանագրության «խմբագրված» տեքստը պետք է լիներ. *ի Նխ թուականութեանս Հայոց ես՝ Սիմեւոն հայր եւ Տիրանուն երէց, շինեցաք զեկեղեցիս ի փրկութեան հոգոց Սմբատա եւ Գուրգենա:*

232. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային պատին, նախորդից վերև, 7 տող.



ՆՈՐՈՔՕՄՆ ԱՄԵՆԱՅՆ ՓՐԿԻՉԻՍ
ԱՋԻՑ ԱՊԱՇՂԱՐՈՂԱՍ, ԵՍ՝ ԲԷՐ–
ՈՒՍ, ԵՒ ԿՈՂԱՅԿԻՑՆ ԻՄ, ՏՎԻՆՔ
ՀՆՉԻՑ ՄԵՐ, Խ. (40) ԿԻՆԷԻՆՔ ՏՎ–
ԻՆՔ Ի ՎԱՐՉ ՄՇԱԿԱՑ ԱՇ
ՈՂՈՐՄԻ ՅԱՄԵՆԵՑՈՒՆ:
ԱՄԷՆ:

233. Նախորդի անմիջական շարունակությունը, 5 տող.

ԱՍԼԱՅՄԱՋԻ ԴՕՍՏ–
ՐԸՆ ԱԼԱՄՆ ՀԱՆԳԵԱՒ ԱՌ ՔՍ,
ԲԱԺԻՆՔՆ Ի ԴՕՌՆ ՏՎԻՔ ՀԱԽՊ–
ԱՏԱՅ ՔՍ ՆՇԱՆԻՆ:
ԹՎԻՆ ՌՃԴ (1655):

Հրատ. Դրիմեցի, 27. Չալալյանց, Ա. 80. Երիցյան, 86. 88. ՎՏ, 184. Դաֆթարյան, Հաղբատ, 142:

Ծանոթ. Ինչպես նկատել է Կ. Դաֆթարյանը, արձանագրությունների մեջ երեք անգամ ՈՒ-ի փոխարեն գործածված է Օ (նորոքօմն, դօռն, դօստրն), որը որևէ օրինաչափության չի ենթարկվում:

4-րդ տողի *հնչից* պետք է հասկանալ *ընչից (ինչք), ունեցվածքից,* իսկ մշակներին տրված *կինէինքը,* Կ. Դաֆթարյանի կարծիքով, դրամի անուն է՝ առաջացած անգլերեն *guinea*-ից, որը կարիք ունի նոր քննության:

Երկու վիմագրերը գրված են միաժամանակ, նույն ձեռքով, առանց անջատման, սակայն բովանդակությամբ լիովին տարիմաստ են, ուստի առանձնացվել են իբրև տարբեր արձանագրություններ: Կ. Դաֆթարյանը դիտել է մինչև իսկ երեք առանձին արձանագրություն, որը շարահյուսական անհաջող տարանջատման հետևանք է:

234. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան մուտքի կամարի վրա, 7 տող.

ՅԱՄՍ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱՁԱՒՐ ԵՒ Ք[ՐԻՍՏՈ]ՍԱՍԵՐ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԳԵՈՐԳԵԱՅ, [ՈՐԴՒՈՅ ԹԱԳԱ-
ՒՈՐ]ԻՆ ԴԱՒԹԻ, ԵՍ՝ ԲԱՐՍԵՂ, ԱՌԱՋՆՈՐԴ ՏԱՆՍ ՀԱՂԲԱՏԱՅ,
ՀԱՆԴԵՐՁ ՎԱՐԴԱՊԵՏ[ԱՒՔ ...Ի]ՆՄԱՆԷ ԵՒ Ի ՄԵԾԱՄԵԾԱՑ ՆՈՐԱ ՑՈՒՑԱՔ Զ... ՈՏ–
ՈՒԹԻ[ՒՆ] ԵՎ ԶՎԻՃԱԿԱՑ... ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆՍՆ ԱՁ Ի ՆՈՑԱ ԿԱՄՍՆ ԷԱՐԿ...
ԱՆ ԶՄԵՐ ԽՆԴՐԵԼԻՆ ՀԱՄ[ՏԱՏԵՑԻՆ]...ԶԻՒՐԵԱՆՑ ՊԱՊԱՆՑՆ ԶՀՐԱՄԱՆՍՆ ԵՒ ԶՈՐ...Յ
ԺԱՄ–
ՈՒՍ ՈՄԱՆՔ ՅԱՆՈՊԱՅԻՑՆ...ՆԿՈՒՆՆ ԱՌՆԵԼՈՎ ԶՆՈՍԱ ԴԱՐՁՈՅՑ ՅԵԿԵՂԵՑԻՍ
ԶՎԻՃԱԿԱԳՈՐԾԱՑ...[ԱՁ] ՊԱՀԵՍՑԷ ԶԹԱԳԱՎՈՐՈՒԹԻՒՆՆ ԳԵՈՐԳԵԱՅ ԵՒ Ա[Ր]ԲՈՑ ԹԱԳ-
ԱՒՈՐԱՑՆ ՄԱՍՆԱԿԻՑ [ԱՐԱՍՑԷ: ՈՎ] ՀԱԿԱՌԱԿ ԿԱ [Վ]ԻՃԱԿԻՍ՝ ՈՐՈՇԵԱԼ ԼԻՑԻՆ Ի
ՓԱՌԱՑ ՈՐԴՈՅՆ ԱՅ; Ի ԹՎԻՍ ՈՒԹ (1180):

Հրատ. Ղրիմեցի, 57, Երզնկյան, 33, ՎՏ, 33, Ղաֆաղարյան, Հաղբատ, 143:

Ծանոթ. Արձանագրությունը կամարաձև տողերով է, որոնց միջնամասը հողմահարվել է, և յուրաքանչյուր տողից մոտ մեկ երրորդը չկա: Թեև վնասվածության հետևանքով արձանագրությունն ամբողջականորեն վերականգնել հնարավոր չէ, սակայն իմաստը հասկանալի է՝ խոսքը գնում է նախնիների կողմից որոշված վանքի վիճակը վերստին հաստատելու մասին, և այս կապակցությամբ կազմվել է շրջաբերական, և որը հաստատել է թագավորը:

5-րդ տողի ***Յանոպայիցն*** նշանակում է ***անմիտ, խայտառակորեն*** (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, 1836, 217): Այս բառով վանքի առաջնորդները դատապարտում են նրանց, ովքեր խլել էին իրենց իրավունքները:

235. Ս. ՆԵՍԻՆ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան մուտքի գլխին, դրսից, մեծ գավթի մեջ, 22 տող.



Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՐՔԱՅ–
ԻՆ ԴԱՒԹԻ՝ ԹԱԳԱՒ[ՈՐԻՆ] ՅԱՂԹՈՂԻ, ՈՐՈՅ ԳԵՌ–
ՐԳԵԱ, ՈՐՈՒՈ ԲԱ[ՐԵՊԱՇՏ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԲԱԳՐԱՏԱՅ,] ԵՌԱՆԴԱՄԲ
...ՉՈՒՍ ԳԱՒԱՌՍ ԵՒ...ԵԱՆ ԷԿԵ–
ՂԵՑԻՔՍ ՀԱՂԲԱՏԱ ԵՒ ՍԱՆԱՀՆԻ...ԳԻՏՍ
[Գ]ԹԱՑԵԱԼ ՔԱՂՑՐ ԵՒ ԲԱՐԷՍԷՐ ... ԱՆՍ
ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆՆ ԱՋԱՏԵԱՑ ԳՐՈՎ ԵՒ...ԱՄԲ
... ՄԲ ԵԿԵՂԵՑԻՍ ԱՋԱ...ԱՅՆ Վ–
... ԱՆԳՈՒԹԵԱՆ ՁԵՂԵԱԼՍ ...[ՀԱ]ՅՐԱՆ–
ՈՑՍ ՅԱՂԱՒԹԻՒՔ ԱՈՑԱՅ ԱՄԵՆ[ԱՅՆ ... ՃՇՄԱ]ՐԻՏ ՀԱ–
ՒԱՏԱՑԵԼՈՑ ՀԱՍՏԱՏԵՍՑԻ ՄԵԾԻ Թ[ԱԳԱՒՈՐԻՆ ... ԵԱՆ
ՆՈՑԱ ԱԹՈՌ ԵՒ Ա... ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ... ... Մ ԲԱՐ–
[ԵՊԱՇՏԱ]Ց Ի ՁԵՌՆ Ա[ՍՏՈՒԱ[ԾԱՄ[ԵԾԱՐ] ... ... Ա ՍՈՑԱ
... ՁԱՆ
ԳԱՆԻՒ ԵՒ ԾԵԾԻՒՔ, ԸՆՁԻՑ ԵՒ Ի ... ՅՈՅՍ
...[Վ]ԵՐԱԳՐԵՑԱՔ ԳՐԻԳՈՐ ... ՆԱՒ
...ՁՎԱՐԴԵՒՈՐԻՆ ԱՆԽԱՓԱՆ: ԵԹԷ ՈՔ...
... ԱՓԻ ԿԵԱՑՆ ԱՅ: ԳՐԵՑԱՒ ԳԻՐՍ...
...[ԱՌԱՋ]ՆՈՐԴԻ ՀԱՂԲԱՏԱ, ՈՐ Է ԵՂԲԱՅՐ ԳՐԻԳՈՐՈՅ...
... Ո ՄԵՐ ԹԱ ՀԽ ԵՒ ՏՐ ԳՐԵՑԻ ԶԳՐԻԳՈՐԻ ԿԵՆԱՑ ... ԿԱՄ
ԱՒՆ ԻՒ–
ՐՈ: ԱՄԷՆ:

Հրատ. Ղրիմեցի. 4. Երզնկյան. 32-33. ԿՏ. 28. «Արարատ». 1886. 530. Brosset. Description. 4. Ղաֆադարյան. Հաղբատ. 144. Ոսկյան. Գվ. 303-304:

Ծանոթ. Արձանագրությունը վանքի կարևորագույն վավերագրերից է իբրև իրավա-

վճիռ: Ցավոք, այն կրող ճակատակալ քարը քայքայված է անձրևաջրերից, և զգալի մասը մնում է անվերծանելի:

Կ. Դաֆադարյանի կարծիքով, «արձանագրությունը գրված է 1110 թվականին կամ քիչ հետո, երբ Դավիթ Շինողը թուրքերից խլեց Սամշուլդեն և Հաղբատը» և, որ կարևոր է, այն վերաբերում է վանքում (եպիսկոպոսական) աթոռ հաստատելուն (ավելի ճիշտ՝ վերահաստատելուն) և եկեղեցին ու եղբայրությանը (միաբանությանը) պետական հարկերից ազատմանը»: Պրոֆեսորն իրավացիորեն տրտնջում է, որ «երրորդ տողի վերջին *եռանորաբ* և հաջորդ տողի սկզբին եղող աղճատված բառի *ծուս* վերջավորության մեր ընդօրինակությունը կասկածելի է, և նրանից բառեր կազմելն անհնարին: Բառս, կարծում եմ, ոչ թե ԵՌԱՆՈՐԱԲ, այլ ԵՌԱՆԴԱԱԲ պետք է վերծանել՝ այն դիտելով բարբառախոսակցական լեզվի *եռանդն*՝ սահման, իրավասության տիրույթների բաժանարար իմաստով (հարցի քննությունը տես Ս. Ավագյան, ՎԱԲ, էջ 78-79): Ըստ այսմ, պարզվում է, որ թագավորական վճռով սահմանվել-որոշվել են Հաղբատի և Սանահնի աթոռների վանքապատկան տիրույթների (կամ ծխերի) սահմանները:

236. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային մուտքի կամարի վրա, 4 տող.

Ի ՆԿԵ (1016) ԹՎԻՍ, ԵՍ՝ ՄՈՒԿՆ, ՈՐԴԻ ՀՈՆՈՎԱՐԱ, ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅ, ՈՐ ՆՈՐՈԳԵՑԻ
ՁՍԲ ԿԱԹՈՂԻԿ–
[ԷՍ, ՈՐ] ԱՒԵՐԵԱՒ Ի ՍԱՍՏԻԿ ՇԱՐԺՄԱՆԵ, ԵՒ ԵՏՈՒ ՁԱԳԱՐԱԿ ԻՄ ԳԱՆՁՈՎ ԳՆԱՇ,
ՎԱՍՆ [ԱՐԵՒՇԱՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՐՈՆԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՄԵՐ] ՄԵՂԱ[Ց]
Ս ԹՈՂՈՒԹԵԱՆ: ԵՒ ՊԱՐՏԻՆ ԻՆՁ ՅԱՄԵՆԱՅՆ ՏԱՐԻ ՁՎԱՐԴԱՎԱՐԻՆ ՄԵ...[ՏԱՒՆԻՆ...
ՊԱՏԱՐԱԳ ԿԱՏԱՐԵՆ]
ԱՆԽԱՓԱՆ: ԵՒ ՈՐ Պ[Ա]ԿԱՍԵՑԱՆԵԼ ՁԱՆԱ՝ ՆՁՈՎԱՇ Է [ԱՄԵՆԱԿԱԼ ՅԱՅ ԵՒ
ԿԱՏԱՐՈՂՔՆ ԱՒՐՀՆԻՆ Ի ՏԵԱՌՆԷ:]

Հրատ. Ղրիմեցի, 3-4, Ջալալյանց, Ա, 68, Երիցյան, 87, Երզնկյան, 45, «Արարատ», 1887, 35, Brosset, Description, 3, ՎՏ, 15, Դաֆադարյան, Հաղբատ, 145:

Ծանոթ. Արձանագրությունը տեղեկացնում է նորոգման մասին: Ուշագրավ է սաստիկ երկրաշարժի հիշատակությունը, որը կաթողիկե եկեղեցու ավերման և նոր նորոգման պատճառն է եղել:

Երկրորդ տողի կեսից սկսած, հաշվի առնելով պահպանված տառերը, հետքերն ու տարածությունը, հարմար գտնվեց վերականգնել *ՎԱՍՆ ԱՐԵՒՇԱՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՐՈՆԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՄԵՐ ՄԵՂԱՑ - :* Չալալյանցն ու Երզնկյանցն այս հատվածը կարդացել են՝ *ՎԱՍՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՅՈԳՒՈՅ ԻՄՈՅ,* որը առկա գրերի հետ չի համապատասխանում: Արևշատություն բառը հավանական է գտնում Կ. Դաֆթարյանը ևս:

Վերջին տողի շարունակությունը վերականգնվում է պայմանականորեն, քանի որ որոշ գրերի սուկ ուրվագծերներն են նշմարվում:

237. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. Հյուսիսային պատին, կամարի վրա, որն ընկնում է Ամենափրկիչ խաչքարի թիկունքի կողմը, 4 տող.



ՅՈՒՍԱՒՔ Յ ԱՅ ⌈ՍԲ⌉ ՆՇԱՆԻՍ ՀԱՂԲԱՏԱ, ԻՒԱՆԷ ԱՒԱԳ ՔԱՂԱՔԱՑԻ, ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՒՐ
ՎԱՐԴԵՆԻ, ՇԱՏ ԱՐԴԵԱՄԲՔ
ՄԻԱԲԱՆԵՑԱՆ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՍ, ԵՒ ՄԵՔ ՏՐ ՅՈՎԱՆԷՍ, ԼՐՄԱՄԲ ԵՂԲԱՐՑՍ, ՍԻՐՈՎ
ԸՆԿԱԼԱՔ ԵՒ, ԸՍՏ ՄԵԾԻ ՅՈՒՍ-
ՈՅՆ ԻՒՐԵԱՆՑ, ՏՈՒԱՔ ՆՈՑԱ ՁՆՈՐ ԿԻՐԱԿԷԻՆ :Գ: (3) ՇԱԲԱԹՆ ԱՒՐՆ ՊԱՏԱՐԱԳ
ՁԱՄԷՆ ԵՒ ՄԵ⌈Ծ⌉
ԵԿԵՂԵՑԻՔՍ: ԿԱՏԱՐԻՉՔ ԳՐՈՅՍ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ ԵՒ ԽԱՓԱՆՈՂՔՆ ԴԱՏԻՆ Ի ՏԷ
ԱՄԵՆԱՅՆ:

Հրատ. Չալալյանց. Ա. 71, Երզնկյան. 41, ԿՏ. 13, Դաֆթարյան. Հաղբատ. 146-147:

Ծանոթ. Առաջին տողում *Իւանէ աւագ քաղաքացի* արտահայտության կապակցությամբ Կ. Դաֆթարյանը բացատրում է. «*քաղաքացի* այստեղ Տփղիսեցի (թիֆլիսեցի) է նշանակում, իսկ *աւագ*-ը Իվանեի պատվո տիտղոսն է», որով ընդգծվել է նրա հիշխանավոր լինելու, իրավունքներ ունեցող պաշտոնյայի հանգամանքը: Իսկ ամու-

սինների *շատ արդեամբ* նվիրաբերումների դիմաց եկեղեցու հատուցումը՝ նոր կիրակեի երեքշաբթի օրվա պատարագի սահմանումն է առանց մեկենասների, միաբանության կողմից:

238. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. նախորդի տակ, 9 տող.



ԿԱՄԱՒՔ ԲԱՐԵՐԱՐԻՆ Ա՛Յ, ՊԱՏՐՈՆ
ՋԵՒԱՆՇԵՐՆ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՒՐ ՏՈՒԼԻ—
Ն, ՄԻԱԲԱՆԵՑԱՆ ՍԲ ՈՒԽՏԻՍ ՀԱՂԲԱՏԱ,
ԵՒ ՄԵՔ՝ ՏՐ ՅՈՎԱՆԷՍ ԵՒ ԵՂԲԱՐՔՍ ՏՈՒԱՔ
ՆՈՑԱ ՁՎԱՐԱԳԱ ԽԱՉԻՆ ՏԱՒՆ ՊԱՏԱՐԱԳ
ՁԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ: ՈՐՁԱՓ ԿԵՆԴԱՆ-
Ի ԵՆ՝ ՇՆՈՂԱՑՆ ԱՌՆԵՆ ԵՒ ՅԵՏ ԻՐԵԱՆՑ
ԵԼԻՑ՝ ՆՈՑԱ ՊԱՐՏԻՆ ԱՄԽԱՓԱՆ: ԿԱՏԱՐ-
ԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ Յ Ա՛Յ:

Հրատ. Ջալալյանց, Ա. 72, Երզնկյան, 41, ՎՏ, 234, Ղաֆադարյան, Հաղբատ,147:

Ծանոթ. Կ. Ղաֆադարյանը թվագրում է ԺԳ դարով:

239. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային դռան կամարի վրա, 10 տող.



ԵՍ՝ ՔԱՂԱՔԱՑԻ ԽՈՇ-
ԱՅ ԲԷՀԲՈՒԴՍ, ՍԲ ՆՇԱՆ-
Ի Հ[Ը]ՍԱՐԱՒԱՅԻՆ ԿԱՄԱՐՆ ՎԵ-
Ր ԷՐ ՅԸՆԿԵԼ, ՇԻՆԵԼ ՏՎԻ ՅԻՇԱՏ-
ԱԿ ԻՆՁ ԵՒ ՇՆԱՒՂԱՑ ԻՄՈՑ, ԵՒ
Կ[Ո]Ղ[Ա]ԿՑԻՆ ԻՄ: ՅԱՄԷՆ: ՇԻՆ-
ԵՑԱՒ:Ի: ԹՎ:ԻՆ :ՌՃ:Ե: (1656) Ի ՅԱՌԱ-
ՋՆՈՐԴՈՒԹԵ[Ա]Ն ՅԱՒԵՏԻՍ ԱՅՐՀ-
ԵՊ[Ի]Ս[Կ]ՈՊՈ[Ս]ԻՆ: ՇԻՆԵ[Ց]ԱՒ ՁԵՌԱՄԲՆ ՅԱՌԸՆ-
ՋԵՑԻՆ ԱՒԱ ՅԱԱՐՈՒՅՆՅԱ՛Ն:

Հրատ. Ջալալյանց, Ա. 69, Երզնկյան, 45, Երիցյան, 88, ՎՏ, 183, Ղաֆադարյան, Հաղբատ, 148-149:

Ծանոթ. Կ. Ղաֆադարյանը նկատել է. «Բեհբուդ անվան մեզ ծանոթ ամենահին հիշատակությունն է, որ հետո Թիֆլիսի հայերի մեջ XVIII դարի վերջերին և XIX դարում տարածվեց:

Այս Բեհբուդը ևս քաղաքացի է, այսինքն՝ թիֆլիսեցի և իր *Խոճայ* անվան վերադիրից երևում է, որ վաճառական է եղել, հավանաբար անվանի, որ իր հաշվին Ս. Նշանի փուլ եկած կամարը վերաշինել է»:

Յոթերորդ տողը Կ. Դաֆթաղարյանը կարդացել է *Շինեցաւ ի թվին Ռճ, եւ:* Մինչդեռ հարուցաւ մնալով բնագրին, այն պետք է կարդալ *շինեցաւ :Ի: ԹՎԻՆ: Ռ:Ճ:Ե: Ի:*

Արձանագրությունը հիշատակում է նաև նորոգումն իրականացնող առինջեցի Նավասարդի անունը: Վերջինս մի շարք վերանորոգումներ է կատարել Հաղբատի վանքում և այլուր՝ բանիցս նաև փակագրով հիշատակելով իր անունը:

240. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. նախորդի տակին, միատառ փակագիր.



ԲԱՐՍԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ, ԹՄԱՆԻ ՈՐԴԻ:
ՆԱՒԱՅՍԱՐԴ:

Հրատ. Երզնկյան, 45, Դաֆթաղարյան, Հաղբատ, 149, «Լրաբեր», 1980, 3, 83, 87:

Ծանոթ. Եռաւուղեղն այս միատառ փակագիրը, որը պարունակում է 33 տառ, բավականին բարդ ու գեղագիր կոմպոզիցիա է: Երզնկյանն առաջարկել է այն բացել՝ *Առնջեցի Նաւասարդ,* որը նախորդ՝ 1656 թ. արձանագրությունում հանդես է գալիս որպես շինարար վարպետ-ճարտարապետ, որն էլ փակագիրը դրոշմել է իր կողմից նոր դրված երեսակալ քարի վրա: Կ. Դաֆթաղարյանը վերծանել է *Վարպետ Նաւայսարդ, որդի...* և մտահոգություն հայտնել, որ կենտրոնական և ծախ ստեղները մնում են անվերծանելի, իսկ առաջին՝ *վարպետ,* բառը մնում է կասկածելի: Ուշադրությամբ հետևելով վերիվար հաջորդաբար դասավորված գրերին՝ փակագիրը բացվում է հավաստիաբար: Պարզվում է, որ փակագրով հանդես է գալիս վանահայր Բարսեղը, իր հայր Թմանը և ապա՝ ճարտարապետը: Եպիսկոպոսի հայրանունը պահպանվել է վանքի զանգակատան 1655 թ. արձանագրությունում (Հաղբատ, էջ 224)՝ *Թոման* ձևով, որն առավելապես ամրապնդում է փակագրի վերծանության ստույգությունը:

241. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. արևելյան պատին, արտաքուստ, փորագիր խաչի կողքերին, 3 տող.



ՍԲ ԽԱՉՍ ԱՒԳՆԱԿԱՆԼԷ
ՊԱԽՇԷ–
ԻՇԻՆ:

Հրատ. Դաֆթաղարյան, Հաղբատ, 149:

Ծանոթ. Թվագրվում է ԺԳ դար:

242. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. արևելյան պատին, դրսից, լուսամուտից ծախ.

ԱՍՏՈՒԱԾ:

Ծանոթ. ԺԸ-ԺԹ դդ. գրված բառս նկատել է հուշարձանապաշտ Վանիկ Աբելյանը:

243. Ն. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային պատին. ներքուստ, 6 տող.



ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅ ՇԼԲ (1083) ԹՈՒԼԻՆ], ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ[ԱՆ ՏՐ ՍԱՐԳՍԻ],
ԿԱՄ ԵՂԵՒ ԻՄ՝ ՍՄՊԱՏԱ ԹԱԳԱՒՈՐԻ, ՈՐԴՈՅ ԴԱՒԹԻ, ՈՐ ՇԻՆԵՑԻ Ի ՀԱՂ–
ԲԱՏ ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԷՏՈՒ Ի ՍԲ ՆՇԱՆՍ ԸՆԾԱՅ ԶԱՄՃԵՒՈՔ
ԶԻՄ ... Յ. Ա. ԿԱ... ԱՅԳԻՆ, Բ (2) ԿԱՊԻՃ ՀՈՂ ԶԿԱՊՆ ԶԻՄ[ՈՅ], ԱՒԵ–
ՏԱՐԱՆ ԵՒ ՏԱԼ ԷՏՈՒ.... ՊԱՀԱՆԿ[Ա]Ն ԶՊՈՐՏՈՒՑ ... ԵՒԱՆՆ
ՎԱՍՆ ԻՄ ԵՒ ԿԻՒՐԻԿԷԻ ԱՐԵՒՇԱՏՈՒԹԵ[ԱՆ] ԵՒ ԻՄ ՄԵՂԱՑ ԹՈՂՈՒԹԵ[ԱՆ]:

Հրատ. Դաֆթարյան, Հաղբատ, 150:

Ծանոթ. Նկատի ունենալով Կիրակոս Գանձակեցու հաղորդումը այս ժամանակներում Կյուրիկեի «պալատական քահանա» Սարգսին Հաղբատի վանահայր նշանակելու և «եպիսկոպոսական աթոռանիստ» դարձնելու մասին հաղորդումը (Գանձակեցի, էջ 79), առաջին տողի վերջում լրացվում է՝ *տէր Սարգսի:* Ինչ վերաբերում է Սմբատ թագավորին, ապա նա Դավիթ Անհողինի որդին է, Կյուրիկեի և Հրանուշ թագուհու եղբայրը, որը քրոջ միջոցով 1061 թ. Սանահնում կառուցած Ս. Գրիգոր եկեղեցու արձանագրության մեջ հիշատակված է՝ *ի թագաւորութեան Կիւրիկէի եւ Սմբատայ:* Իսկ թե ինչ եկեղեցի է Հաղբատում կառուցել մատենագիրների կողմից մոռացված Սմբատ թագավորը, հայտնի չէ, և այդ չէր կարող վերաբերել արձանագրությունը կրող Ս. Նշանին, որը շինված էր մեկ դար առաջ:

Արձանագրության 3-5-րդ տողերի իմաստը լրիվ չի պարզվում, եղծված հատվածների պատճառով, անգամ հստակ չեն բառանջատումները: Երրորդ-չորրորդ տողերի *զամճեւոք զիմ... Յ.Ա. կա...այգին* թերևս ունի *խառը (տեսակ-տեսակ) ծառերով հայրենական այգին,* իսկ *Բ կապիճ հող զկապն՝ երկու կապիճ* (չափի միավոր է) հող, որը գտնվում է կապում, դժվարանց տեղում:

244. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային պատին, ներսում, 14 տող.



Ի :ԵՀ: (1021) Թ[ՎԻՍ] Հ[ԱՅՈՑ], ԵՍ՝ ԱՊԼԽԱՐ-
ԻՓ, ՈՐՊԻ ԳՐԻԳՈՐՈ, ԷՏՈՒ Զ-
ԱՐՕՈՒԷԲՈՅՆՆԻ Ի ՀԱՂԲԱՏ,
ԳԱՆՁԱԳԻՆ ԱՐԱՐԵԱԼ Վ-
ԱՍՆ ՅՈՎԱՆԻՍԻ ԱՐԵՒՇԱ-
ՏՈՒԹ[ԵԱՆ] ԵՒ ԻՆՁ՝ ՍԵՂԱՑ
ԹՈՂՈՒԹ[ԵԱՆ], ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆ
ԵՆ ԱՄԵՆԱՅՆ ԱՍԻ :Բ:ԽԸ: (40) ՈՒ-
ՆԷ ՈՒՆԵԼ. ԻՆՁ: ԱՐԴ, ԷԹԷ ՈՔ
ՁԻՄ ՈՒԽՏՍ ԽԱՓԱՆԵԼ Զ-
ԱՆԱ՝ ՆՁՈՎԵԱԼ ԼԻՑԻ
ՅԱՍԵՆԱԿԱԼ ԲԵՐԱՆԷՆ ԱՅ
ՍԻ՝ ՏԵՍՑԷ ՀԱՅՐԷՆԻ ՓԱՌԱՔ
ՁՈՐՊԻՆ ԱՅ:

Հրատ. Դրիմեցի. 26. Ձալալյանց. Ա, 75, Երզնկյան, 18. Երիցյան, 88, Brosset, Discription, 26. «Արարատ», 1886, 189. ԿՏ,15. Դաֆթարյան. Հաղբատ, 150-151:

Ծանոթ. Ութերորդ տողում *ԲԽ-ունք,* պետք է կարդալ՝ *երկու քառասունք* (Կ. Ղ.): Հավանաբար այս Ապլխարիփի որդին է, որ տղա հասակում մահացել է Անիում և 1038 թ. թաղվել Սանահնում (արձ. N 199):

245. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային պատին, ներքուստ, նախորդի մոտ, դժվարընթեռնելի, 18 տող.



ԱՆՈՒԱՍԲԱՅ. Ի ԹՈՒԱԿԱՆԻՍ ՀԱՅ-
ՈՑ ՇԺԲ (1063), ԵՍ՝ ՈՒԹՄԱՆՍ [ԱՌԱՋ]
ՆՈՐԴ [ԳԵՂ]-
ԻՍ, ԵՏՈՒ ՁՓՈՒ[ԷՔ]ՈՅ ՏՈՒՆ Ի ՍՈՒՐԲ ՈՒ-
[ԽՏ]ԻՆ [ՀԱՂԲԱՏԱ] Ի ԺԱՄԱՄԱԿԻՍ ՀԱՒ-
Ր ՅՈՀԱՆԻՍԻ՝ ՍԲ ԵԿԵ[ՂԵՑՈՅՍ ԱՌ]ԱՋՆ-
ՈՐԴ Ի ԵՒ.....
ԵՎ ՈՐՊՈՑ ԴԱՒԹԻ՝ [ՍՄՊԱՏԱՅ].....
ԵՒ ԿԻՒՐԻԿԷԻ ԱՐԵՒՇԱՏՈՒԹԵ[ԱՆ] ԵՒ ԳՐԵ-
ՑԻՆ
ԻՆՁ ՁՎԱՐԴԱՎԱՐԻՆ ՔԱՌԱՍՈՒՆՔՆ ՄԻՆ-
ՁԵՒ Ի
ՎԱԽՃԱՆ ԱՇԽԱՐՀԻ: ՈՐՁԱՓ ԵՍ ԿԵՆԴԱ-
ՆԻ ԵՄ՝ ԻՄ

ՇՆՈՂԱՑՆ, ԵՒ ԵՐԲ ԵՍ ՎԱԽՃԱՆԵՄ՝ ԻՆՁ ԱՌՆԵՆ: ՈՐ Ի
ՅԱՅՍ ԺԱՄԷՍ ՊԱԿԱՍԷՑԱՆԷ՝ ԻՄ ՄԵՂԱՑՍ ՏԷՐ Է ԱՌ–
ԱՋԻ ԱՅ: ԵՒ ԷԹԷ ՈՔ ՀԱԿԱՌԱԿ ԿԱ ԱՅՆ ԳԵՂՋՆ
Ի ՓՈՔՈՒՆՑ ԿԱՄ Ի ՄԵԾԱՑ, ՈՐ ՅԱՓՇՏԱ–
ԿԵԼ ՋԱՆԱ Ի ԱԲ ՈՒԽՏԷՍ. ՄԱՍՆ ՊԱՏԺԻՆ
ՅՈՒԴԱԻՆ ԱՌՑԷ ԵՒ ԴԱՏՈՂ ՆՈՐ՝Ա ՍԱՏ՝ԱՆԱ ԵՂ–
ԻՑԻ: ՀԱՍՏԱՏՈՒՆ Է ԳԻՐՍ, Ի ԿԱՏԱՐ ՀՐԱՄ–
ԱՆՍ ԿԻՒՐԻԿԷԻ ԵՒ ՍՄՊԱՏԱ, ՈՐԴՒՈՑ ԴԱՒԹԻ:

Հրատ. Կ. Դաֆադարյան, Հաղբատ, 151:

Ծանոթ. Դավիթ Անհողինի որդիներ Սմբատի և Կյուրիկեի սույն նվիրագրի հատկապես 5-7-րդ տողերը եղծված ու հողմահար են, ու անհնար է ամենայն ճշգրտությամբ վերականգնել-ամբողջացնել բնագիրը: Չնայած սրան, պարզ է, որ Ութմանը գյուղապետ է, և նա Սանահնում հիշատակված ***Փուէք*** գյուղի ծուխը տվել է Հաղբատին (***ետու զՓուէքոյ տուն ի սուրբ ուխտին Հաղբատայ***): Արձանագրության մեջ մնում են մութ կետեր: Կարելի է ընթերցել նաև՝ ***փոոյ տուն:***

246. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային պատին, ներքուստ, նախորդի կողքին, 5 տող.



ԻՀՈ ՏԱՆՈՒՏԵՌՍ, ԵՒ ԵՂԲԱՒՐՆ ԳՐԻԳՈ–
ՐՈ, ՀԻՆ ՊԱՏԱՐԱԳ ԱՄԵՆԱՅՆ ՏԱ–
ՐԻ ԱՆԽԱՓԱՆ ՄԱՏՈՒՑԱՆԵԼ ՅԱ–
ԻՈՒՐՍՐԲՈՅՆ ԳԻՈՐԳԱ: ԵՒ ՈՐ ԽԱՓ–
ԱՆ ԼԻՆԻ՝ ՆՈՑԱ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է:

Հրատ. Ջալալյանց, Ա, 76, Երզնկյան, 18, Երիցյան, 88, Դաֆադարյան, Հաղբատ, 152:

Ծանոթ. Արձանագրության սկզբնամասը չի պահպանվել. Կ. Դաֆադարյանը գրում է. «Նվիրատուների անունը աղճատված է: Հավանաբար մեկինը վերջանում է ***հո*** գրերով, իսկ շարունակությունը պետք է կարդալ ***տանուտերիս***»: Խոսքը վերաբերում է առաջին տողի ***տանուտեռ*** բառին, իսկ ***հին պատարագ,*** պետք է կարդալ՝ ***մին պատարագ:*** Թվագրվում է ԺԱ դ.:

247. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. հարավային պատին, ներքուստ, 4 տող.

ՊԱՐՈՆ
ԽՈՒՏԼ
ՈՒԲՈՒՂ–
ԱՅ:

Հրատ. ХВ, 1912, т. 1, ՎՏ, 160, Դաֆադարյան, Հաղբատ, 152, Ավագյան, ՎՊ, 160:

Ծանոթ. Ս. Նշան եկեղեցու ներսի որմնանկարում պատկերված է ամիրսպասալար և աթաբեկ Խութլուբուղան:

Նա XIII դ. հայ-վրացական քաղաքական, հասարակական ու ռազմական ասպարեզում նշանավոր գործիչ էր, Արծրունիների տոհմից, որդին էր ոչ պակաս նշանավոր Սադունի: Խութլուբուղայի ազդեցության գորության առավել բնորոշ դրսևորումներից է նրա որմնանկարը Հաղբատավանքի պատին, որը եզակի երևույթ է վանական սովորույթների շարքում: Մեծ իշխանին բաբարները կառափնել են մոտավորապես 1294-95 թթ.: Որմնանկարը պետք է որ կատարված լինի 1293 թ. ոչ ուշ, քանի դեռ սպասալար չէր դարձել, և հայրը կենդանի էր, այդ պատճառով նա կրում է *պարոն* տիտղոսը:

248. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. սեղանի ճակատին, 5 տող.



[ՅԱՒՈՒՐՍ] Ա[ՍՏՈՒԱ]ԾԱՊԱՇՏ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԴԱՒԹԻ ԵՒ ՀԱՒՐ...
ԿՈՍԻ ՆՅԳ (1024) ԹՈՒԱԿԱՆԻՍ ԸՆՉԱՇԱՑ ՅՈՐԴՈՐՆ ՅԱՐ[Ծ]-
Ն ՔԱՂԱՔԷ Յ (300) ԴԱՀԷԿԱՆ ՄԲ ԿԱԹԱՒԴԻԿԷՍ: ՅԻՇԱՏԱԿ ՀԱՍ[Տ]-
ԱՏԵՑԱՔ ՆՍԱ ԶԱՒՐ ՄԲ ՍԱՐԳԱՒ, ՈՐ ՅԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ՊԱՏԱՐԱԳ
ՍԱՏՈՒՑԱՆԻ ՄԻՆՉ ՈՒԽՏՍ Ի ՀԱՍՏԱՏ [Է]:

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 154:

Ծանոթ. Այս տարիների արձանագրություններից որևէ մեկում վանքի առաջնորդի անունը չի հիշատակվել, ուստի առաջին տողի վերջում վանահոր անունը հավաստի վերականգնել անհնար է: Երկրորդ տողի սկզբում պահպանված *կոս* վերջավորության հիմքում Կ. Ղաֆադարյանն առաջարկել է Մարկոս կամ Կիրակոս անունները:

249. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային պատին, ներքուստ, 12 տող.



ՇՆՈՐՀ[ԻՒՆ ԱՅ]...
Է ՀԱՒՐ ՅՈ[ՀԱՆԷՍԻ]...
ՈՐՈԲԻՍԿ...[ՅՈՐ]-
ԺԱՄ ԵԿՆ ԱՌ[ԱՋՆՈՐԴԵ]
ՅԱՐ ԸՆԴ ԵՂԲ[ԱՅՐՔՍ]...
[ԵՐ] ԵՏ ՁԻՒՐ ...
...ՁՃԽԵՐ...
ՔԱՌԱՍՈ[ՒՆՔ... ՈՐՉԱՓ]
ԿԵՆԴԱՆ[Ի ԵՄՔ՝ ՄԵՐ ՃՆԱՒՂԱՑՆ ԱՌՆԵՆ ԵՒ]
ՅԵՏ ՄԱՀՈՒ[ԱՆ ՄԵՐ՝ ՄԷՂ]...
ԱՒՈՐԱՑՍ, ԵՒ ՈՐ [ԽԱՓԱՆԵ ՆՁ]
ՈՎԱՃ Է ԱՅ[Ղ]ՈՒՔ...

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 152:

Ծանոթ. Այս արձանագրությունը գրված է կարմիր ներկով: Աջակողմյան կեսը ծածկված է Խութլուբուղայի որմնանկարով, հետևաբար այն իշխանի պատկերից հին է: Արձանագրությունը տրվում է Կ. Ղաֆադարյանի կատարած վերականգնումներով և անհնչան լրացումներով:

250. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. բեմի վեմ քարին, որմնանկարի վրա, ներկով, 1 տող.

ԱՐԱՐԻՉ ԵՐԿՆԻ ԵՒ ԵՐԿՐԻ:

251. Քրիստոսի ձեռքի Ավետարանի բաց էջերի վրա, մի երեսին հայերեն, 4 տող, մյուսին՝ վրացերեն.



ԿԱԼՑԻ
ՉԿԵԱՆՍ
ՅԱՒԻ-
ՏԵՆԻՑ

Ծանոթ. Պ. Մուրադյանը, վրացերենին գուգընթաց, վերընթեռնելով ամբողջացրել է «Որմնանկարի ավետարանի բաց էջին» գրված հայերեն սույն մակագրությունը.

ԵՍ ԵՄ ԼՈՅՍ Ա-
ՇԽԱՐՀԻ, ՈՐ Ա-
Ո
ԻՍ՝ ԸՆԴ ԽԱՒ-
ԱՐ ՄԻ ԳՆԱՍՑ-
Է, ԱՅԼ ԸՆԿԱ-
ԼՑԻ ՉԿԵԱՆ
ՅԱՒԻՏԵՆԻՑ:

Հրատ. Մուրադյան, ՀՎԱ, 191:

252. Որմնանկարի վրա, նախորդից ձախ, Տիրոջը տաճարին ընծայելու տեսարանի տակ, 2 տող.



ԸՆԾԱՅՈՒՄՆԻ ՏԱՃ-
ԱՐԻՆ:

Ծանոթ. Այս և հաջորդի վրացերենը հրատարակել է Պ. Մուրադյանը (ՀՎԱ, 191-192): Թվագրվում է ԺԳ դ.:

253. Որմնանկարի վրա, նախորդից ձախ, ծննդյան պատկերի տակ 1 տող.



ԾԸՆՈՒՆԴ ՔՐԻՍՏՈՍԻ:

Հրատ. Այս չորս արձանագրություններն ունեն՝ Երգնկյան 14, «Ազգ. հանդ.», VII-VIII, 397, Ղաֆադարյան, Հաղբատ, 154-155:

254. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. հարավային պատին, ներքուստ, 14 տող.



ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅ ՈՒ [ՀՐԱՄԱՆԱՒ]...
ԴԱՒԹԻ ԵՒ ԿԻՒՐԻ [ԿԵՒ, ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ]
ՀԱՒՐ ՅՈՎՀԱՆՆԵՍ [Ի, ԵՍ՝ ՎԱՀՐԱՄ,]
ԵՏՈՒ ՁՋՈՁԿԱՆՑ Ի ՍԲ ՆՇԱ [ՆՍ ... ԹԱ–]
ԳԱՒՈՐԱՑՍ, ՍՈՑԱ ԱՐԵՒՇԱՏ [ՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԵՐ ՄԵՂԱՑ]
ԹՈՂՈՒԹԵ [ԱՆ]: ԳՐԵՑԻՆ ԻՆՁ ԺԱՄ Ձ ... [ՇԱ]
ՌԶԱՐԴԱՐՆ: ՈՐՉԱՓ ԺԱՄ{ԱՐ} ԼԻՆԻ ՍՈՑԱ ԱՌ–
ՆԵՆ ԵՒ ԵՏ ԻՄ ՎԱԽՃԱՆԻՆ՝ ԻՆՁ: ԵՍ՝ ՀԱՅՐ ՅՈՀ [Ա]Ն [ՆԵՍ]
ԵՒ ԵՂԲԱՐՔՍ, ԳՐԵՑԵՔ ՎԱՐՀԱՄԱ ԺԱՄ ԱՆԽԱՓԱՆ՝
ՄԻՆՁ Ի ԳԱԼՈՒՍՏ [Ն] ԱՅ, ԵԹԵ ՈՔ ԱՅՍ ԳՐՈՅՍ ՀԱ–
ԿԱՌԱԿ ԿԱ ԿԱՄ ՊԱԿԱՍՑԱՆԵ՝ ՆՁՈՎԱԾ Է ՅԱՅ ԵՒ
Ի ՄԵՁԱՆԵ ԵՒ ՁԱՆԵԾԱ ՅՈՒԴԱՒ ԺԱՌԱՆԳԵԱՑԵ ԵՒ
ՈՐ ՁԱՅՍ ԳԵԱՒՂ Ի ՍԲ ՆՇԱՆԵՍ ՅԱՓՇՏԱ–
ԿԵ՝ ՁՆՈՅՆ ԱՆԵԾԱ ԸՆԿԱԼՑԻ Ի Տ [ԵԱՌՆ] Է ՅԱՅ:

Հրատ. Զալալյանց. Ա. 76. Երզնկյանց 18. ՎՏ. 88. Դաֆ-ադարյան. Հաղբատ. 155:

Ծանոթ. Առաջին տողի վերջնամասը Կ. Դաֆադարյանն առաջարկել է լրացնել 9-րդ տողում հանդես եկող Վահրամի անունով (*ու... ես Վարհամ...*): Ամենևին չառարկելով այս հարցում, կարծում ենք, որ բովանդակությունը և Ու տառի առկայությունը թույլ են տալիս առաջին և երկրորդ տողերը վերականգնել ըստ ներկայացվածի, իսկ Վարհամին համարել նվիրատու, և նրա անունը վերականգնել 3-րդ տողում:

Ժամանակը որոշվում է Դավիթ Անհողին թագավորի գահակալության տարիներով՝ ԺԱդ, առաջին կես: Առաջին տողերի աջակողմյան գրերը ոչնչացել են հետագայում լուսամուտ բացելու հետևանքով:

Զոքկանց-ը գյուղ է, որը տրվել է վանքին:

3-րդ տողի ԺԱՄԱՐ բառում Կ. Դաֆադարյանը ԱՐ տառերն ավելորդ է համարում (խմբ.):

255. Ա. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. ներքուստ, 12 տող.



ՅԱՆՈՒՆ ԱՅ ԱՅՍ ԻՄ ՀՐԱՄ–
ՄԱՆՔ է ԿԻՒՐԻԿԷԻ, ՈՐԴՈՅ ԴԱՒԹԻ,
ՈՐ ԷՏՈՒ ԶԲԵՐԴԱՆ Ի ՀԱՂԲԱՏ՝
ՇԵՐԿԱՆՆ ՀՈԳՈՅՆ ԵՒ ԵՏՈՒ ԳՐԵԼ ԶՍԲ
[ԳՐԻԳ]ՈՐԻ ՏԱՒՆԻ ՇԱԲԱԹՆ ԱՒՐ ՅԱՂ–
ՈՒՀԱՑՔՆ ՅԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԺԱՄ ՆՄԱ
ԱՌՆԵՆՔ: ԵՒ ԵԹԷ ՈՔ ԽԱՓԱՆԷ՝ ԿԱՄ ՀԱՅՐ, ԿԱՄ ԵԿԵՂԵՑՊԱՆ,
ԿԱՄ ԶԱՅՆ ԳԵՂՆ ՅԱՓՇՏ[ԱԿ]ԵԼ ԶԱՆԱ, ԿԱՄ ՅԻՄՈՑ, ԿԱՄ
ՅԱՒՏԱՐԱՑ, ՊԱՐՏԱԿ[Ա]Ն է ՇԵՐԿԱՆ ՄԵՂԱՑՆ ԵՒ ԶԱՆ–
ԷՇ ՅՈՒԴԱՒ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱՎԱՇԱՌԻ ԺԱՌԱՆԳԵ[Ս]–
ՑԷ ԵՒ ԶԿԱՅԷՆԻ ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆԻ ԸՆԿԱԼՑԻ ՆԶ[Ո]ՎԱՍ:

.....

Հրատ. Դաֆադարյան, Հաղբատ, 156:

Ծանոթ. Դավթի (Անհողինի) և Կյուրիկե Բ արքայի անունների առկայությունը թույլ է տալիս թվագրել արձանագրությունը ԺԱ դարի երկրորդ կեսով: ***Բերդաղը*** գյուղանուն է: Վերջին՝ ոչնչացած տողում պետք է լինի հատուցման բանաձևումը՝ ***կատարողքն աւրհնին Յայ*** կամ համանման մի այլ ձևակերպումով:

256. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. հարավային պատին, ներսից, 10 տող.



.....ԲԼՄՍ

.....Ի ԹԱԳ–

[ԱՒՈՐՈՒԹԵԱՆ].....ՀԱՂԲ

ԱՏԱ ՍԲ ՆՇԱՆՆ, ՀՐԱՄԱՆԱՒ ԵՒ ԳՐՈՎ ՍՄՊԱՏԱ,

ՎԱՍՆ ԻՒՐ ԱՐԵՒՇԱՏՈՒԹԵ[ԱՆ] ԵՒ ՀԱՒՐՆ, ԵՒ ՄԱՒՐՆ, ԵՒ ԵՂԲԱՐ–

ՑՆ, ԵՒ ԻՄ ՄԵՂԱՑՆ ԹՈՂՈՒԹԵ[ԱՆ]: ՊԱՐՏԻՆ ԻՆՉ ԱՄԵՆԱՅՆ ՏԱՐԻ Ա (1) ԱՒՐ ՊԱՏԱՐ

ԱԳ ՄԱՏՈՒՑԱՆԵՆ ԱՆԽԱՓԱՆ ԵՒ ԱՆՊԱՏՇԱՌ: ԵՒ ԵԹԷ ՈՔ ԱՅՍ

ԳՐՈՅՍ ՀԱԿԱՌԱԿ ԿԱ ԿԱՄ Պ[Ա]Կ[Ա]ՍՈՒՑԱՆԵԼ ՁԱՆԱ՝ ԻՄ ՄԵՂԱՑՆ ԱՌԱՋ–

Ի ԱՅ ՊԱՐՏԱԿԱՆ Է ԵՒ ՆՉՈՎԻՑ ՏԻՐ ԵՂԻ՝ ՈՎ ՈՔ ԵՒ ԻՑԵՆ, ԵՒ ԲԱԺԻՆ

ԸՆԴ.....:

Հրատ. Դաֆադարյան, Հաղբատ, 156:

Ծանոթ. Առաջին երեք տողերը ոչնչացել են պատուհան բացելու հետևանքով: Պահպանվել են տողերի վերջնամասերը, որոնց ոչ սկիզբը կա, ոչ՝ վերջը: Այդ պատճառով էլ, բոլորովին անհասկանալի է առաջին տողի վերջում պահպանված ԲԼՄՍ տառաշարքը: Վերջին տողը կարելի է լրացնել՝ *ընդ Յուդայի առցեն:* Ժամանակը՝ ժ դ. է, որոշվում է Սմբատի թագավորության տարիներով: Սակավ է պատահում, որ անգամ արքայական վճիռները հաստատվեն *հրամանաւ եւ գրով:* Պետք է կարծել, որ այս դեպքում Սմբատը թագավորական կնիքով հաստատված գրավոր հրաման է արձակել և այն փորագրել տվել եկեղեցու պատին՝ վճիռն ավելի հաստատուն ու ներազդու դարձնելու նպատակով:

257. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. հարավային պատին, ներսում, Շահնշահի եղծված որմնանկարի գլխին, երևում է միայն տողերի սկիզբը, 4 տող.



ԵՍ՝ ՇԱՀԸՆՇԱՀ, ՈՐԴ[Ի ՇԱՀԸՆՇԱՀԻ ՍԱՐԳՍԻ],

ԹՈՌՆ ՄԵԾԻ ՁԱՔԱՐԷԻ,.....,

ՅՈ ԵՒ ՏԱՆՁԵԿ Ո. ....[ՎԱՍՆ ԱՐԵՎՇԱՏ]–

ՈՒԹԵ[ԱՆ] ԻՆՉ ԵՒ ՅԻՇԱՏԱԿ [ՃՆՈՂԱՑ ԻՄՈՑ:]

Հրատ. Դաֆադարյան, Հաղբատ, 156-157:

Ծանոթ. Արձանագրության հեղինակ Շահնշահն իրեն անվանում է *թոռն մեծի*

Զաքարէի: Լայնորեն հայտնի է իբրև Շահնշահ որդի Զաքարե ամիրսպասալարի: Ընդ որում. նրա իսկական անունը եղել է Սարգիս (պապի անունով): Շահնշահ թոռն Զաքարեի հայտնի չէ, սակայն, ինչպես ցույց են տալիս Զաքարեի որդու՝ Սարգիս Շահնշահի և մի շարք այլ օրինակներ ևս. Շահնշահը շատ հաճախ ըմբռնվել է իբրև տիտղոս և անուն միաժամանակ: Այս պատճառով բերված օրինակում թերևս Շահնշահը տիտղոս է, և քանի որ Զաքարե Մեծից հետո այն կորցնում է իր պատշաճությունը, ուստի նվազում է նաև նրա գործածությունը անվան փոխարեն: Տվյալ դեպքում, քանի որ Շահնշահն իրեն անվանում է *թոռն մեծի Զաքարեի,* ուստի նա որդին է Շահնշահ Սարգսի: Պատմագրության մեջ հայտնի է իբրև Զաքարե Գ: Նկատի ունենալով այս, արձանագրությունը պետք է թվագրել ԺԳ դ. կեսերով, իսկ առաջին տողի երկրորդ կեսը լրացնել՝ *ՈՐԴԻ ՇԱՀԸՆՇԱՀԻ ՍԱՐԳՍԻ:*

258. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ. հարավային պատին, ներսից, 12 տող.



ԵԻԴԱ[illegible] ՅԱՌԱՔԻԱՅ

ՇԺԶ (1067) թվ[ին], ԵՍ՝ ՀԱՅՐ ՅՈՀԱՆ ԵՒ ՄԻԱԲԱՆ ԵՂԲ–
ԱՐՔՍ ԳՐԵՑԱՔ ԶՍԲ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԻՆ ԶՇԱԲԱԹՆ ԱՒ–
ՐՆ ՍԱՀԱԿԱ ԵՒ ԽԱՉԱՒՐԻՆ՝ ԻՒՐ ԱՄՈՒՍՆՈՅՆ, ՅԱՄԵՆԱՅՆ
ԵԿԵՂԵՑԻՔՍ ԺԱՄ ԱՌՆԵՆՔ: ՈՐՉԱՓ ԻՆՔՆ ԿԵ–
ՆԴԱՆԻ Է՝ ԻՒՐ ԾՆՈՂԱՑՆ ԱՌՆԵՆՔ ԵՒ ԵՐԲ ԿԱՏԱՐ–
ԻՆ՝ ԻՒՐԵԱՆՑՆ ԼԻՆԻ: ԵՍ՝ ՏՐ ՍԱՐԳԻՍ, ՀԱՍՏԱՏԵՑԻ
ԶՍԱՀԱԿԱ ԵՒ ԶԽԱՉԱՒՐԻՍ ԶՅ[Ի]ՇԱՏԱԿ[Ն, Ո]Ր
ՅԻՒՐԵԱՆՑ ՀԱԼԱԼ ԸՆՉԻՑ ԸՆԾԱՅԻ ԵՆ ՏՎԵԱԼ Ո (600)
ԴԱՀԵԿԱՆ, ԱՐԴ, ՈՐ ՈՔ ՀԱԿԱ[ՌԱԿԻ]...
ՉԱՌՆԷ ՉԱՆ
Ց]ԴԱՏՈՂՆ ՈՐՈՇԵԱԼ ԵՂԻՑԻ ԵՒ ՆՈՑ
Ա ԵՒ ԱՄԵՆՔՆ ՊԱՐՏԱԿԱՆ ԵՆ ԱՌԱՋԻ ԱՅ]:

Հրատ. Դաֆթարյան, Հաղբատ, 157:

Ծանոթ. Հրատարակիչը թերի է վերծանել արձանագրության վերջին երեք տողը՝ առանձին բառեր մասամբ վերականգնելով երկու տողով: Դրանք տեղում ուշադիր ընթերցելուց հետո ամբողջացվել են:

Կ. Դաֆադարյանը ուշագրավ է համարում այն, «որ առաջին տողում իբրև առաջնորդ հանդես է գալիս *հայր Յոհանը,* իսկ 6-րդ տողում՝ *Տէր Սարգիսը:* Պետք է ենթադրել, որ Սարգիսը Յոհանի հաջորդներից մեկն է...»:

Տվյալ դեպքում միաժամանակ երկու առաջնորդների գոյությունը և նրանց՝ միմյանց նախորդելու կամ հաջորդելու ենթադրության հավանական լինելը երկմտելի է, այլապես Յոհանին պետք է համարել Կյուրիկյանների տան երբեմնի երեց Սարգսից առաջ Հաղբատի վանահայր, որը հայտնի չէ այլ աղբյուրներից: Ավելի հավանական է, որ նա եղել է տարեց և պատվարժան հոգևորական, կրել է *հայր* պատվանունը, միաբանների հետ *գրեցաք Սահակի* ու կնոջ՝ *Խաչաւրի* հիշատակի համար շաբաթ օրը բոլոր եկեղեցիներում *ժամ առնելու* վճիռ, իսկ վանահայր Սարգիսը հաստատել է կայացած իրավավճիռը: Եվ սա այն պատրվակով, որ նվիրատու ամուսինները *յիւրեանց հալալ ընչից ընծայի են տվեալ Ո դահեկան* ՝ պատկառելի մի գումար:

ԺԱՄԱՏՈՒՆ (ՄԵԾ ԳԱՎԻԹ)

259. ԺԱՄԱՏՈՒՆ. հյուսիսային պատին, դրսից, կիսաբոլոր լուսամուտների կամարներին, 8 տող.



Ի ԹՈՒԻՍ ՀԱ[ՅՈՑ]
ՈԼԴ (1185),
ԵՍ՝ ՄԱՐԻԱՄ, ԴՈՒՍՏՐ ԿԻՒՐԻԿԷԻ ԱՐՔԱՅԻ, ՄԵԾ ՅՈՒՍՈՎ ՇԻՆԵՑԻ ՁՏՈՒՆՍ ԱՂԱՒԹԻՑ
Ի ՎԵՐԱՅ ՀԱՆԳՍՏԱՐԱՆԱՑՍ ՄԵՐ ՀԱ–
ՐՔՈՒԵՐ ԻՄՈՅ ՌՈՒՍՈՒՔԱՆԱ ԵՒ ՄԱՒՐ ԻՄՈՅ՝ ԹԱՄԱՐԱՅ ԵՒ ԻՆՁ՝ ՄԱՐԻԱՄՈՒ,
ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ[ԱՆ]Ս ՏՆ ԲԱՐՍՂԻ ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ՈՐ Ե–
Ի ԱՒՍՐՏԵՑԱՒ Ի ՁԵՌՆ ՍՈՐԱ: ԱՐԴ, ՈՐՔ ՄՏԱՆԷՔ ԸՆԴ ԴՐՈՒՆՍ ՍՈՐԱ ԵՒ ԵՐԿՐ–
ՊԱԳԷՔ ՍՐԲՈՅ ՆՇԱՆԻՍ՝ ՅԻՇԵՍՁԻՔ ՅԱՂԱՒԹՍ Ձ–
ՄԵՁ ԵՒ ՁՆԱԽՆԻ ԹԱԳԱՒՈՐ ԱՁԳԱԿԱՆՔՍ ՄԵՐ, ՈՐ ՀԱՆԳՈՒՑ–
ԵԱԼ ԵՆ ԱՌ ԴՐՈՒՆՍ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷԻՍ Ի ՔՍ ՅՍ:

Հրատ. Դրիմեցի, 8. Ջալալյանց. Ա. 65. Բժշկյանց. 77. «Կռունկ», 35, Երզնկյանց. 21. ՎՏ. 36. Դաֆադարյան, Հաղբատ, 157-158:

Ծանոթ. Կ. Դաֆադարյանը կարծում է. «Մարիամը Կիւրիկէ Գ-ի դուստրն է, թեև այս արձանագրությունը գրված է նրա անունից, բայց այդ ժամանակ նա արդեն մեռած էր և թաղված մեծ գավթի ներսում, հենց այս արձանագրության տակ»:

Սակայն առարկելի է այս կարծիքը: Նույն՝ Կյուրիկեի դուստր Մարիամը հանդիպում է նաև նույն գավթի 1200 և 1212 թվականների շինարարա-նվիրատվական արձանագրություններում, ուր նա իրեն անվանում է դուստր Կյուրիկե արքայի, իսկ մայրը՝ Թամար: Այսպիսով, 1185-ը այս շինության (նախասրահի) կառուցման և արձանագրության փորագրման տարեթիվն է, բայց ոչ Մարիամի մահվան: Ցավոք, նրա շիրմաքարը թվագրված չէ: Այս և այլ փաստեր վկայում են, որ Հովհաննես Խաչենցին գավիթ-ժամատունը վերակառուցելու ժամանակ պահպանել է հին շինության որոշ մասերը:

260. ԺԱՄԱՏՈՒՆ. հյուսիսային պատին, նախորդի տակ, 5 տող.



ՇՆՈՐՀԱՒՔ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՅ, ԵՍ՝ ԾԻԹԼԱՍԱՆ, ԾԱՌԱՑ ՍԲ ՆՇԱՆԻՍ, ԵՂ-
ԲԱՒՐՈՐԴԻ ՏՐ ՅՈՎԱՆՆԷՍԻ, ԿԱՑԵԼԼ ԸՆԴ ՀՈՎԱՆԵԼԻ ՍԲ ՆՇԱՆԻՍ, ԶԻՄ ՀՈ–
ԳՈ ԱՐԴԻՒՆՍ Ի ՀԱԼԱԼ ՎԱՍՏԱԿՈՑ ԸՆԾԱԵՑԻ Ի ՍԲ ՆՇԱՆՍ. ԵՒ Ի ՄԻԱԲԱՆՔՍ՝ :ԺԶ:
(16) ԵԶՆ, :ԳՌ: (3000) ՍՊԻՏԱԿ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՏՐ ՅՈ–
ՎԱՆՆԻՍԻ: ԵՊԻՍԿՈՊՈՍՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ՄԵՋ ՊԱՏԱՐԱԳ ՁՅԱՅՏՆՈՒ-
ԹԵԱՆ ՏՆԱՒՐԻՆԵՑԱՒ ԱՒՐՆ ԶԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ՄԵ–
Զ ՊԱՏԱՐԱԳԵԼ: ՄԻՆՉ ՄԵՔ ԿԵՆԴԱՆԻ ԵՆՔ՝ ՄԵՐ ՀԱՒՐՆ՝ ԳԱՐԲԱՆԵԼԻՆ ԵՒ ՄԱՒՐՆ՝
ՑԱՑԱՒՆ, ՅԵՏ ՄԵՐ ԵԼԻՑ՝ Բ (2) ՊԱՏԱՐԱԳ ԻՄ ԵՂԲԱՒՐՆ՝ ՎԱՉԷԻ, :Ա: (1)՝ ՔԱՒԹԱՐԱ,
Բ (2) ԱՂԲԷՐԱԴԵՂԻՆ ՈՒ ՁԱՅՅԼՆ ՄԵՋ ԱՌՆԵՆ՝ ԾԻԹԼԱՍԱՆԻՍ: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀ-
ՆԻՆ ՅԱՅ ԵՒ ԽԱՓԱՆՈՂՔՆ ԴԱՏԻՆ Ի ՏԷ: Ի ԹՎԻՍ ՉԻԷ (1278):

Հրատ. Դրիմեցի, 29-30, Ջալալյանց, Ա, 64, Երզնկյանց, 31, «Արարատ», 1887, 34: Brosset, Discription, 36, ՎՏ, 120, Դաֆթարյան, Հաղբատ, 158-159, Ոսկյան, Գվ, 228-229:

Ծանոթ. Կ. Դաֆթարյանի ուշադրությունը գրավել է այն պարագան, որ նվիրատվությունը հասցեագրվել է ոչ միայն վանքին, այլև միաբաններին: Պատճառը, թերևս, այն է, որ Ծիթլասանը եղել է վանքի միաբան, և այդ մասին արձանագրության մեջ գրում է՝ ***Ես, Ծիթլասան, ծառայ սբ Նշանիս:***

261. ԺԱՄԱՏՈՒՆ. նախորդից ներքև, 6 տող.



ՍԻՐՈՎ ԱՅ ՄԻԱԲԱՆԵՑԱՒ ՍԲ ՈՒԽՏԻՍ ՅԱՂԲԱՏԱ ՍԱԹԷՈՍ

ՔԱՀԱՆԱ ԵՒ ԱՍՈՒՍԻՆ ԻՒՐ ՀԵՋԻԿՆ: ԵՒ ՄԵՔ՝ ՏՐ ՅՈՎԱՆՆԷՍ, ԿԱՄԱԿՑ-
ՈՒԹԵԱՆ ԲԷ ԵՂԲԱՐՑՍ, ՏՎԱՔ ԶՈՍԿԵԱՆՑ ՏԱՒՆԻՆ ԶԱՄԷՆ ԵԿԵՂԵ-
ՑԻՔՍ ՆՈՅԱ ՊԱՏԱՐԱԳԵԼ: ՄԻՆՉ ԿԵՆԴԱՆԻ ԵՆ՝ ԻՒՐԵԱՆՑ ԾՆՈՂԱՑՆ Ա-
ՌՆԵՆ ԵՒ ՅԵՏ ԵԼԻՑ ՆՈՅԱ՝ ԿԵԱՆ ՍԱԹԷՈՍԻ ԵՒ ԿԵԱՆ ՀԵՋԿԱՆԵՆ:
ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ:

Հրատ. Դրիմեցի, 30, Զալալյանց, Ա, 63, Երզնկյանց, 31, 46, 232-233, Դաֆթաղարյան, Հաղբատ, 159:

Ծանոթ. Զոսկեանց և *տաւնին* բառերի մուտ երեք տառաչափ տարածություն դատարկ է: Սա առիթ է տվել մտածելու, որ Զոսկեանց բառը փորագրվել է ավելի ուշ (Կ. Ղ.), և բաց տեղ է մնացել: Հիրավի, երբեմն պատահում է, որ ինչպես տոնի օրերը, այնպես էլ հաստատվող ժամերը աշխատանքների ավարտից հետո են որոշվում և հետո էլ՝ փորագրվում, կամ թե՝ անուշադրության մատնվելով՝ տեղը մնում է բաց (Գառնի, որմնապիակ խաչ): Թվագրվում է ԺԳ դ.:

262. ԺԱՄԱՏՈՒՆ. նախորդի ծախ կողքին, 7 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ, ՓԱՓԱՔՈՂ ԵՂԵՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՍԲ ՈՒԽՏԻՍ ԱՆՂ-
ՐԵԱՍ ՔԱՀԱՆԱ ԵՒ ԱՍՈՒՍԻՆ ԻՒՐ ԹԱՄԹԻ, ԷՏՈՒՆ ԱՐԴԻՒՆՍ ԸՍՏ ԻՒՐ-
ԵԱՆՑ ԿԱՐԻ ԵՒ ՄԵՔ՝ ՏՐ ՅՈՎԱՆԷՍ, ԼՐՄԱՄԲ ԵՂԲԱՐՑՍ, ՍԻՐՈՎ ԸՆԿԱԼԱՔ
ԵՒ ՏՎԱՔ ՆՈՅԱ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ԱՆՂՐԷԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԶԱՄԷՆ
ԵԿԵՂԵՑԻՔՍ: ՈՐՉԱՓ Ի ԿԵՆԴԱՆ ԵՆ՝ ԻՒՐԵԱՆՑ ԾՆՈՂԱՑՆ ԱՌՆԵՆ
ԵՒ ՅԵՏ ՎԱԽՃԱՆԻՆ ԻՒՐԵԱՆՑ՝ ՆՈՅԱ ԱՌՆԵՆ: ԿԱՏԱՐՈՂՔՆ ԱՒՐՀՆ-
ԻՆ ՅԱՅ:

Հրատ. Դրիմեցի, 30, Զալալյանց, Ա, 64, Երզնկյանց, 31-32, Դաֆթաղարյան, Հաղբատ, 160-161:

Ծանոթ. Թվագրվում է ԺԳ դ.:

263. ԺԱՄԱՏՈՒՆ. հյուսիսային պատին, դրսից, 7 տող.



ՄԵԾ ՅՈՒՍՈՎ, ԵՍ՝ ԱՒԱԳ ՍԱՐԳԻՍ. ՄԻԱԲԱՆԵՑԱ
ՍԲ ՆՇԱՆԻՍ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՏՐ ՅՈՎՀԱՆԷՍԻ, ԵՒ ԸՍՏ Ի–
ՄՈՒՄ ԿԱՐԻ ԸՆԾԱԵՑԻ ՍԲ ՆՇԱՆԻՍ Օ (50) ԴԱՀԵԿ–
ԱՆ: ՏՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԸՆԿԱԼԱՆ ԵՒ ԵՏՈՒՆ ՄԵՋ Պ–
ԱՏԱՐԱԳ ՋԵՂԻԱԿԱՆՆ ԿԻՐԱԿԷՆ ԻՄ ՀԱՒՐՆ՝ ԽՈՍ–
ՏՐՈՎԻՆ ԵՒ ԻԱ ԵՂԲԱՒՐՆ՝ ՔԱՐԻԱՒՆ: ԿԱՏԱՐԻՉՔՆ Ա–
ՒՐՀՆԻՆ ՅԱՅ:

Հրատ. Դրիմեցի, 31, Ջալալյանց, Ա, 63, Երզնկյանց, 32, ՎՏ, 231, Դաֆթարյան, Հաղբատ, 161:

Ծանոթ. Ուշագրավ է անվան *Խոստրով* ձևը՝ Խոսրովի փոխարեն: Երևույթն անտարակույս բարբառային է: Բաղածայնի անհարկի կիրառությունը բնորոշ է բարբառներին, օրինակ, Նուկբար՝ փոխարեն Նուբար (Հ. Աճառյան, ՀԱԲ, 4, 89):

264. ԺԱՄԱՏՈՒՆ. արևմտյան պատին, արտաքուստ, 4 տող.



ԿԱՄԱՒՅԵՍԱՀՂՈՒՑԵԼԱՆՔԻ ԱՄՔ ԱՀՊԱՅԱՆԿԱՅԻԴՈՒՌՍ
Ի ԿԱԹՈՂԻԿԷՍԵԵՏՈՒԸՆԾ ԱՍԲ ՆՇԱՆԻՍԸՍ ՀՄՈՒՄԿԱՐՏ ՅՈՎՀԷԱՒ
ՄԻԱԲԱՆՔՍԸՆԿԱԼԱՆԵՒԵՏՈՒՆ ՄԵՋ ՊԱՏԱՐԱԳ ՋՏԱՒՆՆ ՏԻՏՈՍԻ ԱՌԱՔ
ԵԼՈՅՆ՝ Կ

ԿԱՄԱՒ ՅԱՅ ԵՍ՝ ՄԵՂՈՒՑԵԼԱԼ ԱՆԴՐԷԱՍ ՔԱՀԱՆԱՅ, ԱՆԿԱՅ Ի ԴՈՒՌՍ /
Ի ԿԱԹՈՂԻԿԷԻՍ ԵՒ ԵՏՈՒ ԸՆԾԱ ՍԲ ՆՇԱՆԻՍ ԸՍՏ ԻՄՈՒՄ ԿԱՐԻ: ՏՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ
ՄԻԱԲԱՆՔՍ ԸՆԿԱԼԱՆ ԵՒ ԵՏՈՒՆ ՄԵՋ ՊԱՏԱՐԱԳ ՋՏԱՒՆՆ ՏԻՏՈՍԻ ԱՌԱՔ
ԵԼՈՅՆ: ՈՐ Կ...:

Հրատ. Ջալալյանց, Ա, 60, Երզնկյանց, 29, ՎՏ, 231, Դաֆթարյան, Հաղբատ, 162:

Ծանոթ. Արձանագրությունը մնացել է անավարտ, որը կարելի է լրացնել՝ *կատարի՝*

աւրինի ի Տէ՛: Անդրեաս քահանան հավանաբար N 262 արձանագրության անձն է, ուստի վիմագիրը կարող է թվագրվել ԺԳ դ. 60-70-ական թվականներով՝ Յովհաննես առաջնորդի տարիներով:

265. ԺԱՄԱՏՈՒՆ. նույն պատին, նախորդի վրա, 7 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ՝ ՎԱՐԴԱՆ ՏՓԽԵՑԻ, ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԵՄ ՄԻՆԱ,
ՄԵԾ ՅՈՒՍՈՎ ՄԻԱՅԲԱՆԵՑԱՔ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԵՒ ՏՎԱՔ Ը-
ՆԾԱՅ ՍԲ ՆՇԱՆԻՍ ԸՍՏ ՄԵՐՈՒՄ ԿԱՐԻ: ԵՒ ՏԷՐ ՅՈՎԱՆՆԷՍ, ԿԱՄԱ-
ԿՑՈՒԹԵԱՄԲ ԵՂԲԱՐՑՍ, ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ՄԵԶ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ՊԵ-
ՏՐՈՍԻ ԵՒ ԱԲԻՍՈՂՈՄԱ՝ ԶԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ: ՄԵՐ ԿԵՆԴԱՆՈՒ-
ԹԵԱՄԲ՝ ՄԵՐ ԾՆՈՂԱՑՆ ԱՌՆԵՆ ԵՒ ՅԵՏ ՄԵՐ ԵԼԻՑ՝ ՄԵԶ ԿԱՏԱՐՈՂ-
ՔՆ ԱՒՐՀՆԻՆ Ի Տէ: ԱՄԷՆ: Ի ԹՎԻՆ: ՉԺԶ (1267):

Հրատ. Դրիմեցի, 32-33, Զալալյանց, Ա, 60, Երզնկյանց, 29, ՎՏ, 111, 155, Դաֆադարյան, Հաղբատ, 162:

Ծանոթ. Տէր Յովհաննեսը վանքի առաջնորդ է դարձել Համազասպից հետո՝ 1257 թ.: Վերջին անգամ հիշատակվում է 1288 թ.:

266. ԺԱՄԱՏՈՒՆ. նույն պատին, նախորդից վերև, 6 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ՝ ՍԱԹՍ, ԹՈՌՆ ՍՄՊԱՏԱ ԵՒ ՈՐԴԻ ԱՐՏԱՒԱԶԱ, ԵՒ ԱՄ-
ՈՒՍԻՆ ԻՄ ԽՈՐԻՇԱՀ, ՄԵԾ ՅՈՒՍՈՎ ԱՊԱՒԻՆԵՑԱՔ Ի ՍԲ ՈՒԽՏԱ ՀԱՂ-
ԲԱՏ ԵՒ ՏՈՒԱՔ : Հ: (70) ԴԱՀԵԿԱՆ ԸՆԾԱ ՍԲ ՆՇԱՆԻՆ: ԵՒ ՏՐ ՀԱՄԱԶԱՍՊ,
ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ, ԷՏՈՒՆ ՄԵԶ :Զ: (6) ՊԱՏԱՐԱԳ Ի ՄԵԾ ԵԿԵՂԵՑԻՆ, Ի ՏԱՒՆ-
ԻՆ ԿԻՒՐՊԻ: ՈՐՉԱՓ ՄԵՔ ԿԵՆԴԱՆԻ ԵՆՔ՝ :Գ: (3) ԱՐՏԱՒԱԶԱՅ ԵՒ :Գ: (3) ԲԷԳ-
ԻՆ, ԵՒ ԵՏ ՄԵՐ՝ Դ (4) ԻՆՁ ԵՒ Բ (2) ԻՄ ԱՄՈՒՍՆՈՅՆ, ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ ԴԱՏԻ ՅԱՅ:

Հրատ. Զալալյանց, Ա, 60, Երզնկյանց, 29, ՎՏ, 253, Կ. Դաֆադարյան, Հաղբատ, 163-164:

Ծանոթ. Սաթի մասին սա միակ վկայությունն է: Հիմք ունենալով Երզնկյանցի անճիշտ վկայությունը, Հ. Աճառյանը Սաթին ներկայացրել է իբրև որդի Համազասպի:

Անվան ծագումը Հ. Աճառյանն արտաբերում է Սադունից: Թեև իր բարբառային արտասանություններում Սադունն ունի Սաթուն ձևը, սակայն այն անվան հետ անվերապահորեն կապելու համար հիմք տալ այդ չի կարող: Անունն իր բովանդակությամբ առավել անմիջականորեն կապված է սաթ քարի անվան հետ (մուգ. սև. թուխ):

Համազասպ առաջնորդի անվան առկայությունը թույլ է տալիս արձանագրությունը թվագրել մինչ 1257 թվականը: Սաթը թաղված է նույն գավթում:

267. ԺԱՄԱՏՈՒՆ. նույն պատի ստորին մասում, արտաքուստ, 8 տող.



ՅԱՋԴՄԱՆԷ ՍՐԲՈ ՋԱՒՐՈՒԹԵ[Ա]Ն ՀԱՒՐ ԵՒ ՈՐԴՈ ԵՒ ՍԲ ՀՈԳՈՅՆ: ՅԱՌԱՋՆՈ–
ՐԴՈՒԹ[ԵԱ]Ն ՏՐ ՅՈՀ[ԱՆՆԷՍ]Ի, ՄԵՔ՝ ՏԷՐ ՏՈՎՊՍ, ԴԵՂՍ ԵՒ ՎԱՆԱԿԱՆՍ ԵՒ ԱՄՈՒ-
ՍԻՆ ԻՒՐ ԽՈՐԻՇԱՀ, ԵՒ
ՋԱՒԱԿՔ ԻՒՐԵԱՆՑ՝ ՍԱՐԿԱՒԱԳ, ԴԱՒԻԹ, ՍԱՐԳԻՍ, ԱԲՐԱՀԱՄ, ՊԱՊՆ, ԱՒԱԳՆ, ՄԵԾ
ՅՈՒՍՈՎ ԿՐԿԻՆ ՄԻԱ–
ԲԱՆԵՑԱՔ ՄԵՐՍ ԼՈՒՍՈ ԵՒ Ա[ՍՏՈՒԱ]ԾԸՆԿԱԼ ՍԲ ՆՇԱՆԻՍ ԵՒ ԸՍՏ ՅՈՒՍՈ ՄԵՐ ԵՒ
ԸՍՏ ԿԱՐԻ ԸՆԾԱԵՑ–
ԱՔ ՆՎԷՐՍ՝ :Գ: (3) ԳԻՐՔ, :Ծ: (50)ԴԱՀԵԿԱՆ, Գ (3) ԵՋՆ, :Ա: (1) ԿՈՎ: ՏՐ ՅՈՀ[ԱՆՆԷՍ]
ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՄԻՈՎ ԸՆ–
ԿԱԼԱՆ ԵՒ ԷՏՈՒՆ ՄԵՋ ՊԱՏԱՐԱԳ ՋՏԱՒՆ ՆԻԿՈՂԱՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝ ՋԱՄԵՆԱՅՆ
ԵԿԵՂԵՑԻՔՍ ԵՒ ԳԵՐԵՋՄԱՆԱՏԵՂԻ ՍԲ ԳԱՒԹԻՍ; ՈՐՋԱՓ ՄԵՔ ԿԵՆԴԱՆԻ ԵՆՔ՝ ՄԵՐ
ԾՆՈՂԱՑՆ Ա–
ՌՆԵՆ ՋՊԱՏԱՐԱԳՆ՝ ՄԱԹՈՒՆԻՆ; ԱԽՊԷՐԱՆՆՈ ԵՒ ԽՈՐԱՍՈՒԷ, ԵՒ ՅԵՏ ՄԵՐ ԵԼԻՑՆ՝
ՄԵՋ Յ[ԱՌՆԵՆ]:

Հրատ. Ջալալյանց, Ա, 61. Երզնկյանց, 30, ՎՏ, 235-36. Դաֆթարյան, Հաղբատ, 164-165:

Ծանոթ. Արձանագրության բազմաթիվ անունների մեջ տարակարծության տեղիք է տվել *Սարկաւագը:* Նախորդ հրատարակողներն այն դիտել են իբր Դավթի հոգևոր կոչում, մինչդեռ Կ. Դաֆթարյանն իրավացիորեն այն համարում է հատուկ անուն, ինչպես Վանական անունն է: Հակառակը լինելու դեպքում՝ նախ անունը կգրվեր և նոր կոչումը՝ Դաւիթ սարկավագ:

Ութերորդ տողում հանդես եկող *Մկայերանոն* անվան ուղիղ ձևը Ս. Ավագյանը համարում է *Եղբարանուն* (ՎԱԲ, 20-22): Ինչ մնում է վերջին տողի 3 գրի ավելորդ լինելու դիտողությանը, ապա պետք է կարծել՝ արձանագրությունը չի ավարտվել և այստեղ պետք է լիներ հավանաբար՝ *յաղաւթս յիշեցէք* բառերը: Հազվադեպ ու բացառիկ մենաշնորհի պետք է համարել հատկապես այն, որ նվերների թվում առաջնությունը տրվել է երեք գրքերին (հավանաբար ոսկեկազմ Ավետարան կամ նման թանկագին գործ), և ապա՝ սուրբ գավթում գերեզմանատեղ ստանալու իրավունքը, թեև հայտնի չէ, այնուամենայնիվ, նրանք թաղվե՞լ են ժամատանը, թե՞ ոչ:

Որոշ թերակարծություն ունենք երկրորդ տողի ՄԵՔ բառին հաջորդող հատվածի կապակցությամբ: Հեղինակները այն վերծանել են ՏԷՐ ՏՈՎՊԱՍ: Գրչագրում, առաջին հայացքից նաև լուսանկարում թվում է թե այդպես է: Սակայն, ուշադրությամբ զննելով լուսանկարները (սույն պրակի և «Հաղբատ» գրքի), ՏՐ ՈՎՊ տառախմբերի վրա առկա է պատիվ նշանը, իսկ Ս տառի աջ ուղղահայացի վերին մասում կցագրված է Տ: Միևնույն ժամանակ, ՄԵՔ բառից հետո կցագիրը ՏԷՐ վերծանելը կարծում ենք ոչ հիմնավորված, քանի որ այդ բառը հիմնականում գրվել է ՏՐ հապավմամբ, պատիվ նշանով: Ըստ այսմ առաջարկում ենք սույն հատվածի նոր վերծանություն, որը, չնայած արտահայտչաձևով փոքր-ինչ անսովոր է, սակայն տրամաբանության սահմաններում է: Առաջին կցագիրը փորձում ենք կարդալ ԱԲ+Ր, որը դիտում ենք Աբրահամ անձնանվան հապավված ձև: Այնուհետև՝ ՏՐ=ՏԷՐ, որին հաջորդում է ՎՊՏՍ պատվանշանով հապավումը, ինչը կարելի է բացել ՎԱՐԴԱՊԵՏՍ: Ստացվում է ԱԲՐԱՀԱՄ Տ[Է]Ր Վ[ԱՐԴԱ]Պ[Ե]Տ: Առաջարկված նոր վերծանության համար լրացուցիչ կռվաններ կարող են ծառայել նույն բնագրում Տ[Է]Ր բառի ևս երկու վկայություն՝ գրված ՏՐ (պատվանշանով), ՏՈՎՊ անձնանվան անսովորությունն ու եզակիությունը, նաև Հաղբատի վանական միաբանությունում (XIII դ.) Աբրահամ վարդապետի գոյության փաստը (արձ. 398) (խմբ.):

268. ԺԱՄԱՏՈՒՆ. Նախորդի հարավային կողմում, արտաքուստ, 6 տող.



ՅՈՒՍՈՎՆ ԱՅ ՄԻԱԲԱՆԵՑԱՒ ԳԵՐԳ ՍԲ ՆՇԱՆԻՍ:
ՄԵՔ՝ ՏՐ ՅՈՎԱՆՆԷՍ, ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ, ՍԱՀՄԱՆԵՑԱՔ
ՍԲ Ս[ԱՐ]ԳՍԻՆ ԲԱՐԷԿԵՆԴԱՆԻՆ ԶՇԱԲԱԹՆ ԱՒՈՒՐՆ
ԶՊԱՏԱՐԱԳՆ ԳԵՐԳԱՅ ԱՐՆԵՆ ԵՒ ԻՒՐ ՀԱՒՐՆ՝
Ս[ԱՐ]Գ[Ս]Ի[Ն] ԵՒ ՄԱՒՐՆ՝ ԹՈՒԽԹԱՆԳԻՆ: ԿԱ[Տ]ԱՐԻ[Զ]ՔՆ
ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ:

Հրատ. Ջալալյանց, Ա. 62, Երզնկյանց, 31, ՎՏ, 236, Դաֆթարյան, Հաղբատ, 165:

Ծանոթ. Գերգ ձևը Գեորգի բարբառայինն է: Փակագծերի մեջ առնված գրերը ոչնչացվել են՝ «հետագայում փորագրված խաչի պատճառով» (Կ. Ղ.): Թվագրվում է ԺԳ դ.:

269. ԺԱՄԱՏՈՒՆ. նույն պատին, նախորդից վերև, 6 տող.



ԱՋԴ ՄԱԲՆԱՅ։ԿՈՉԵՑԱԻ ԼՈՒՍԵՂԵՆՆԻՄ
ԱԲԱՆՈՒԹԻ[ՒՆ] ԵԿԵՂԵՑՈՅՍ ՀԱՂԲԱՏԱ: ԵՒ ՄԵՔ՝
ՏՐ ՅՈՎԱՆՆԷՍ, ԼՐՄԱՄԲ ԵՂԲԱՐՑՍ, ՏՈՒԱՔ
ՆՄԱ :Դ: (4) ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻՆ ԵԳՆԱՏԻՈՍԻ ՀԱ–
ՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ Բ (2)՝ ԳՐԱՊԵՏԻՆ: ԿԱՏԱՐԻՉ–
ՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ: ԱՄԷՆ:

Հրատ. Զալալյանց, Ա, 62, Երզնկյանց, 30, ՎՏ, 36, Ղաֆադարյան, Հաղբատ, 165-166:

Ծանոթ. Իգնատիոս հայրապետի անունը գրված է *Եգնատիոս*, իսկ նախավերջին տողի *Բ՝ գրապետին* արտահայտությունից չի պարզվում՝ երկու պատարագ էլ տրվել է Կարապետի՞ (Գրապետ) տոնին, թե՞ այն վերաբերում է Հաղբատի վանքի հարուստ գրապահոցի (մատենադարանի) վարիչ-գրադարանապետին:

270. ԺԱՄԱՏՈՒՆ. արևմտյան պատին, արտաքուստ, գլխավոր մուտքի աջ կողմում, 11 տող.



ԻՌԿԷՀՁ
+ԿԱՄԱՆ ԱՅ ԵՍ՝ ՆՈՒԱՍՏ ՃԱՌ ԱՔԻ ՍԱՐԿԱՒԱԳ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՐԴ
Ի ՎՐԹԱՆԻՍԻ ԳԱՌՆԵՑՈՅ ԱՊԱՒԻՆԵՑԱ Ի ՆԲ ՆՇԱՆՍ ՀԱՂԲԱՏԱՅ
ԵՒԿԱՁԵՑԻԱՁՄԱՐԾԱԹ ԻՈԱՒԷԶԱԾ ԵՒ Բ ՆԱԿՈՐՏ ՆԱՍ Ի
ՃԵՒԱՏԼԱՍՎԱՌՎԱՍՆ ՓՐԿՈՒԹԵՀՈԳՈՒՄՈԵՒ ԷՏՈՒԻ ՍԲՈՒԽՏՍ
ԵՒԷՊԻՍԿՈՊՈՍՍՏՅՈՎԱՆԷՍ ՀԱՆԴԵՐՁՎԱԾ ԱՊԵՏ ԱՒՔՍ ԵՒՄԻ
ԱԲԱՆԱՔՍԸՆԿԱԼԱՆԵՒՍԱՀՄԱՆԵՑԻՆԻՆՁՅ ԱՄԵՆԱՅ ՆԱՅՃՊԱՏ
ՄԱԳՅԵՏ։ԾԱՊԱՏԻՆ։Բ։ԿԻՐԱԿԷԻՆՐՁԱՓԵՍ ԿԵՆԴԱՒԻԵԼՄԾՆՈՂ
ԱԾՆԱՌՆԵՆԲ ՎԱԹ ԱՆԻ։Բ։ԱԹ ԱՆԻՍԻ։Բ։Ե ԶԷԿԻԵԷ։Բ։ՓԿԻՄԱՒՐՆԲ։Մ
ԻՌԱՒՐՆ ԵՒ ԵՏՐԻԱԷ ԷՑԻՆՁԱՌԵՆ ԿԱՄԱՐԻՉՔՆԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ ԵՒ ԽԱՓ
ԱՆՈՂՔՆԴԱՄԻՆԽՄԷ

Ի ԹՎԻ[Ն] :ՉԺ: (1261)

ԿԱՄԱՒՆ ԱՅ, ԵՍ՝ ՆՈՒԱՍՏ ՃԱՌԱ ՔԻ ՍԱՐԿԱՒԱԳ ՎԱՃԱՌԱԿԱՆ, ՈՐԴ–
Ի ՎՐԹԱՆԻՍԻ ԳԱՌՆԵՑՈՅ, ԱՊԱՒԻՆԵՑԱ Ի ՆԲ ՆՇԱՆՍ ՀԱՂԲԱՏԱՅ,

ԵՒ ԿԱՁՄԵՑԻ ԽԱՉ ՄԻ ԱՐԾԱԹԻ ՈՍԿԵՁԱՒՇ, ԵՒ Բ̄ (2)ԵԱՓՈՐՏ, ԵԱՍԻ-
Ն, ԵՒ ԱՏԼԱՍ ՎԱՌ, ՎԱՍՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀՈԳՈ ԻՍՈ, ԵՒ ԷՏՈՒ Ի ՄԲ̄ ՈՒԽՏՍ:
ԵՒ ԷՊԻՍԿՈՊՈՍ ՏՐ̄ ՅՈՎԱՆԷՍ, ՅԱՆԳԵՐՁ ՎԱՐԴԱՊԵՏԱՒՔ
ՍԻՍԲԱԼՆԵԱՒՔ ԸՆԿԱԼԱՆ ԵՒ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ԻՆՉ ՅԱՄԵՆԱՅՆ ԱՄԻ Ժ̄ (10) ՊԱՏ-
ԱՐԱԳ ՅԵՏ : Ծ̄ : (50) ԱԿԱՄՏԻՆ : Բ̄ : (2) ԿԻՐԱԿԷԻՆ: ՈՐՉԱՓ ԵՍ ԿԵՆԴԱՆԻ ԵՄ՝ ԻՄ ՇՆՈՂ-
ԱՑՆ ԱՌՆԵՆ՝ Բ̄(2) ՎՐԹԱՆԻՍԻ, Բ̄(2) ԱԹԱՆԱՍԻ, Բ̄(2) ԵՁԵԿԻԵԼԻ, Բ̄(2) ՏԻԿԻՆՄԱՒՐՆ, Բ̄(2)
ԻՍ ՄԱՒՐՆ, ԵՒ, ՅԵՏ ԻՍ ԵԼԻՑ՝ ԻՆՉ ԱՌՆԵՆ: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՅԼԻՆ ՅԱՅ̄ ԵՒ ԽԱՓ-
ԱՆՈՂՔՆ ՊԱՏԻՆ Ի ՏԷ̄ :

Գրատ. Գրիմեցի, 32, Զալալյանց, Ա, 64, Երզնկյանց, 30, Վ6, 103, Պաֆեղարյան, Հաղբատ, 166-167:

Ծանոթ. Ութերորդ տողի կետերի մեջ առնված և դուր նշան կրող : Ծ̃ : տառը Կ.Պաֆեղարյանը թվարժեք չի դիտել և բառը կարդացել է ծակամտին՝ համարելով, որ Ծ գրի «կետերը և պատիվը բոլորովին ավելորդ են, որովհետև այդտեղ թվանշան չկա, այլ պարզապես *ծակամուտ* բառն է, որ ակնարկում է Գրիգոր Լուսավորչի՝ Խոր վիրապ մտնելը»:

Սակայն, ինչպես ճշտել է Ս. Ավագյանը, այստեղ խոսվում է Յիսնակամտի տոնի մասին, որի՝ ծննդյան տոներին նախորդող հիսունօրյակի Բ՝ երկրորդ կիրակին ամեն տարի 10 պատարագ են սահմանել (Ս. Ավագյան, ՎԱԲ, 224-226): Այս տոնի մասին Կյուլեսերյանը գրում է. «Յիսնակ ըսուած է այն յիսուն օրերուն, որ նոյեմբերի 18-ին մինչև հունվար 6-ը կը հասնին: Յիսնակամուտ կը նշանակէ յիսնակի պահուց մտնելու օրը, որ է յիսնակի բարեկենդանին գիշերը» (Ժողովրդեան տօնացոյց, Կ. Պոլիս, 1901, էջ 69):

Վիմագրում ուշադրության են արժանի նվիրաբերված առարկաները՝ նափորտ- «վերարկու, փիլոն, շուրջառ» (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Եր., 1977, էջ 437), նասիճ-«հիւսկէն, հիւսուած, գործուած» (նույն տեղը, էջ 429), ատլաս վառ – «մի տեսակ թանկագին կտորեղէն» (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Եր., 1971, էջ 288):

Ծանոթագրության երկրորդ և երրորդ պարբերությունները, որոնք կային նախորդ կազմողների մոտ, Ս. Սաղումյանը նպատակահարմար չի գտել զետեղել այստեղ, սակայն դրանց առկայությունը գտնում ենք անհրաժեշտ (խմբ.):

271. ԺԱՄՍՏՈՒՆ. նախորդից վերև, նույն պատին, 8 տող.



ԿՍՄԱՒՆ ԱՅ̄ ԵՍ՝ ՇՆԱՀԱՒՈՐ ՏՓԽԵՑԻ, ՈՐԴԻ ԵՂԻԱԶԱՐԱ, ԱՄՈՒՍՆԱՒ ԻՄՈՎ

ՐՈՒՍՈՒԴԱՆԱՒ ԵՒ ՈՐԴՈՎՔ ԻՄՈՎՔ ԴԱՒԹԻՒ ԵՒ ՍԱՐԳՍԻՒ, ՄԵԾ ՅՈՒ-
ՍՈՎ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՀԱՂԲԱՏ ՍԲ ՆՇԱՆԻՍ ԵՒ ՏՎԱՔ Ճ (100) ԴԱՀԵԿԱՆ
Ի ՇԻՆՈՒԹԻ[ՒՆ] ԺԱՄԱՏԱՆՆ, ԵՒ ՏՐ ՀԱՄԱՁԱՍՊ ԵՒ ԱՅԼ ՄԻԱԲԱՆՔՍ ԸՆԿԱԼ-
ԱՆ ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ՄԵՋ ՊԱՏԱՐԱԳ Ժ (10) ՅԻՆԱՆՑՆ ՅՈՎԱՆՆՈՒ
ՏԱՒՆԻՆ, Բ (2) ՇՆԱՀԱՒՈՐԻՆ, Բ (2) ՐՈՒՍՈՒԴԱՆԱ, Բ (2) ԹԱԳՈՒՀԷ, Բ (2)
ՎԱՐԴՈՒՏԻՆ, Ա (1) ՍԱՐԳՍԻ, Ա (1) ԴԱՒԹԻ: ԿԱՏԱՐԻՉ-
ՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ: ԱՄԷՆ: Թ[ՈՒ Ի[Ն] ՉԲ (1253):

Հրատ. Դրիմեցի, 32, Ջալալյանց, Ա, 60-61, Երզնկյանց, 29-30, ՎՏ, 98, Ղաֆադարյան, Հաղբատ, 168:

Ծանոթ. Ուշագրավ է *Յինանցն Յովաննու տաւնին:* «Յինունք – (սեռ, նանց) Զատկից մինչև Հոգեգալուստ եղած յիսուն օրուայ միջոցը» (Հ. Աճառյան, ՀԱԲ, Գ, 398): Ասել է՝ տոնը սահմանվել է զատկից մինչև հոգեգալուստ ընկած հիսուն օրերի *Յովհաննու տաւնին,* Մկրտության և ջրօրհնեքի օրը, հունվարի 6-ին:

Ի շինութիւն ժամատանն, անշուշտ, վերաբերում է այս դեպքում նորոգությանը, իսկ *Ճ դահեկանի* դիմաց ստացած Ժ (10) պատարագաժամն էլ անսովոր է, քանի որ մեկ պատարագաժամն արժեր մոտավորապես 20 դահեկան, ուստի պետք է տրվեր Մ-200 դահեկան, կամ Ճ-100-ի դիմաց Ե-5 պատարագ:

272. ԺԱՄԱՏՈՒՆ. արևմտյան մուտքի ճակատակալ քարի վրա, 19 տող.



ԿԱՄԱՒՔ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹ[ԵԱՄ]ԲՆ ԱՅ, ՀԱՒՐ ՀՁԱՒՐԻ ԵՒ ՄԻԱՇՆԻ ԲԱՆԻՆ, ԵՒ ԱՄԵՆԱ-
Ս[ՈՒՐ]Բ ՀՈԳՈՅՆ, ԱՅՍ ԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐԵՑԱՒ ԿՏԱԿ ՄՇՏԸՆՁԵՆԱՒՈՐ ՅԱՄՍ
ԱՒՇԵԼՈՅ ԱՅ
ԹԱԳԱՒՈՐԱՑ Թ[Ա]ԳԱՒՈՐԻՆ ԳԵՈՐԳԷ, ՈՐԴՈՅ ՄԵԾ Թ[Ա]ԳԱՒՈՐԻՆ ԹԱՄԱՐԻՆ, ՅՈՐՈՅ
ԺԱՄԱՆԱԿՍ ԵՏ ԱՇ Ի ՁԵՌՍ Բ (2) ՀԱՐԱՁԱՏԱՑՍ ՝ՁԱՔԱՐԻՒ ԵՒ
ԻՒԱՆԵԻ ՁՍԵՓԱԿԱՆ ԴՂԵԱԿՆ ՄԵՐ Ձ[ԱՆ]:

ԲԵՐԴ, ՁՇԻՆԵԱԼՆ Ի ՆԱԽՆԵԱՑ ՄԵՐ[Ո]Ց ԵՒ ՁԱՅԼ ԲԱՁՈՒՄ ԱՄՐՈՑՍ: ԱՐԴ, ԵՍ՝ ՄԱՆ-
ՏԱՏՈՐԹ[Ա]Ի ԽՍՈՒՑԵԱ, ԱՄԻՐԱՊԱՍԱԼԱՐ, ՇԱՀԱՆՇԱՀ ՁԱՔԱՐԻԱ, ՈՐԴԻ ԲԱՐԵ-
ՊԱՇՏ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱ-
ՆԻՆ ՍԱՐԳԱՒ, ԷՏՈՒ Ի ՍԲ ՈՒԽՏԱ ՀԱՂԲԱՏ-
Ա ԳԵՂԵՐՆ, ՈՐ ՅԱՇՈՅՔ՝ ՀԱԼԱԼԱՇԵՆ ԵՒ
Զ[Ա]ՆԽԱ[Յ]: ԵՒ ԶԻ ԱՅՍ ԳԵՂԵՐՍ ՀԵՌԻ ԷԻՆ Ի ՀԱՂԲԱՏԱ, ՓՈԽԵՑԻ
ԵՒ ԷՏՈՒ ՀԱՅՐԵՆԻՔ ԴԱՒԹԻ, ՈՐՊՈ ՇՈԹՈԿԱ, ԵՒ ԱՌԻ Բ (2) ԳԵՂԻՆ ՓՈԽԱՆ ԶՀ-
ԱՂԲ ՀԱՅՐԵՆԻՔ ԵՒ ԸՆՃԱ ՍԲ ՆՇԱԼԻՆ ՀԱՂԲԱՏԱ՝ ԱՄԵՆԱՅՆ ՍԱՀՄԱՆԱՒՔ, ՈՆՑ
ԲՆԱԿ-
ԱՆ ԵԼԵԱԼ Է՝ ՀՈՂՈՎ ԵՒ ՋՐՈՎ, ԽՈՏԱՍԱՐԳԵՐՈՎ, ՄԱՅՐԻՒՔ ԵՒ ՁԱՂԱՑՈՎՔ, ԳՈՄԱԴ-
ՐԻՒ ԵՒ ԼԵՐԱՄԲ, ԵՒ ԴԱՇՏՈՎ՝ Վ[ԱՍ]Ն ՅԵՐԿԱՐ ԿԵՆՂԱՆՈՒԹԵ[ԱՆ] Թ[Ա]ԳԱՒՈՐԻՆ
ԵՒ ԱՐԵՎՇԱՏՈՒԹԵ[ԱՆ]
ՈՐՊՈ ԻՄՈ ՇԱՀՆՇԱՀԻ, ԵՒ ԵՂԲԱՒՐ ԻՄՈ՝ ԻՒԱՆԷԻ, ԵՒ ՈՐՊՈ ԻՒՐՈ՝ ԱՒԱԳԻՆ, ԵՒ ՅԻ
ՇԱՏԱԿ ՄԵՁ ԵՒ ՇՆՈՂ-
ԱՑ ՄԵՐՈՑ: ԵՒ Ի ԱՅՆ ԳԵՂ ԱՁԱՏ ՅԱՄԵՆԱՅՆ ՀԱՐԿԷ՝ Ի ՊԱՏՐՈՆԱՑ, Ի ՅԵՌՆԱՒՈՐԱՑ,
Ի ԳՈ[Ի]ԴԱՒԱԳԱՑ:
ԵՒ ԵԴԻ ԼՈՒԾ Ի ՎԵՐԱ ՍՈՑԱ ՁԱՅՆ ՈՐ Ի ՄԵԾ ԵԿԵՂԵՑԻՆ ՁԱՒԱԳ ԽՈՐԱՆԻՆ ՊԱՏԱ-
ՐԱԳՆ ԱՆԽԱՓԱՆ ՅԻՄ՝
ՁԱՔԱՐԻԱՒ ԱՆՈՒՆ ՍԱՏՈՒՑԱՆԵՆ ՅԱՅՍՄ ՀԵՏԷ, ՈՐ ԹԻՒ ՀԱ[Յ]ՈՑՍ Է ՈԾԹ (1210),
ՄԻՆՉ Ի ԳԱԼՈՒՍՏՆ ՔԻ:
ԷԹԷ ՀԱԿԱՌԱԿԻ ՈՔ ԵՒ ՁՄԵՐ ՅԻՇԱՏԱԿՍ ԽԱՓԱՆԵԼ ՁԱՆԱ, ՅԻՄՈՑ ԿԱՄ ՅԱՒՏԱՐԱՑ,
ՄԵԾ ԿԱՄ ՓՈՔՐ,
Ի ՎՐԱՑ ԿԱՄ Ի ՀԱ[Յ]ՈՑ, ԼԱՒՈՒՈՒ ՏԷՐԱՆՑ, ՅԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, Ի ՔԱՀԱՆԱՒՑ ԿԱՄ
ՅԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՑ,
ԳՆԷ ԿԱՄ ՁՀԱՂԲԱՅ ԵՏ ԱՌՈՒ ԵՒ ԶԻՄ ՊԱՏԱՐԱԳՆ ԽԱՓԱՆԷ՝ ՆԶՈՎԻ ՅԱՄԵՆԱԿԱԼ
ԲԵՐԱՆԷՆ ԱՅ ԵՒ ԱՒԱՆԴՈՂ ՀՈԳՈ ՆՈՐ-
Ա ՍԱՏԱՆ[Ա] ԵՂԻՑԻՆ:

Հրատ. Ղրիմեցի, 6-7, Ջալալյանց, Ա, 58-59, Brosset, Description, 6, Երզնկյանց, 27-28, «Արարատ», 1886, 525, ՎՏ, 50-51, Դաֆթարյան, Հաղբատ, 168-169, Ոսկյան, Գվ, 215-216:

Ծանոթ. Հայկական արձանագրություններում ընդարձակ և կարևոր տարեգրություններ շատ կան (Անի, Աշտարակ, Նորավանք, Նոր Վարագավանք և այլն), սակայն այս մեկը տարբերվում է անձնական-տոհմագրական զեղումներով, կյանքի անցած ուղու վերհուշով, կայացված վճռի՝ *կտակ մշտընջենաւոր* անխախտելիության պատգամով: Զաքարէն, ասես կանխազգալով վախճանի մոտ լինելը, հանդես է գալիս իր ողջ շուքով՝ *մանտատորթախուցէ, ամիրսպասալար, շահանշահ* տիտղոսներով՝ իբրև արքունի պետական գործիչ, զորքերի գլխավոր հրամանատար-սպարապետ, ինքնիշխան կառավարիչ, արքա (շահնշահ) տիտղոսներով: Հզոր և անկասելի իրավունքներով օժտված Զաքարեն անգամ գործին չի առնչում (ինչպես ընդունված կարգն էր) վանքի

առաջնորդին (որն այդ ժամանակ նորակնունք Հովհաննես Խաչենցին էր) և միաբանությանը՝ չանսալով նրանց համամտությանը. ինքն է սահմանում նվիրատվությունների դիմաց հատուցման վճիռը՝ մեծ եկեղեցու (Ս. Նշանի) ավագ խորանում 1210 թ. սկսած *մինչ ի գալուստն Քրիստոսի* պատարագ մատուցելու նպատակով՝ *եդի լուծ ի վերա սոցա:*

Արտոնագիր-հրամանագրի 1-ին տողի *Միածնի բանին* իմաստավորում է Մարիամի որդուն՝ Հիսուսին՝ Հովհաննեսի Ավետարանի բնաբանի համառոտմամբ – *Սկզբումն էր Բանը. եւ Բանն Աստուծոյ մոտ էր. եւ Բանն Աստուած էր:*

Կ. Ղաֆադարյանն իրեն հատուկ բծախնդրությամբ ուղղել-լրացրել է նախորդ հրատարակիչների բազմաթիվ սխալները, անճշտությունները, բացթողումները:

Յոթերորդ տողի տեղանունը նա վերականգնել է «Քոթուկի» մեջ հիշատակված տեղանունների հիման վրա *Վաշխ* (որտեղ կա զՎաշխ և զՎաշխաց): Այս դեպքում ճիշտը *Վաշխացն* է, քանի որ բնագրում պահպանվում է բառիս երկրորդ Ա-ն:

Անշուշտ, կարևոր է 13-րդ տողի հրահանգը, ըստ որի վանքիս նվիրված գյուղն ազատվում է *յամենայն հարկէ՝ ի պատրոնաց, ի ծեռնաւորաց, ի գուղաւագաց:* Նախ, որ հստակ է պաշտոնյաների հերթագայության սանդղակը՝ վերևում կանգնած է պատրոնը (Զաքարյանները), ապա գալիս է հարկահավաք-ծեռնավորը և ապա՝ նրանից ստորադաս գյուղավագը: *Գիւղաւագաց,* Կ. Ղաֆադարյանի ասելով, «գյուղի ավագներին տրվող հարկի տեղական անունն է»: Մինչդեռ այստեղ պարզեպարզ խոսքը վերաբերում է պաշտոնատար անձին՝ գեղջավագին, որի օգտին, սովորաբար, հարկ էր հավաքվում ենթակա գյուղերից:

18-րդ տողի *զՀաղբայ ետ առու* կապակցությունը վերծանության մեջ տրված է *զՀաղբ[ա](ն) յետ առու,* իսկ ծանոթագրության մեջ առաջարկել այն կարդալ «զՀաղբն ետ առ(ն)ու», քանի որ «Փորագրիչը սխալմամբ *Հաղբն* բառի *ն* գիրը *ա* է քանդակել»: Քարի վրա անաղարտ է հատվածը, և այն կարելի է կարդալ միայն *զՀաղբայ ետ առու:*

273. ԺԱՄԱՏՈՒՆ. արևմտյան մուտքի կամարածև շրջանակին, 6 տող (ԺԳ դ.).

ԿԱՄԱՒՔ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ՝ ՀԱՒՐ ԵՒ ՈՐԴՈ ԵՒ ՀՈԳՈՅՆ ՍՐԲՈ, ԵՍ՝ ՄԽԱՐԳՐՃԵԼ,
ՈՐԴԻ ՇԱՀԱՆՇԱՀԻ, ՈՐԴՈ ՄԵԾԻՆ ԶԱՔԱՐԻ, ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ՄԵՐ ՎԱՆԷՆԻ,

ԴՈՒՍՏՐ ԱԹԱԲԱԿ ՍԱԹՈՒԵԻՆ, ԵՒ ՄԵՔ, ԸՍՏ ՆԱԽՆԵԱՑՆ ՄԵՐՈՑ,

ՍԻԱԲԱՆԵՑԱՔ ԵՒ ՏՎԱՔ ՅԱՒԱՆԴ ԱՆՑ[ՈՂԻԿ] ... ՌՇ (1500) ՍՊԻՏԱԿ ՄԲ ՆՇԱՆԻՍ ՄՈՍԱԳԻՆ ՅԱՄԷՆ ՏԱՐԻ, ԵՒ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՆԱՓՈՐՏ, ՄԻՆ ԿԱՆԹԵՂ

ԱՐՇԱԹԻՒՔ Վ[ԱՍ]Ն ԱՐԵՒՇԱՏՈՒԹ[ԵԱ]Ն ԻՒԱՆԷԻ՝ ԵՂԲԱՒՐ ԻՄՈ ԵՒ ՈՐԴՈՑ ՄԵՐՈՑ [ԵՒ] ՄԵՋ: ԵՒ ՄԵՐ ԽՆԴԻՐ ԱՅՍ Է Յ[Ե]ՊԻՍԿ[ՈՊՈ]Ս[Է] ԵՒ ՍԻԱԲԱՆԻՑՍ, ՈՐ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ ՇԱԲԱԹՆ ԱՒՐՆ ԵՒ ԿԻՐԱԿԻՆ ՆՈՅԱ ԱՌՆԵՆ, ԿԻՐԱԿԷԻՆ ԺԱՄՆ ԻՆՁ ԱՌՆԵՆ ԵՒ ՎԱՆԵՆԷ: ԿԱՏԱՐ-

ՈՂՔՆ ԱՒՐՅԵԻՆ ԱՅ
ԵՒ Ղ[Ա]ՓԱՆՈ-
ՂՔՆ ՂԱՏԻՆ:
ՔՍ ԱՕ:

Հրատ. Ղրիմեցի, 31, Զալալյանց, Ա, 59, Brosset, Description, 31, Brosset, Etudes, 618, Երզնկյանց, 28-29, «Արարատ», 1886, 526, ՎՏ, 151, Դաֆթարյան, Հաղբատ, 171, Ոսկյան, Գվ, 306-607:

Ծանոթ. Առաջին տողի ՌՇ (1500)-ից առաջ մոտ 9 տառի տարածություն հողմահարված է, և եթե նկատի առնենք նաև, որ կապգրերը չափազանց շատ են, ուստի հատվածի վերականգնումը միշտ կմնա տարակուսելի, ինչից և խուսափում ենք:

Նույն տողում հանդես եկող նվիրատուն իրեն համարում է Շահնշահի որդի Մխարգրձել: Ալիշանի կազմած տոհմածառում նշված է. «Զաքարե Դ սպասալար Մխարկրցել կին Վանանէ, դուստր Աթաբեկ Սադունի» (Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 175): Սակայն Զաքարե IV սպասալար հայտնի չէ գիտությանը և ոչ մի կերպ արդարացված չէ Մխարգրձելու նույնացումը Զաքարեի հետ: Հայտնի է, որ Շահնշահը բազմազավակ էր, նրա ավագ որդին կրում էր իր հայրանունը՝ Զաքարէ, մնացածներն էին Ավագը, Սարգիսը, Արտաշիրը և Իվանեն: 1255 թ. Շահնշահի մոտ՝ Անիում հյուրընկալվող ֆրանսիացի ճանապարհորդ Ռուբրուկը գրում է, թե իր հանդեպ մեծ քաղաքավարություն ցուցաբերեցին Շահնշահը, «ինչպես նաև իր կինը և իր զավակը՝ Զաքարիա անունով մի շատ գեղեցիկ ու իմաստուն երիտասարդ»:[31] Այս Զաքարեն խիզախ զորավար էր. նա մի շարք հայ իշխանների հետ մասնակցել է 1257 թ. Հուլավուի կողմից դեպի Բաղդատ կազմակերպված մեծ արշավանքին: 1261 թ. Հուլավուն «այլ բարուրս կուտեաց ի վերայ նորա, և հրամայեաց սպանանել զնա և անդամ անդամ յօշել, և արկանել շանց»:[32] Բացի այս, Զաքարեի կինը Ուխտիքի (Տայք) իշխան Սարգսի դուստրն էր, ինչպես վկայում է ժամանակակից Կիրակոս Գանձակեցին: Ուրեմն, Շահնշահի որդի Մխարգրձելն, առանց որևէ հիմնավորման, նույնացվել է եղբոր՝ Զաքարեի հետ (թեև Գանձակեցին այդ անունը չի հիշատակում), որը, հիրավի, Հաղբատավանքի 1273 թ. Ամենափրկիչ խաչքարի արձանագրության մեջ հանդես եկող Կայան-Մահկանաբերդի տեր, աթաբակ ու ամիրսպասալար, պարոն Սադուն Արծրունու փեսան է:

Այստեղ հիշատակվում է նաև փոքր եղբոր՝ Իվանեի անունը: Այնպես որ, եթե Մխարգրձելը կրկնանուն լինի, ապա դա կարող է վերաբերել հինգ եղբայրներից Ավագին կամ Սարգսին:

---

[31] *Հ. Հակոբյան,* Ուղեգրություններ, հ. Ա, Եր., 1932, էջ 19-20:
[32] *Կիրակոս Գանձակեցի,* էջ 393:

Հազվադեպ շեղում է *ղփանողքն* տառադարձումը կամ գրչասխալ (խփանողքն, խապանողքն):

274. ԺԱՄԱՏՈՒՆ. մուտքի բարավորին, 18 տող.

ԿԱՄԱՒԱ	ԿԱՄԱՒ ԱՄԵ-
ՆԱԿԱԼԻՆԱՅ	ՆԱԿԱԼԻՆ ԱՅ
ԵՍՀԱՆԵԱ	ԵՍ՝ ՈՀԱՆԵԱ, ՓԱ-
ԿԱԿԱԼԲՈՒԽ	ԿԱԿԱԼ ԲԸ ՈՒԽ-
ՏԻՍԱՍԱՀՆՈ	ՏԻՍ ՍԱՆԱՀՆՈ,
ԵԿԻԴՈՒՍ	ԵԿԻ ԴՈՒՈՍ
ԲԸՆՇԱԻՍ	ԲԸ ՆՇԱՆԻՍ
ԱՌԱՋՆՈ	ԱՌԱՋՆՈ-
ԴՈՒԹԻԼԱՆ	ԴՈՒԹԻԼԱՆ ՏՐ
ԴՈՒԿԱՍ	ԴՈՒԿԱՍ ԱՐՔԵՊԼԻՅԱԼԿՈՊՈՍԻ
ԵՒՏՐԱՍՏՈՒԱ	ԵՒ ՏՐ ԱԼԱՍՏՈՒԱՅԾԱՏՐԻ,
ԵՏՈՒՄԵԾ	ԵՏՈՒ ՄԵԾ-
ԱԾԱԽԱԿԻԼ	ԱԾԱԽ ՍԿԻԼՀԱՅ ԿԱՄ-
ԱԿՅՈՒԹԵԼԵԱՄ	ԱԿՅՈՒԹԼԵԱՄԲ ԵՂԲ-
ԱՒՐՈՐԴՕՅ	ԱՒՐՈՐԴՕՅ ՆԵՐՍԷՍ
ՓԻԼԻՍՈՓԱԻ	ՓԻԼԻՍՈՓԱԻ, ԵՒ ՈՎ ՈՔ
ՈՀԱՆԵԼ	ՈՐ ՀԱՆԵԼ ՋԱՆԱ՝
ԴԱՏԻՅԱՅ	ԴԱՏԻ ՅԱՅ:

Հրատ. Դաֆադարյան, Հաղբատ, 172:

Ծանոթ. Ներսես փիլիսոփայի անվան առկայությամբ Կ. Դաֆադարյանն արձանագրությունը թվագրում է ԺԵ դարով: «Ներսես փիլիսոփայի անունը հիշատակված է մատենադարանի № 6383 ձեռագիր հիշատակարանում իբրև Արիստակես գրչի եղբայր, գրված 1475 թվականին»:

Հիրավի, 1475 թ. Սանահնում գրված «Ավետարանի» գրիչ Արիստակեսը հիշում է նաև Ներսես փիլիսոփային՝ ոչ թե որպես իր եղբայր, այլ հորեղբայր (տե՛ս ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 374), հետևաբար և այստեղ հանդես եկող Ոհանես փակակալի եղբայր: Ներսես փիլիսոփան թաղված է Սանահնի վանքում:

275. ԺԱՄԱՏՈՒՆ. ներսում, հարավարևելյան կամարին, 5 տող.

ԹԼՈՂ...	ԹՎԼԻՆՅ ՈՂ...
ԿԱՄԱԻՆ...	ԿԱՄԱՒՆ [ԱՅ ԵՍ՝ ԳՐ-]
ԻԳՈՐԴ...	ԻԳՈՐ, ՈՐ[ԴԻ ՄԱՐՃՊ-]
ԱՆԻ...	ԱՆԻ . . .
ԱՍՈՐՏ...	ԱՍ ՈՐ Տ . . . . .

Հրատ. Դաֆադարյան, Հաղբատ, 172:

Ծանոթ. Արձանագրության աջակողմյան կեսը հողմահարված է: Գրիգոր անունը վերականգնել է Կ. Դաֆթաղարյանը և թվագրել ԺԳ դարով: 5-րդ տողը նա թողել է ԱՍՐՈՏ տառաշարքով:

Արձանագրությունը Դաֆթաղարյանի գրքում վերծանված է հետևյալ ձևով.

ԹՎ. Ո...
Կամաև . . . [Գր]
իգոր որդ[ի]. . .
ունի . . .
ԱՍՐՈՏ . . .

Գրիգոր անունը Կ. Դաֆթաղարյանը վերականգնել է հավաստիորեն, իսկ 2-րդ տողը լրացնում ենք ըստ բովանդակության:

4-րդ տողի սկիզբը ցույց է տալիս, որ Գրիգորի հոր անունը ավարտվել է սեռական «անի» հոլովիչով, որպիսին կարող են լինել Մարծպան, Հասան և «ան»-ով վերջացող այլ անուններ: Բարձրաքաշի արձանագրությունից հայտնի է ***Գրիգոր, որդի Մարծպանի,*** որով էլ վերականգնվում է 3-րդ տողի վերջավորությունը: 5-րդ տողում կատարել ենք ենթադրական բառանջատում:

Գրիգորի անունը կրող արձանագրությունները Բարձրաքաշում թվագրված են 1241, 1246 թվականներով:

276. ԺԱՄԱՏՈՒՆ. ներսում, արևելյան պատին, խաչքարի ձախ կողքին, 20 տող.

+ԿԱՄԱՒԱՄԵ ՆԱԿԱՒՆԱՅԻՌՈՒ
ԻՍՀԱՅՈՑԸ ԱՅՍՄԵՐԳԻՐԷՀԱՌԱ
ՄԱԵՊԻՍԿՈՊՈ ՍԻՍՅՈՀԱՆԻՍԻԵՒԱ
ՄԵՆԱՅՆ ՄԻ ԱԲԱՆԱՑՍՄԵԾԻԵՒ
ՓՈՔՈՒՐՄՈՒԼ ՔԼԱՉԷԻՌՈՒՆԿԱ
ՉՈՒՏԻՆԵՒԻՒԿ ԵՆԱԿՑԻՆՄԱՄԱԽԱ
ԹՈՒՆԻՆՄԱԼԱ ՆՈՒՌԵՅԱՅՍԺԱՄ
ՄԵԿԻՆԻՍԲՆԸ ԱՆՍԵԻՅԱԵՆԱՅՆԸՆ
ՉԻՑԻՒՐԵԱՑ ԱԴՈՒԻՆԱԷՈՐԵՑԻՆԱԷՋ
ԵՒԱԷՔԸՆԿԱԱՔ ՍԻՐՈՎԵԻԿԱՐԳԵՑԱՔ-
ՋԽԱՉԳԻՒՏԻ ՆՋՇԱԲԱԹՆԵՒՋԿԻ
ՐԱԿԵՆՆՈՑԱ
ԱՌՆԵՆԺԱՄԱՅԱԵՆԱՅՆԵԿԵՂԵՑԻՔՍ
ԱՆԽԱՓԱՆՄԻՆ ՉԻԿԱՄԱԱԾԱԽՄ
ՀԻՐՉԱՓԿԵՆԴ ԱՆԻԵՆՎԱՉԷԻԾՆՈՂ
ԱՑՆԱՌՆԵՆՍ ԱՑՍՏԵԻԿԱՄԱԻՆԵԻ
ՅԵՄՆՈՑԱ ԱՍՐ ՆՎԱՉԷԻԵԻՋ ԱՄԱՄԱ
ԽԱԹՈՒՆԻՆ ԵԻՐ ՋԱՅՍԽԱՓԱՆԵՄԱՍ
ՆՋԿԱԵՆԻԵԻՋ ՅՈՒԴԱԻԱՌՑԵԻԵՒՈ
ՑԱԷՂԱՑՆՄ ԵՐԷԱՌԱՀԻԱՅ

ԿԱՄԱՒ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ, Ի ԹՈՒ-
ԻՍ ՀԱՅ[ՈՑ] ՈԿԹ (1220), ԱՅՍ ՄԵՐ ԳԻՐ Է
ՀԱՂԲԱ-
ՏԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՍ՝ ՅՈՀԱՆԻՍԻ, ԵՒ Ա-
ՄԵՆԱՅՆ ՄԻԱԲԱՆԱՑՍ՝ ՄԵԾԻ ԵՒ
ՓՈՔՈՒ, ՈՐ ՏՈՒԱՔ ՎԱՉԷԻ՝ ԹՈՌԻՆ ՎԱ-
ՉՈՒՏԻՆ, ԵՒ ԻՒՐ ԿԵՆԱԿՑԻՆ՝ ՄԱՄԱԽԱ-
ԹՈՒՆԻՆ, ՄԻԱԲԱՆՈՒԹԵ[ԱՆ] ՅԱՅՍ ԺԱՄՍ,
ՈՐ ԵԿԻՆ Ի ՄԲ ՆՇԱՆՍ ԵՒ ՅԱՄԵՆԱՅՆ ԸՆ-
ՉԻՑ ԻՒՐԵԱՆՑ ԱՐԴՒՒՆԱՒՈՐԵՑԻՆ ՄԵՋ:
ԵՒ ՄԵՔ ԸՆԿԱԼԱՔ ՍԻՐՈՎ, ԵՒ ԿԱՐԳԵՑԱՔ
ՋԽԱՉԳԻՒՏԻՆ ՋՇԱԲԱԹՆ ԵՒ ՋԿԻ-
ՐԱԿԵՆ ՆՈՑԱ
ԱՌՆԵՆ ԺԱՄ ՅԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ
ԱՆԽԱՓԱՆ՝ ՄԻՆՉ Ի ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՐ-
ՀԻ: ՈՐՉԱՓ ԿԵՆԴԱՆԻ ԵՆ՝ ՎԱՉԷԻ ԾՆՈՂ-
ԱՑՆ ԱՌՆԵՆ՝ ՍԱՐԳՍԻ ԵՒ ԿԱՏԱԻՆ, ԵՒ
ՅԵՏ ՆՈՑԱ՝ :Ա:(1) ԱՒՐՆ ՎԱՉԷԻ ԵՒ Զ:Ա: (1)
ՄԱՄԱ-
ԽԱԹՈՒՆԻՆ: ԵՒ ՈՐ ՋԱՅՍ ԽԱՓԱՆԵ՝ ՄԱՍ-
Ն ՋԿԱԵՆԻ ԵՒ ՋՅՈՒԴԱԻ ԱՌՑԵ ԵՒ ՆՈ-
ՑԱ ՄԵՂԱՑՆ ՏԻՐ Է ԱՌԱՋԻ ԱՅ:

Հրատ. Ջալալյանց. Ա. 73. Դրիմեցի. 28-29. Երզնկյանց. 26. ՎՏ. 62-63. Դաֆթաղարյան. Հաղբատ. 172-174:

Ծանոթ. Արձանագրությունը գրված է ոչ թե նվիրատուի, այլ վանքի առաջնորդի ու միաբանների անունից՝ ի հատուցումն Վաչեի և նրա կենակից Մամախաթունի:

Վաչեն Արագածոտնի իշխանաց իշխանն է, կնոջ՝ Մամախաթուն Մամիկոնյանի հետ կառուցել են Հովհաննավանքը, Տեղերի վանքն ու Սաղմոսավանքը:

277. ԺԱՄԱՏՈՒՆ. նախորդի տակ, մանր գրերով, 8 տող.

✠ԵՍՄԱՄԽԱԹՈՒՆ ՏՈՒԻ ՋՀԻԹԱՀԱՆՔՆ
ՈՐ Ի ՎԱՐՀԱՄԱ ՈՐԴԵԱՑՆ ԳՆԵՑԻ ՋՄԻՆ ԱԿՆ
ՈՐ ԵՐԲ ԺԱՄՆ ՄԵՐ ԼԻՆԻ՝ ՋՍԵՂԱՆՆ Ի ՄԵՐ
ԱՆՈՒՆ
ԴՆԵՆ: ՈՎ ԽԱՓԱՆԷ ԿԱՄ ՅԵՏ ԱՌՆՈՒ ՋՀԻԹԱ-
ՀԱՆՔՆ Ի ՎԱՆԻՑՍ՝ ՋՎԵՐԱԳՐԵԼԱԼ ՆՁՈՎՍՆ
ԱՌՑԷ:

Հրատ. Դրիմեցի, 29, Ջալալյանց, Ա, 74, Երզնկյանց, 26, ՎՏ, 234-235, Դաֆթարյան, Հաղբատ 174:

Ծանոթ. Այս արձանագրությունը տեղադրությամբ կազմում է նախորդի շարունակությունը, սակայն բովանդակությամբ միանգամայն ինքնուրույն է, այնուհանդերձ մասնակիորեն կապված է նախորդի հետ: Նույն նվիրագրի անեծքի՝ *զվերոգրեալ նզովսն առցէ* արտահատությամբ բավարարվելով չեն կրկնել ամբողջը: Այս դեպքում Մամախաթունն անձամբ գնել է ձիթհանքի *զմին ակն* (մեկ ճզմաքարը) և նվիրել վանքին, որի մասին խոսք չկա նախորդ բաժնում:

278. ԺԱՄԱՏՈՒՆ. հարավարևելյան ավանդատան մուտքի ճակատին, 8 տող.

Ի՞ՈԼԸ:Ի ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵՄ՚ԼԲԱՄՆԷՀԱՐԵՂԲԱՐ
ԻՄՈ ԵՍ՝ ԴԱՒԻԹ, ՈՐԴԻ ՎԱՍԱԿԱ, ՄԻԱԲԱՆԵՑԱ ՍԼՐԲԼՈՅՑՍ, ԵՒ ՇԻՆ-
ԵՑԻ ՁԽՈՐԱՆՍ ԵՒ ՁԵԿԵՂԵՑԻՍ Ի ՎԵՐԱ ՀԱՆԳՍՏԱՐԱՆԻ ՀԱՒՐ ԻՄՈ
ԵՒ ՔՎԵՐ՝ ԲՈՒՐԴՈԽԱՆԱ: ԱՐԴ, ԱՂԱՉԵՄ ՍԲ ԵՂԲԱՅՐՈՒԹԻԼԻՆԴ, ՈՐ ՁԱ-
ՂՈԼԻՀԱՑԻՑՆ ՁՇԱԲԱԹՆ ԵՒ ՁԻՒՐԱԿԻՆ [ՅԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ]
ԻՄ ՄԱՒՐՆ՝ ՎԱՆԵՆԷ, ԴԱՏԵՐ ԿԻՒՐԻԿԷԻ ԹԼԱԳԼԱՒՈՐԻ, ԵՒ ԻՄ ՔՎԵՐՆ՝ ԲԼՈՒՐԴՈ-
ԽԼԱՆԱ ԼԵԼԻ ԻՄ ՀԱՒՐՆ
ԱՐՆԵՆ, ԵՒ ՅԵՏ ԻՄ՝ ԻՆՁ ԵՒ ԻՄ ՔՎԵՐՆ ԱՐՆԵՆ: ԵՒ ՈՎ ԽԱՓԱՆԷ՝
ՄԵՐ ԽՂՃԻՍ ՊԱՐՏԱԿԱՆ Է ԱՌԱՋԻ ԱՅ:

Հրատ. Դրիմեցի, 7, Ջալալյանց, Ա, 74, Երզնկյանց, 25, «Արարատ», 1886, 523, ՎՏ, 37, Դաֆթարյան, Հաղբատ, 174-175, Ոսկյան, Գվ, 212:

Ծանոթ. Արձանագրությունը վերաբերում է մեծ գավթի հարավարևելյան անկյունում կցված փոքրիկ մատուռ-եկեղեցու կառուցմանը (= շինեցի գխորանս՝ եւ զեկեղեցիս) իբրև տապանատուն Դավթի հոր՝ Վասակի ու քրոջ՝ Բուրդոխանի: Խորան-մատուռը իսկապես շինել է Դավիթը, որի առաջ թաղված են հայրն ու քույրը՝ Վասակն ու Բուրդոխանը, իսկ եկեղեցին, ակներևաբար, Դավիթը նորոգել է:

279. ԺԱՄԱՏՈՒՆ. հարավային թաղին, խաչքարերից վերև, 10 տող.



Թվիս ՈԿԱ (1212):

Շ[ՆՈՐՀԻՒՆ] ԱՅ ԵՍ՝ ՄԱՐԻԱՄ, ԴՈՒՍՏՐ ԿԻՒՐԻԿԷ ԱՐՔԱՒ[ՀԱՆԴԵՐՁ] ՔՈՅՐ ԻՄ
ՌՈՒՍՈՒԳԱՆ[Ա], ԶԽՈՐԱՆՍ ՇԻՆԵՑԱՔ ԵՒ ԶԳԱՒԻԹՍ ԱՌ... ԶԻՄ ԱԲ
[ԽԱՉՍ] ՄԵԾԱԾԱԽ ՊԱՀԱՐԱՆԱՒ ԵՒ ԶՈՍԿԵՄԱԾ ԱՒԵՏԱՐԱՆՍ Ի ԱԲ ՆԵ-
[ԱՆՍ]...ՆՇԱՆԱՒ ԵՏՈՒ...
... ԱՌՆԷ ԶԱՒՐՆ Ի Զ[ԱՄԷՆ]ՍՆ ԵՒ ԻՄ ԽՆ-
[ԴԻՐ Է, ՈՐ] ԶԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՍՏԵԱՆՆ ՇԱԲԱԹՆ ԵՒ ԶԿԻՒՐԱԿԻՆ, ԶՄԻՆ ԱՒՐՆ
ԻՆՁ ԱՌՆԵՆ ԶԺԱՄՆ ԵՒ ԶԱՒՐՆ ԱՄԷՆ ԵՒ ԶՄԻՆ ԱՒՐ ԿԻՒՐԻ[ԿԷԻՆ ԵՒ]...
ԹԱՄԱՐԻՆ, ՌՈՒՍՈՒՔԱՆԱՅ, ԱԲԱՍԱՅ, ԲԱՒՐԻՆԱՅԻ: ԵՒ ՈՐ Զ[ՄԵՐ ՅՈՅՍՍ]
ԽԱՓԱՆԷ՝ ԿԱՅԵՆԻ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑ Է, ԵՒ ՄԵՐ ԽՂԵԻ [ՏՐ ԱՌԱՋԻ ԱՅ:]

Հրատ. Դաֆթարյան, Հաղբատ, 175:

Ծանոթ. Արձանագրությունը նախորդի լրացում-ամբողջացումն է, չափազանց եղծված ու քայքայված: Խնդրո առարկայի շուրջ Գանձակեցին գրում է, որ վանահայր Հովհաննես Խաչենցին հիշատակության արժանի բազում գործեր կատարեց Հաղբատում. «ընդ որս և զհռչակաւոր գաւիթ եկեղեցւոյն շինեաց, որ հիացուցանէ զտեսողսն»:[33] Հովհաննեսի առաջնորդության սկսումը թվագրվում է 1208-1209 թթ., ուստի շինարարական աշխատանքների սկիզբը կարող է թվագրվել վանահոր գործունեության առաջին տարիներով: Արձանագրությունը և Գանձակեցու տեղեկությունը կարող են դիտվել իբրև վկայություն այն մասին, որ գավթի շինությունը նպաստավորել են Կյուրիկե Գ արքայի դուստրեր Մարիամն ու Ռուսուգանը, և այն ավարտվել է 1212-ին:

Ռուսուգանի անվան առկայությունն ավելի ստույգ է դարձնում Մարիամի անձի որոշակիությունը: Առաջին արձանագրության մեջ այդ անունով կոչված է նրա հորաքույրը,

[33] *Կիրակոս Գանձակեցի*, էջ 174:

երկրորդի առաջին տողում՝ նրա քույրը, որը հայտնի է տակավին 1171 թ. Քոբայրի արձանագրությունից:

Այս չափազանց կարևոր արձանագրության մի շարք հատվածներ իսպառ հողմահար-եղծված են, և անկարելի է այն ամբողջովին վերականգնել: Պարզ է, սակայն, որ 1185 թ. Կյուրիկէ թագավորի դուստր Մարիամի կողմից իր հորաքույր Ռուսուգանի և մոր՝ Թամարի շիրիմների վրա կառուցած *հանգստարանը* վերակառուցվել է 1212 թ. նույն Մարիամի և քրոջ՝ Ռուսուգանի միջոցներով:

Առաջին տողերի *հանդերձ քոյր իմ Ռուսուգանաւ* վերականգնումը միանգամայն հավաստի է. նախ որ քայքայված մասում կարող է տեղավորել ընդամենը 5-6 տառ և ապա՝ չի կարող լինել *հանդերձ հորաքույր իմ Ռուսուգանա* գրերի անհամեմատ շատություն և այն պարզ պատճառով, որ Մարիամի հորաքույր Ռուսաքանը մահացած էր դեռևս 1185 թ. առաջ: Վերջին տողի *տէր է* լրացումը ավելի հավանական է *տէր է առաջի Աստուծոյ:*

Մնացած մասնակի վերականգնումները անառարկելի չեն:

280. ԺԱՄԱՏՈՒՆ. հարավային պատի թաղին, 7 տող.

Թվ[ին] ՌԽԹ (1200):

ՇՆՈՐՀԻՒՆ Ա՝Յ, ԵՍ՝ ՄԱՐԻԱՄ, ԴՈՒՍՏՐ ԿԻՒՐԻԿԷԻ ԱՐՔԱԻ, ԻՄ ՔՈՒՅՐԱՒ...

ՇՆՈՐՀԻՒՆ Ա՝Յ, ԵՍ՝ ՄԱՐԻԱՄ, ԴՈՒՍՏՐ ԿԻՒՐԻԿԷ ԱՐՔԱԻ, ՀԱՆԴԵՐՁ ՌՈՒՍՈՒԳ[ԱՆԱՒ,
ՄԻԱԲԱՆԵՑԱ Ա՝Բ]ՆՇ-
ԱՆՍ, ՇԻՆԵՑԻ ԵՒ ԶԳԱՒԻԹՍ ԾԱԾԿԵՑԻ, ԵՒ ԶԻՄ Ա՝Բ Ն[ՇԱՆՍ] ՄԵԾԱԾԱԽ ՊԱՀԱ
Ր[ԱՆԱՒ]...

ԱՒԵՏԱՐԱՆ Ի Ա՝Բ ՆՇԱՆՍ ԷՏՈՒ ԵՒ ՅԱՅԳՀԱՏԻՆ ԶԵՈՐՏ ՇԻՆԱԿԱՆ ԵՒ ԶԱԲՈՒՍ...
ԵՒ ԻՄ ԾՆՈՂԱՑ: ԵՒ ԽՆԴԻՐ Է, ՈՐ ԶՆՈՐ ԿԻՒՐԱԿԷՆ ԵՒ ԶՇԱԲԱԹՆ ՄԵԶ ԺԱՄ [ԱՌՆԵՆ]
ԶՄԻՆ ԱՒՐՆ ԻՆ[Զ]...[ԹԱՄ]
ԱՐԻՆ ԵՒ ՌՈՒ[ՍՈՒԳԱՆԱ], ԱԲԱՍԱ, ԲՈՐԻՆԱԻ: ՈՐ ԶՄԵՐ ՅՈՅՍՍ ԽԱՓԱՆԷ՝ ԿԱԵՆԻ ԵՒ
ՅՈՒԴԱԻ ԿՑՈՐԴ[Է]:

Հրատ. Ջալալյանց, Ա, 75, Երզնկյանց, 26, ՎՏ, 41, Դաֆադարյան, Հաղբատ, 176:

Ծանոթ. Գավթի շինության մասին Մարիամի անունից գրված երեք արձանագրությունների մեջ ժամանակագրությամբ սա երկրորդն է: Առաջինը թվագրված էր 1185-ով: Այստեղ Մարիամը գործել է իր քրոջ՝ Ռուսուգանի ընկերակցությամբ, որի հետ տակավին 1171 թվականին ծավալել էր շինարարական աշխատանք Քոբայրում:

Արձանագրությունից պարզվում է, որ 1200 թվականին Մարիամն ավարտում է նախաշեն գավիթը. *«շինեցի եւ զգաւիթս ծածկեցի»:* Կռահել կարելի է, որ 1185 թ. գավիթսրահը ոչ թե մնացել է կիսավարտ և գործը վերջացվել է 1200-ին, այլև, ըստ երևույթին, այն ունեցել է նախապես փայտի ծածկ, որը 1200-ին փոխարինվել է քարե թաղով, իսկ 8-10 տարի անց քանդվել և վերաշինվել է ժամատունը:

Հատկապես կարևորվում է և այն հանգամանքը, որ շինարարական ձեռնարկումներից զատ, նվիրատվությունների թվում տրվել է նաև *զՍյգիատին զճորտ շինական.*

281. ԺԱՄԱՏՈՒՆ. արևելյան կամարի վրա, ներքուստ, 32 տող.

ԻԹԻՈՂԸ
ԿԱՄԱՆԼՅԵՍԳՐԻԳՈՐ
ԵՂԲԱՅՐ,ՀԱՄԱԶԱՍ
ՊԱՌԱՋՆՈՐԴԻՍՐՈՒ
ԽՄԲ ՀԱՂԲԱՏԱՄԵՆ
ՅՈՒՍՈՎԱՊԱՀԵՑԱ
ԻՍԲՆՇԱՆՍԵՒԶԻՄՀՈ
ԳՈԲԱՅԻՆԳԵՂՆՈՐԴ
ԱՆԶՈՎԳՆԵԼԻԹԱՂ
ԻԱԴԻՆԻՆՈՐԴԵՑՆԻՍ
ԱՐԳՍԷԶԱԿՈՒԱՒԱՁ
ՈՐՈՐԿՈՉԻՄԱՄԽՈՒ-
ՄԷՄՈՒԻՍԲՆՇԱՆՍ
ՅԱՂԱԳՍԱՓՐԿՈՒԹԵ
ՀՈԳ ՈՒՄՈՒԽՄԽԿՄ
ԱԿՅՈՒԹԲՎԱՐԴԱՊԵ
ՄԱՅՅԵՒ ԱԷՆԵՂՈՒԹ
ՐՈՒԹԵՅՍԸՆԿԱՍԴՒ
ՄՄԻԱԲԱՆՈՒԹԻՍ ԵՒ
ՍԱՀՄԱՆԵՑԻՆԶԱԷ
ՆԵԿԵՂԵՑԻՔՍ ՅԻՄՅ
ԱՆՈՒՆՊԱՄԱՐԱՊԵԼՔԻՍ
ԻՆՐԿԻՐԱԷԻՆԲՊՄՐ
ԱՅԱՂԲԱՆԱՄԿԵՆԱԿ
ՑԻՆ ԵՒԱՅԼՆԻՆԶԵՒ
ԶԼԵՂԱՆՆՅԻՄՅԱՆՈՒ
ՆԻՆԵՆՐՊԷՍԶԱՆԱՒ
ՆԱՐԴԷԹԷՈՒՔԶԱՒՐՆ
ԶԺԱՄՆԽԱՓԱՆԷ ԻՅ

ԱՐՔԱԱԿԱՆՍԵՂԱՆՈՅՆԲԻՔՐ
ԿԵԱԼԵՂՑԻԵԻԻՄԵՂԱՅՍՊՐ
ՄԱԿԱՆԷԱՌԱՔԻԱՅ

Ի թ[ուականին] Ն[որ]որ (1249),
ԿԱՄԱՒՆ ԱՅ, ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ,
ԵՂԲԱՅՐ ՏՆ ՀԱՄԱԶԱՍ-
ՊԱ, ԱՌԱՋՆՈՐԴԻ ՍԲ ՈՒ-
ԽՏԻՍ ՀԱՂԲԱՏԱ, ՄԵԾ
ՅՈՒՍՈՎ ԱՊԱՒԻՆԵՑԱ
Ի ՍԲ ՆՇԱՆՍ, ԵՒ ԶԻՄ ՀՈ-
ԳՈ ԲԱԺԻՆ ԳԵՂՆ, ՈՐ Գ-
ԱՆԶՈՎ ԳՆԵԼ ԷԻ ԹԱՂ-
ԻԱԴԻՆԻՆ ՈՐԴԵՑՆ Ի Ս-
ԱՐԳՍԷ ԶԱԿՈՒԱՒԱՁ-
ՈՐ, ՈՐ ԿՈՉԻ ՄԱՄԽՈՒ-
Տ, ԷՏՈՒ Ի ՍԲ ՆՇԱՆՍ
ՅԱՂԱԳՍ ՓՐԿՈՒԹԵ[ԱՆ]
ՀՈԳՈ ԻՄՈ: ԵՒ Տ[Է]ՐՍ, ԿԱՄ-
ԱԿՅՈՒԹ[ԵԱՄ]Բ ՎԱՐԴԱՊԵ-
ՏԱՅՍ ԵՒ ԱՄԷՆ ԵՂԲԱՅ-
ՐՈՒԹ[ԱՆ]ՅՍ, ԸՆԿԱԼԱՆ ԶԻ-
Մ ՄԻԱԲԱՆՈՒԹԻ[ՒՆ]Ս ԵՒ
ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ԶԱՄԷ-
Ն ԵԿԵՂԵՑԻՔՍ ՅԻՄ Յ-
ԱՆՈՒՆ ՊԱՏԱՐԱԳԵԼ Զ ՔՍ.
Ի ՆՈՐ ԿԻՒՐԱԿԷԻՆ Բ (2) ՊԱՏԱՐ-
ԱԳ ՄԱՄՔԱՆԱ՝ ԻՄ ԿԵՆԱԿ-
ՑԻՆ ԵՒ ԱՅԼՆ՝ ԻՆՁ, ԵՒ
ԶՍԵՂԱՆՆ ՅԻՄ ՅԱՆՈՒ-
Ն ԴՆԵՆ ՈՐՊԵԱ ԶՆԱՆԱՒ-
Ն: ԱՐԴ, ԵԹԷ ՈՔ ԶԱՒՐՆ ԵՒ
ԶԺԱՄՆ ԽԱՓԱՆԷ Ի Յ-
ԱՐՔԱԱԿԱՆ ՍԵՂԱՆՈՅՆ ՔԻ՝ ԶՐ-
ԿԵԱԼ ԵՂԻՑԻ ԵՒ ԻՄ ՄԵՂԱՅՍ ՊԱՐ-
ՏԱԿԱՆ Է ԱՌԱՋԻ ԱՅ:

Հրատ. Ղրիմեցի, 23, Զալալյանց, Ա, 75, Երզնկյանց, 25, ՎՏ, 93, Ղաֆադարյան, Հաղբատ, 177-178:

Ծանոթ. Համազասպ առաջնորդի եղբայր Գրիգորը ոմն Թաղիադինի որդի Սարգսից գնել է Մամխուտ գյուղը, որը գտնվել է Ակռավածորում: Նվիրելով այս գյուղը վանքին՝

Գրիգորը իր և տիկնոջ համար պատարագ է ստացել՝ կնոջ համար Նոր Կիրակեի տոնին, իսկ իր համար՝ սբ Նանայի: Հ. Աճառյանը Նանան նկատել է իբրև մարդու անուն (ՀԱԲ, Դ, 20, 3): Մինչդեռ երբ խոսքը վերաբերում է պատարագամատույց *յիմ յանուն դնեն որպես զնանային*, այսինքն որ իր անունը դնեն սբ Նանայի տոնի օրը պատարագ անելու ժամին:

282. ԺԱՄԱՏՈՒՆ. արևելյան պատի որմնասյան խոյակի վրա, տեղ-տեղ կաթիլքից քարը քայքայվել է և գրերի մեջ կրային զանգված լցվել, 8 տող.



ԿԱՄԱՆ ԱՅԵՍԱԱՂՐԴԻԱՍԼԱՆԱՓԻՆԵԻ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՌՈՒՍՈՒՔԱՆ,
ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ[ԱՆ] ՏՐ ՀԱՄԱՋԱՍՊԱՅ, ՀՈԳՈ ՏՈՒՆ ԴՐԱՔ Զ-
ՍԲ ՈՒԽՏՍ ՀԱՂԲԱՏ ԵՒ ՏՈՒԱՔ . . . ԸՆԾԱՅՔ, ԵՒ ՈՐՉԱ-
Փ ԿԵՆԴԱՆԻ ԵՆՔ ՏԱՆՔ ԶՈ. . . : ԱՌՔԱ ԷՏՈՒՆ ՄԵԶ
ԶՔԱՌԱՍՆԻՑՆ ԱՒՐՆ ՊԱՏԱՐԱԳ ԶԱՄԵՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ: ՈՎ ԽԱՓ-
ԱՆԷ՝ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՏԵՐ Է ԱՌԱՋԻ ԱՅ, ԻՍԿ
ԿԱՏԱՐ[ԻՉՔՆ] ԱՒՐՀՆԵՍՑԻՆ:
ԹՒԻՍ ՈՂԱ (1242):

Հրատ. Երզնկյանց, 24, ՎՏ, 25, Ղաֆադարյան, Հաղբատ, 178:

Ծանոթ. Հոգո տուն դրաք զսբ ուխտս Հաղբատ արտահայտությունը Կ. Ղաֆադարյանը համարում է *միաբանեցաք զսբ ուխտիս Հաղբատայ:*

Ս. Ավագյանը Սասնայի հայրանվան *Ասլանափին* ուղիղ ձևը համարում է *Ասլան ափայիս* (ՎԱԲ, 33-34): Երզնկյանի մոտ երկրորդ տողի վերջից սկսած տրված է բոլորովին տարբեր մի այլ տեքստ, որը շփոթմունք է:

283. ԺԱՄԱՏՈՒՆ. արևելյան պատի մոտ կանգնեցրած խաչքարի պատվանդանին, 8 տող.



ԿԱՄԱՆ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅԵՍՄՐ ՅՈԷՍԱՌԱՔՆՐԴ ՍԲ ՈՒԽՄԻՍ ՀԱՂԲԱՏԱՅ

ԿԱՄԱՆ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ, ԵՍ՝ ՏՐ ՅՈ[ՎՀԱՆՆ]ԷՍ, ԱՌԱՋՆՈՐԴ ՍԲ ՈՒԽՏԻՍ ՀԱՂ
ԲԱՏԱՅ,

ԼՐՍԱԱՔ ԵՂԲԱՐՑՍ, ԸՆԿԱԼԱՔ ՍԻՐՈՎ Զ ՏՐ ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԱԲՍՈՆԱ,
ՈՐ ԵԿՆ ՅԵՐԿՊԱԳՈՒԹԻՒՆ ՄԲ ՆՇԱՆԻՍ ԵՒ ԵՏ ԸՆՇԱՅ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՍՊԻ-
ՏԱԿ. . . ՊՐ ՆԱՓՈՐՏ Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ԵՂԲԱՐՑՍ ԵՒ ԽՆԴՐԵԱՑ Ի ՄԵՆՋ ՄԻԱԲԱՆ ԵՒ
ԵՂԲԱՅՐ ԼԻՆԵԼ ՄԵՋ: ԵՒ ՄԵՔ, ԸՍՏ ՅԱՒԺԱՐ ԿԱՄԱՑ ՆՈՐԱ, ՍԱՀՄԱՆԵՑԱՔ Զ ՄԲ
ԱԼՍՏՈՒ
ԱԾԱԾՆԱ ԱՒՐՆ, ԶՎԵՐԱՓՈԽՄԱՆՆ ԶԵՐՐՈՐԴ ԱՒՈՒՐՆ ՊԱՏԱՐԱԳՆ, ՈՐ ՅԱՄԷՆ
ԵԿԵՂԵՑԻՔՍ ԻՒՐ ՇՆՈ-
ՂԱՑՆ ԱՌՆԵՆ՝ ԹՈՐՈՍԻ ԵՒ ԹԱԳՈՒՒ, ԵՒ ՍՆՈՒՑՈՂԱՑՆ՝ ՏՐ ԲԱՐՍՂԻ ԵՒ ՅՈՒՓՍԻՄԷ, ԵՒ
ՅԵՏ ՎԱԽՃ-
ԱՆԻ ՆՈՐԱ՝ ԻՒՐ ԼԻՑԻ: ԿԱՏԱՐՈՂՔՆ ԱՒՐՅՆԻՆ Ի ՏԷ:

Դրատ. Ղրիմեցի, 29, Զալալյանց, Ա, 74, Երզնկյանց, 26-27, ՎՏ, 235, Դաֆադարյան, Հաղբատ, 178-179:

Ծանոթ. Կ. Դաֆադարյանը գտնում է, որ «Տոնի անվան մեջ *Աստուածածնա* բառի *ած* գրերը համառոտաբար գրվելու հետևանքով մոռացվել են, որ մենք ակնհայտ սխալ համարելով՝ ավելացրել ենք, բայց այդ բառից հետո գրված *աւրն*-ը միանգամայն ավելորդ է, ուստի դուրս ենք հանել: Այդտեղ պետք է հասկանալ Աստվածածնա վերափոխման երրորդ աւուր պատարագը: Չնայած սրան, բնագիրը թողնվել է անփոփոխ, որից իմաստն առանձնապես չի տուժում:

4-րդ տողի սկզբում անվերծանելի է մնում ՊՐ վերջավորություն ունեցող բառը: Խաչքարը կանգնեցվել է 1008 թ. (տե՛ս հաջորդ արձանագրությունը), սակայն այս հիշատակագիրը գրվել է դատարկ պատվանդանին ժԳ դ.:

284. ԺԱՄԱՏՈՒՆ. Նույն խաչքարի 3 նիստերին.



Ի ՆՇԷ (1008) ԹՈՒԻՍ, Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ԴԱՒԹԻ ԵՒ
Ի ՀԱՅՐՈՒԹԵԱՆ ՅՈՎԱՆԷՓԱ,
ԵՍ՝ ՄԵՍՐՈՊ, ԿԱՆԳՆԵՑԻ ԶՍՈՒՐԲ ՆՇԱՆՍ ՅՈՒԽՏԻՍ ՀԱՂԲԱՏԱ:

Դրատ. Ղրիմեցի, 42, Երզնկյանց, 24-25, ՎՏ, 12, Դաֆադարյան, Հաղբատ, 178-179:

Ծանոթ. Դավիթ թագավոր Անհողինը Կյուրիկեի (Գուրգենի) որդին է, գահակալել է 989-1048 թթ.:

285. ԺԱՄԱՏՈՒՆ. արևելյան պատի ծախ կողմում. 21 տող.



ՅԱՄՍ ԱԼՍՏՈՒԱԼՃԱՋԱՒՐ ԹԼԱԼԳԼԱՒԼՈՐ-
ԱՑՍ ԹԱՄԱՐԱ ԵՒ ՈՐԴՈ ԻՒՐՈ
ԳԵՈՐԳԵ, ԵՒ Բ (2) ՀԱՐԱՋԱՏԱՑ
ՁԱՔԱՐԷԻ ԵՒ ԻՒԱՆԷԻ, ՀՐԱՄԱՆԱՒ
ՍՈՑԱ ԿՈՉԵՑԱ ՅԵՊԻՍԿՈՊՈ-
ՍՈՒԹԻԼԷՆ ՄԲ ԱԹՈՌՈՅՍ ՀԱՂԲԱՏ-
Ա: ԵՍ՝ ՅՈՀԱՆԷԱ Ի ԽԱՉԵՆՈ,
ՆԵՐՈՂՈՒԹԼԵԱՄԲ ԱՅ ԿԱՑԵԼԱԼ ԻՄ ԱՄՍ
ԲԱՁՈՒՄ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԼԱՆԱ,
ԵՒ ԸՍՏ ԻՄՈՒՄ ԿԱՐՈՂՈՒԹԵԼԱՆ ՍՊ-
ԱՍԱՒՈՐԵՑԻ ՍՐԲՈՑՍ Ի ՇԻՆՈՒԹԻԼԷՆ ԵՒ
ՅԱՌԱՋԱԴԻՍՈՒԹԻԼԷՆ ՏԱՆՍ ԱՅ:
ՆԱԽ՝ Ի ՁԵՌՆ ՇԻՆՈՒԱԾՈՑ Ի ՄԲ ՆՇ-
ԱՆՍ, Ի ՄԱՏԵՆՍ, Ի ՍՊԱՍ ՁԱՐԴՈՒՑ, ՁԿԱԹՈՒՂԻԿԷՍ ՍԱԼԵԼ ԵՒ Ձ-
ԴՈՒՌՆՍ ԿԱՁՄԵԼ, ՁՄԲ ԳՐԻԳՈՐՆ ՆՈՐՈԳԵԼ, ՁԳԱՒԻԹՍ
ՇԻՆԵԼ, ՁԳԱՒԹԻ ՄԲ ՍԵՂԱՆՈՅՆ ԵՒ Ձ:Գ: (3) ՄԲ ՆՇԱՆՍ: ԵՒ ԻՄ ԽՆԴ-
ԻՐ Է Ի ՄԻԱԲԱՆԱՑՍ, ՁՄԲ ՅԱԿՈԲԱ ՏԱՒՆԻ ԿԻՐԱԿԷՆ ԻՄ ՄԲ ՆՇ-
ԱՆԱՑՍ ՏԱՒՆ ԿԱՏԱՐԵՆ ԵՒ ՁՊԱՏԱՐԱԳ ԱՒՈՒՐՆ ԻՆՁ ՄԱՏՈՒՑ-
ԱՆԵՆ ՅԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՍ: ԵՒ ՄԻ ՈՔ ԻՇԽԵՍՑԷ ԱՅԼՈՒՄ ՏԱԼ

ՅԱՅՍԱ ԱՌՈՒՐ ՁԺԱՍՆ: ԵՒ ՈՐՔ ԿԱՏԱՐԵՆ ՁԱՂԱՁԱՆ-
Ս ՍԵՐ ԱՒՐՀԵԼԱՑԻՆ Ի ՏԷ ԱՅ: ԱՄԷՆ: ՈԳ: (1221) [ԹՎԻՆ]:

Դիատ. Գրիմեցի, 43-44, Երզնկյանց, 21-22, «Արարատ», 1880, 521, ԺՁ, 64-65, Դաֆթադարյան, Հաղբատ, 160, Ուսկյան, Գվ, 174:

Ծանոթ. Այս պաշտոնական տեղեկատվությամբ Հովհաննես Խաչենցին տարեգրում է, որ երկրի գերագույն իշխանավորների (թագավորների և Զաքարյան եղբայրների) *հրամանաւ... կոչեցաւ յեպիսկոպոսութիւն սբ աթոռոյս Հաղբատա* (նրանց վճռով ու հրամանով Հաղբատի վանքում հիմնում, ավելի ճիշտ՝ վերահիմնում է) եպիսկոպոսական աթոռ:

13-րդ տողի *նախ ի ծեռն շինուածոց ի սբ նշանս* արտահայտությունը Կ. Դաֆթադարյանը մեկնում է *նախ սուրբ նշան եկեղեցու մեջ կատարած շինարարությունները* իմաստով, մինչդեռ, թվում է, այն հարկ է լրացնել *ի մատենս, ի սպաս զարդուց* հաջորդող բառերով և կարծել, որ այս դեպքում խոսքը բառացիորեն ոչ թե շինարարական աշխատանքներին է վերաբերում, այլ բեմի հարդարմանը, սպասքի ու ծեռագրերի տրամադրմանը:

Վանահոր *այս բազում առաջնորդութեան* ընթացքում հիրավի կատարվել են շինարարական, նորոգչական, բարեկարգման աշխատանքներ (սալել են Կաթողիկեի գմբեթն ու ծածկերը, նորոգել գավիթն ու Ս. Գրիգոր եկեղեցին և այլն):

Կ. Դաֆթադարյանի դիտողությամբ՝ «անհասկանալի է 16-րդ տողում հիշատակվող *զգաւթի սբ սեղանոյն* (գավթի սուրբ սեղանի), որովհետև գավիթը սեղան չունի»: Նկատենք, որ առանձին դեպքերում գավիթներում ևս սեղան էր ձևացվում հանդիսությունների և աննպաստ եղանակի ժամանակ հավատացյալներին տեղավորելու համար (Հայրավանք, Հառիճ), սակայն այս դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե գավթում ուղղակիորեն սեղան (բեմ) ունենալուն, այլ, ըստ երևույթին, այնտեղ տեղադրված երեք խաչքարերը ևս սրբատեղի-սեղան ճանաչելուն (*զգաւթի սբ սեղանոյն եւ զգ սբ նշանս*):

Նկատենք նաև, որ սա Հովհաննես Խաչենցու յուրատեսակ հաշվետվությունն է իր ծավալած գործունեության մասին, իսկ *զգաւիթս շինել* խոսքերը վերաբերում են հայկական միջնադարյան ճարտարապետության անհասանելի արժեքներից մեկի՝ Հաղբատի գավիթ-ժամատան կառուցմանը, Կյուրիկյանների նախկին փոքր տապանատան ծավալուն վերակառուցմանը, հատկապես՝ խաչվող կամարներով ծածկի արարմանը: Այս հիմնարար վերակառուցումը կատարվել է նույն Կյուրիկյան Մարիամի ու Ռուսուդանի համամտությամբ ու աջակցությամբ: Զուր չէ Գանձակեցու գովեստը, թե հեզ ու առաքինի եպիսկոպոսը «Սա քակեաց զգաւիթն փոքրագոյն, որ ի դուռն կաթողիկէին Հաղբատայ, և շինեաց մեծ և գեղեցիկ շինուած, որ զարմացուցանէ զտեսողսն հիացմամբ»:[34]

[34] *Կիրակոս Գանձակեցի*, էջ 98:

286. ԺԱՄԱՏՈՒՆ. Նախորդի անմիջական շարունակությունը, 5 տող.



ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ՝ ՊՈՒԼՏԱՃԻ, ԵՂԲԱՅՐ ՏՐ ՅՈ-
ՀԱՆԻՍԻ, ԵՏՈՒ : ՃԿ : (160) ԴԱՀԵԿԱՆ Ի ՇԻՆՈՒԹԻ[ԼԻՆ] ԺԱՄԱ-
ՏԱՆՍ ԵՒ ԻՆՁ ՊԱՐՏԻՆ Ի ՏԱՐՈՒՄՆ : Ե : (5) ՊԱՏԱՐԱԳ:
ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ ԻՄ ՄԵՂԱՑՍ. ԵՒ ԻՄ ԱՋԳԻ ՄԵՂԱՑ, ՊԱՐ-
ՏԱԿԱՆ Է ԱՌԱՋԻ ԱՅ :

Հրատ. Ղրիմեցի, 28. Երզնկյանց. 24, Դաֆադարյան, Հաղբատ, 180-181:

Ծանոթ. Պուլտաճին Հովհաննես Խաչենցու եղբայրն է և 160 դահեկանով նպաստել է ժամատան արմատական վերակառուցմանը:

287. ԺԱՄԱՏՈՒՆ. Ներսում, խորանի եզրակողերին, տապանաքարերի գլխին դրած խաչքար, եզրաշրջանակին.



ՆՃԳ (1004) Թ[ՈՒԻՆ], Ի ՀԱՅՐՈՒ-
ԹԵԱՆ ՍԻՄԵՈՆԻ, ԵՍ՝ ԱՏՈՄ, ՎԵՐԱ-
ԿԱՑՈՒ ԵԿԵՂԵՑՈՅՍ, ԿԱՆԳՆԵՑԻ
ՁԱԲ ԽԱՉՍ: ԻՆՁ ԱՂԱՒԹՍ ԱՐԱՐԷՔ:

Հրատ. Ղրիմեցի, 28. Բժշկյանց, 77, «Կռունկ», 36. Երզնկյանց, 25, ՎՏ, 12, Դաֆադարյան, Հաղբատ, 181:

288. ԺԱՄԱՏՈՒՆ. արևմտյան մուտքի աջ կողքին, պատի վրա գծած խաչի կողքերին, 6 տող.



ԽԱՉԱԲԱՐ ԽԱՉՍ ԲԱՐ[Ե],
ԽԱԼԽԵՂՃԿԱՐ ԽԱԼԽ ԽԵՂՃ ՀԱՄԱ
ՁՊՆ Ձ[ԱՍ]Պ[Ի]Ն,
ՆԲԹ ՆԱՐԻՆ, Խ[Ա]Թ-
ԻՆԳՈ Է ԻՆ ԳՈՒ-
ՇԱՐԻՆ ՇԱՐԻՆ:

Հրատ. Դաֆադարյան, Հաղբատ, 181:

Ծանոթ. Խեղճ այստեղ չի նշանակում աղքատ, թշվառ, այլ՝ զրկված, թույլ, դժբախտ: Վերջին անունները թերևս լինեն ***Խաթուն, Գուշար:***

289. ԺԱՄԱՏՈՒՆ. հարավային պատին, դրսից, փորագիր խաչքարի տակին, 2 տող.

ՄԸՆՇԱՆՄՐՈՆԱԿԱՆԹԱՐԽԱԽԻՆԵՒՇ ԶՈՒԲԱԹԻՆ
ԼԵՐՔԼԷԱՐԱՆ

ՍԲ ՆՇԱՆ Տ[Է ԽՐՈՆԱԿԱՆ, ԹԱՐԽԱՆԻՆ ԵՒ ՇԱՂՈՒԲԱԹԻՆ
ԼԵՐ ՔԱՒԱՐԱՆ:

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 256:

Ծանոթ. Այս անունները մեզանում օգտագործվել են հիմնականում ԺԵդ. սկսած:

290. ԺԱՄԱՏՈՒՆ. հարավային կողմում դուրս շեշտված մասում արտաքուստ, բարձրում, մանր գրերով, փորագրված խաչերի գլխին, 3 տող.

+ ՄԻՔԶՍԲՄԵՒ ԱՒՍ
ՊԱՐՈՆՄԻՐԻՄԱՆԻՆ ԵՒ
ԱՌՈՒՍՆԻՆԻՒՐՅ

ՍԲ Խ[Ա]ՉԱ ԲԱՐԵԽԱՒՍ
ՊԱՐՈՆ ՄԻՐԻՄԱՆԻՆ ԵՒ
ԱՍՈՒՍՆԻՆ ԻՒՐ[Ո]Յ:

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 255:

Ծանոթ. Կ. Ղաֆադարյանը թվագրում է ԺԵ-ԺԶ դդ.:

ԺԱՄԱՏՈՒՆ. ՏԱՊԱՆԱԳՐԵՐ

291. ԺԱՄԱՏՈՒՆ. ներսում հյուսիսարևելյան անկյունում շրջագիր ծածկագրով, 2 տող (ԺԳ դ.).

ՄՆԿԲՆ ՀՍԵՆ
ՀԿՐԴՅ

ԱՅՍ ՀԱ[Ն]ԳԻՍՏ է
ԿԱՐԱՊ[ԵՏ]ԻՆ:

Հրատ. Ղրիմեցի, 83, Ղաֆադարյան, Հաղբատ, 181:

Ծանոթ. Թեև ծածկագրությունը տարածված է ձեռագրաց հիշատակարաններում առհասարակ, բայց այդպիսիք կան նաև վիմագիր արձանագրություններում: Այս տապանագիրը շրջագիր ծածկագրություն է: Կ. Ղաֆադարյանն այն կարդացել է *Այս հա(ն)գի(ս)տ Մկ(րտիչ) Վ(ար)դ(ա)պ(ետ)ին,* որն անհարիր է բնագրին:

292. ԺԱՄԱՏՈՒՆ. նախորդի աջ կողքին, 1 տող (ԺԳ դ).

ՎԱՆԵ

ՎԱՆԵ[ՆԻ]:

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 182:

Ծանոթ. Վանենու անունը կա նաև Շնողի մի տապանաքարի վրա և բնականաբար վկայում է, որ այդ անունը կրողները տարբեր անձեր են: Այս տապանաքարը տե-

դադրված է Աբաս թագավորից ոչ հեռու, ուրեմն նրա կինն է, Զաքարեի և Իվանեի քույրը, ամուսնու հիշատակին Սանահնի կամուրջը կառուցողը: Մահվան թվականը հայտնի չէ:

Կարծում ենք, որ ճիշտ կլինի նշել նաև Կ. Ղաֆադարյանի ծանոթագրությունը. «Տապանաքարի աջ կողքը մնացել է վերադիր շարվածքի տակ և ծածկել անվան վերջին Ի գրերը» (խմբ.):

293. ԺԱՄԱՏՈՒՆ. հարավարևելյան անկյունում, 1 տող.

ԱԲԱՍԹԱԳԱՒՈՐ:

Հրատ. Ղրիմեցի, 33, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 79, «Կռունկ», 37, Երզնկյանց, 22, «Ազգ. հանդ.», VII-VII, 400, Ղաֆադարյան, Հաղբատ, 182:

Ծանոթ. Աբաս թագավորը հայտնի է իբրև Աբաս Բ: Որդին էր Կյուրիկե Գ-ի, ամուսինը Վանենի (Նանա) Զաքարյանի, ըստ ուսումնասիրողների (Մովսիսյան, Աճառյան, Ղաֆադարյան)՝ մահացած 1192 թ.:

Պ. Մուրադյանի կարծիքով, նրա ծննդյան և մահվան տարին վերջնականապես չի ճշտված, և 19 տարեկան հասակում մեռած լինելու՝ Գանձակեցու տեղեկատվությունը կարոտ է վերանայման (ՀՎԱ, 170):

294. ԺԱՄԱՏՈՒՆ. նախորդի աջ կողքին, 1 տող.



ԿԻՒՐԻԿԷՌԳ ԿԻՒՐԻԿԷ ԹԱԳԱՒՈՐ:

Հրատ. Ղրիմեցի, 33, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 78, «Կռունկ», 37, Երզնկյանց, 78, «Ազգ. հանդ.», VII-VII, 400, Ղաֆադարյան, Հաղբատ, 182:

Ծանոթ. Աբաս թագավորի և հինգ աղջիկների հայրն է, Թամարի ամուսինը:

295. ԺԱՄԱՏՈՒՆ. արևելյան կողմի երկրորդ շարքի ծախակողմյան տապանաքարի վրա, 1 տող.



ՄԱՐԻԱՄ ՄԱՐԻԱՄ:

Հրատ. Ղրիմեցի, 33, Բժշկյանց, 80, «Կռունկ», 137, Երզնկյանց, 22, «Ազգ. հանդ.», VII-VII, 400, Ղաֆադարյան, Հաղբատ, 182:

Ծանոթ. Մարիամը Կյուրիկե Գ-ի և Թամարի ավագ դուստրն է: Նրա մահվան թվականը ստույգ հայտնի չէ, 1212 թվականին տակավին կենդանի էր և մասնակցում էր ժամատան վերակառուցմանը: Առաջին անգամ հիշատակվում է 1171 թ. Քոբայրավանքի եկեղեցու շինարարական արձանագրությունում:

296. ԺԱՄԱՏՈՒՆ. Նախորդի աջ կողքին, 1 տող.

ԹԱՄԱՐԹԳ ԹԱՄԱՐ Թ[Ա]Գ[ՈՒՀԻ]:

Հրատ. Դրիմեցի, 33, Բժշկյանց, 80, «Կռունկ», 37, Երզնկյանց, 22, «Ազգ. հանդ.», VII-VII, 200, Դաֆթարյան, Հաղբատ, 182:

Ծանոթ. Թամար թագուհին կինն էր Կյուրիկե Գ-ի, մայրը Մարիամի, Ռուսուգանի, Բորինայի, Վանենու, Մամքանի, Աբասի: Մահացել է նախքան 1185 թ., երբ դուստրը՝ Մարիամը, նրա վրա հանգստարան է կառուցել:

297. ԺԱՄԱՏՈՒՆ. Նախորդի աջ կողքին, 1 տող.

Ռ-ՌՈՒՍՈՒԳԱՆ ՌՈՒՍՈՒԳԱՆ:

Հրատ. Դրիմեցի, 33, Բժշկյանց, 80, «Կռունկ», 38, Երզնկյանց, 22, Ջալալյանց, Ա, 79, «Ազգ. հանդ.», VII-VII, 400, Դաֆթարյան, Հաղբատ, 183:

Ծանոթ. Ռուսուգան՝ դուստր Թամարի և Կյուրիկե Գ-ի, քույր Մարիամի: Վերջին անգամ հիշատակված է 1212 թ.:

298. ԺԱՄԱՏՈՒՆ. հյուսիսային կողմի դուրս շեշտված մասի մեջ, 1 տող.

ԲԱՐՐՈՒՆԱՅ ԲԱՐՐՈՒՆԱՅ:

Հրատ. Դրիմեցի, 33, Բժշկյանց, 70, «Կռունկ», 38, Երզնկյանց, 22, Ջալալյանց, Ա, 78, «Ազգ. հանդ.», VII-VII, 400, Դաֆթարյան, Հաղբատ, 183:

Ծանոթ. Բորինա՝ քույր Մարիամի, դուստր Կյուրիկե Գ-ի ու Թամար թագուհու: Վերջին անգամ հիշատակված է 1212 թվականին:

299. ԺԱՄԱՏՈՒՆ. Ռուսուգանի գերեզմանի աջ կողքին (Բ շարք), 3 տող.

ԱՅՍԷՏԱՊԱ ԱՅՍ Է ՏԱՊԱ-
ՆՄԻՆԱՍՎԷԴ Ն ՄԻՆԱՍ Վ[ԱՐ]Դ[Ա-]
ՊՄԻՆԹՌԾ Պ[Ե]ՏԻՆ: Թ[ՈՒԻՆ] ՌՃ (1651):

Հրատ. Դրիմեցի, 33, Ջալալյանց, Ա, 78, Երզնկյանց, 23, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆթարյան, Հաղբատ, 183:

Ծանոթ. Պատվարժան տեղում թաղված Մինասը վանահայրն է, նրա առաջնորդությունն ընկնում է Կիրակոս եպիսկոպոսի (մահ. 1629 թ.) և Ավետիս արքեպիսկոպոսի

(ձեռնադրված 1651 թ.) միջև: 1649 թ. Տփխիսում գրված «Յայսմաւուրք»-ի հիշատակարանում նա վկայված է Փիլիպոս կաթողիկոսից հետո «ի առաջնորդութեանն *Հաղպատայ Մինաս* բաբունապետին»:[35] Ըստ Մատուռի արևելյան պատի արձանագրության, սա այգի է գնել և բահրան Ս. Նշանին վախմ տվել:

300. ԺԱՄԱՏՈՒՆ. նախորդի աջ կողմում (Բ շարք), 1 տող.


ԿԻՒՐԻԿԷ ԹԼԱՂԱՒՈՐ:

Հրատ. Ղրիմեցի, 33, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 78, Երզնկյանց, 22, «Ազգ. հանդ.», VII-VII, 400, Ղաֆադարյան, Հաղբատ, 183:

Ծանոթ. Կ. Ղաֆադարյանի կարծիքով, այստեղ թաղված է Կյուրիկե Բ, Դավիթ Անհողինի որդին: Մահացել է 1100 թվականին: Նա թագավորել է հոր մահից՝ 1048 թ. հետո: Նա է կառուցել Վարդաբլրի ամրոցը ու սարավույթը:

301. ԺԱՄԱՏՈՒՆ. նախորդի աջ կողքին, 1 տող.


ԴԱՎԻԹ

Հրատ. Ղրիմեցի, 33, Ջալալյանց, Ա, 78, Երզնկյանց, 22, «Ազգ. հանդ.», VII-VII, 400, Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, 183:

Ծանոթ. Կ. Ղաֆադարյանը նրան համարում է Կյուրիկյան տոհմից:

302. ԺԱՄԱՏՈՒՆ. նախորդի աջ կողքին, 1 տող.

ԱԲԱՍ ԹԼԱՂԱՒՈՐ:

Հրատ. Ղրիմեցի, 33, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 79, «Կռունկ», 38, Երզնկյանց, 22, «Ազգ. հանդ.», VII-VII, 400, Ղաֆադարյան, Հաղբատ, 184:

Ծանոթ. Կ. Ղաֆադարյանի կարծիքով, «Հավանաբար Տավուշի թագավոր Աբասն է»: Մինչև 1089 թ. իշխել է Մածնաբերդում, ուր և մահացել է 1145-1150 թթ. միջև:

303. ԺԱՄԱՏՈՒՆ. նախորդի աջ կողքին, 1 տող.


ՏԷՐ ԳՐԻԳՈՐԷՍ:

Հրատ. Ղրիմեցի, 34, Բժշկյանց, 80, «Կռունկ», 37, Երզնկյանց, 23, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Ղաֆադարյան, Հաղբատ, 184:

---

[35] Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ, հտ. Գ, էջ 354:

Ծանոթ. Տեր Գրիգորենը Հաղբատի վանքի առաջնորդն է եղել ԺԲ դ. վերջերից մինչև Լոռիի ժողովը: Նա Զաքարյանների ազգականն էր, բայց գժտվել էր Զաքարեի հետ: Պետք է որ մահացած լինի Զաքարե ամիրսպասալարից հետո (1212 թ.), այլապես հալածական եպիսկոպոսին թույլ չէր տրվի բաղվել Հաղբատում:

304. ԺԱՍԱՏՈՒՆ. Նախորդի աջ կողքին, 5 տող.

ԶԱՔԱՐԷԻ ԵՒ ԻՒ-
ԱՆԷԻ ՔՎԵՐՈՐԴ-
ԻՆ Է՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՂ-
ՈՅՍ:

Հրատ. Գրիմեցի, 34, 45, Բժշկյանց, 80, «Կռունկ», 37, Երզնկյանց, 23, Brosset, Discription, 45, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆթարյան, Հաղբատ, 184, Ոսկյան, Գվ, 223:

Ծանոթ. Սա է «քուերորդի իշխանացն Զաքարէի և Իւանէի», որ «շինեաց բերդ մի ամրագոյն պարսպաւք մէջ ընդ Հաղպատ և ընդ Սանահինն»:[36] Նկատի ունի 1233 թ. կառուցված Կայան բերդը:

305. ԺԱՍԱՏՈՒՆ. Նախորդի աջ կողքին, 2 տող.

ԶԱՔԱՐԷԻ ԵՒ ԻԱՆԷԻ
ՔՈՅՐՆ Է՝ ԴԱՒԹՆ:

Հրատ. Գրիմեցի, 34, Բժշկյանց, 80, Զալալյանց, Ա, 78, «Կռունկ», 38, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆթարյան, Հաղբատ, 185:

Անսովոր է ննջեցյալի տապանաքարի նման ձևակերպումը, այս դեպքում խոսքը վերաբերում է Միջին Արևելքում անառարկելի հեղինակություն վայելող պետական-քաղաքական ռազմական գործիչներին, որոնց քույր լինելը պարծանք էր:

Սակայն Դոփը արտակարգ կարողություններով օժտված կին էր՝ ամուսինը Խաչենի Հասան իշխանի և այնքան հանրաճանաչ, որ նրա տոհմը իր մահից հետո կոչվեց Դոփյան: Բայց, չնայած սրան, հավերժական հանգրվան ստացավ ոչ թե իր կալվածք Սոդք-Ծարում, այլ հորանց տանը՝ Հաղբատում: Ե՞րբ է կնքել իր մահկանացուն այս խիզախ, մեծատոհմիկ իշխանուհին՝ պարզված չէ: Հայտնի է սակայն, որ 1225 թ. նա կառուցել է Խաթրավանքի (Խաղարա վանք) գավիթը՝ երբ դեռ կենդանի էր իր եղբայր Իվանեն:

Ցավոք, չի գնահատվել միջնադարյան հայ կնոջ դերը ազգային պատմության հոլովույթում, որոնցից մեկն է ոտնատակին պառկած այս համեստ սալատապանի ներքո հանգչող Սարգիս ամիրսպասալարի դուստր մեծահամբավ Դոփը:

[36] *Կիրակոս Գանձակեցի*, էջ 99:

Նախորդ տապանագրում հանդես եկող Հովհաննես եպիսկոպոսը Դոփի և Հասանի որդին է:

306. ԺԱՄԱՏՈՒՆ. նախորդի աջ կողքին, 1 տող.

ԳՐԻԳՈՐԱՄԻՐԱ ԳՐԻԳՈՐ ԱՄԻՐԱ:

Հրատ. Ղրիմեցի, 34, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 79, «Կռունկ», 38, Երզնկյանց, 22, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆադարյան, Հաղբատ, 185:

307. ԺԱՄԱՏՈՒՆ. նույն շարքի հարավային մասում, Աբաս թագավորի տապանաքարի մոտ, 1 տող.

ԿԱՎԹԷԼ ԿԱՎԹԷԼ:

Հրատ. Ղրիմեցի, 34, Բժշկյանց, 79, «Կռունկ», 38, Երզնկյանց, 22, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆադարյան, Հաղբատ, 185:

308. ԺԱՄԱՏՈՒՆ. նախորդի աջ կողքին, 1 տող.

ԹԱՅԻԿ ԹԱՅԻԿ

Հրատ. Ղրիմեցի, 34, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 87, «Կռունկ», 38, Երզնկյանց, 22, «Ազգ. հանդ.», VII-VII 401, Դաֆադարյան, Հաղբատ, 186:

309. ԺԱՄԱՏՈՒՆ. հարավային կողմի դուրս շեշտված մասի հատակին, 1 տող.

ՓՈՒՐԹՈՒԽԱՆ ՓՈՒՐԹՈՒԽԱՆ:

Հրատ. Ղրիմեցի, 34, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 79, «Կռունկ», 38, Երզնկյանց, 22, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆադարյան, Հաղբատ, 186:

Ծանոթ. Նրա՝ քրոջ գերեզմանի վրա եղբայր Դավիթը 1189 թ. խորան է կառուցել:

310. ԺԱՄԱՏՈՒՆ. նույն տեղում, նախորդի աջ կողքին, 1 տող.

ՎԱՍԱԿ ՎԱՍԱԿ:

Հրատ. Ղրիմեցի, 33, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 79, «Կռունկ», 38, Երզնկյանց, 22, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆադարյան, Հաղբատ, 186:

Ծանոթ. Տապանատունը կառուցել է իր որդի Դավիթը 1189 թ. (Կ. Դ.):

311. ԺԱՄԱՏՈՒՆ. Փուրթուխանի տապանաքարի արևմտյան կողմում, նույն գավթի հարավային դուռս շեշտված մասում, 2 տող.

ՍՄԲԱՄՈՐԴ ՍՄԲԱՏ, ՈՐԴ-
ԻՈՒՔԱՆԱՎ Ի ՈՒԲԱՆԱ:

Հրատ. Դրիմեցի, 34, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 79, «Կռունկ», 38, Երզնկյանց, 23, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆթարյան, Հաղբատ, 186:

Ծանոթ. Եռախորան խաչքարերից մեկի 1211 թ. արձանագրության հաղորդմամբ՝ Սմբատը Նաջմադինի հայրն է:

312. ԺԱՄԱՏՈՒՆ. կենտրոնական մասում, տապանաքարերի երրորդ շարքի հյուսիսային կողմում, 1 տող.

ՍԵՒԱԴԱՅ ՍԵՒԱԴԱՅ

Հրատ. Դրիմեցի 34, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 78, «Կռունկ», 38, Երզնկյանց, 23, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆթարյան, Հաղբատ, 187:

Ծանոթ. Դեսումյան տոհմից է, Հասանի որդին և Խաթունի եղբայրը (Կ. Դ.):

313. ԺԱՄԱՏՈՒՆ. Նույն շարքում, նախորդի հարավային կողքին, 1 տող (ԺԳ դ.).

ՍՄԲԱՄ ՍՄԲԱՏ:

Հրատ. Դրիմեցի, 35, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 78, «Կռունկ», 38, Կ. Դաֆթարյան, Հաղբատ, 187:

314. ԺԱՄԱՏՈՒՆ. Նախորդի հարավային կողքին, 1 տող (ԺԳ դ.).

ԽՈՍՏՐՈՎԻԿ ԽՈՍՏՐՈՎԻԿ:

Հրատ. Դրիմեցի, 35, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 78, «Կռունկ», 38, Երզնկյանց, 22, Դաֆթարյան, Հաղբատ, 187:

315. ԺԱՄԱՏՈՒՆ. Նախորդի հարավային կողմում, անգիր տապանաքարի կողքին, 3 տող, (ԺԳ դ.).

ՍԻՆԱՔԵՐԻՄ ՍԻՆԱՔԵՐԻՄ,
ԹՈՒՆԱՎԳԱՆ Թ[Ո]ՒՆ ԱՎԱԳ ԱԵՆԱ-
ՔԵՐԻՄ ՔԵՐԻՄԱ:

Հրատ. Դրիմեցի, 34, Բժշկյանց, 80, «Կռունկ», 38, Երզնկյանց, 23, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆթարյան, Հաղբատ, 187:

Ծանոթ. Հասան Դեսումյանի որդին է, Խաթունի եղբայրը:

316. ԺԱՄԱՏՈՒՆ. Նախորդի հարավային կողքին, 1 տող (ԺԳ դ.).

ՔՈՒՐԴԱՄԻՐԱ ՔՈՒՐԴ ԱՄԻՐԱ:

Հրատ. Ղրիմեցի, 34, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 79, «Կռունկ», 38, Երզնկյանց, 22, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆադարյան, Հաղբատ, 188:

Ծանոթ. «Այս Քուրդ ամիրան ավագ Սադունի հայրն է և Կայանի ու Մահկանաբերդի իշխանը» (Կ. Ղ.):

317. ԺԱՄԱՏՈՒՆ. Նախորդի հարավային կողքին, 1 տող (ԺԳ դ.).

ԴԱՒԻԹ ԴԱՒԻԹ:

Հրատ. Ղրիմեցի, 34, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 79, Կռունկ», 38, Երզնկյանց, 22, «Ազգ. հանդ.», II-VII, 400, Դաֆադարյան, Հաղբատ, 188:

318. ԺԱՄԱՏՈՒՆ. Նախորդի հարավային կողքին, 1 տող (ԺԳ դ.).

ՀԱՄՋԵ ՀԱՄՋԵ:

Հրատ. Ղրիմեցի, 34, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 79, «Կռունկ», 38, Երզնկյանց, 22, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆադարյան, Հաղբատ, 188:

Ծանոթ. Վերջին տառը թերմշակ է:

319. ԺԱՄԱՏՈՒՆ. 4-րդ և 3-րդ շարքերի մեջտեղը, 1 տող (ԺԳ դ.).

ԽԱՒՌԱՍ ԽԱՒՌԱՍ:

Հրատ. Ղրիմեցի, 34, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 78, «Կռունկ», 38, Երզնկյանց, 22, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆադարյան, Հաղբատ, 188:

Ծանոթ. Հաջորդի հետ թաղված է նույն գերեզմանաքարի տակ: Սալատապանն ակոսներով բաժանված է երկու մասի:

320. ԺԱՄԱՏՈՒՆ. Նույն գերեզմանաքարի վրա, 1 տող (ԺԳ դ.).

ՀԱՍԱՆ ՀԱՍԱՆ:

Հրատ. Ղրիմեցի, 35, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 78, «Կռունկ», 38, Երզնկյանց, 22, Ազգ. հանդ., VII-VII, 401, Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, 188:

Ծանոթ. Քանի որ Խաւռասն ու Հասանը թաղված են նույն գբում, կարելի է մտածել, որ մահացել (կամ սպանվել) են միաժամանակ և մերձավորներ կամ եղբայրներ են (Կ. Ղ.):

321. ԺԱՄԱՏՈՒՆ. Նույն շարքի մեջ, գավթի կենտրոնին մոտ, 2 տող.

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՍ ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ
ՍԱԹՈՒՆԻՆ ՍԱԹՈՒՆԻՆ:

Հրատ. Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 79, «Կռունկ», 38, Երզնկյանց, 23, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆադարյան, Հաղբատ, 189:

Ծանոթ. Կ. Դաֆադարյանի կարծիքով, «Սադունը (Սաթուն) ավագ Սադունի թոռն է և Շերբարիքի որդին: Մահկանաբերդի մեծ իշխանն էր և Հաղբատի տերն ու հովանավորը: Խութլուբուղայի հայրն է. սրա պատկերն ամբողջ հասակով որմնանկարված է եղել Ս. Նշան եկեղեցու մեջ հարավային պատին. այժմ քայքայված է և հազիվ նշմարելի»: Հարևակից է որդու՝ համեմատաբար լավ պահպանված Խութլուբուղայի որմնանկարին:

322. ԺԱՄԱՏՈՒՆ. արևմտյան վերջին շարքի հյուսիսային ծայրին, անգիր տապանաքարի կողքին, 2 տող (ԺԳ դ.).

ՏԷՐԳՐԻԳՈՐԷՍ ՏԷՐ ԳԻՐԳՈՐԷՍ-
Ի ԵՂԲԱՅՐՆ Ի ԵՂԲԱՅՐՆ:

Հրատ. Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 79, «Կռունկ», 37, Երզնկյանց, 22, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆադարյան, Հաղբատ, 189:

Ծանոթ. Տապանագրում հանգուցյալի փոխարեն նշված է Զաքարյանների ազգական Գրիգորիսի եղբոր անունը, որը դասվում է *հավերժ ծածկագրության* շարքը:

323. ԺԱՄԱՏՈՒՆ. Նախորդի հարավային կողքին, 1 տող (ԺԳ դ.).

ՌՈՒՍՈՒՔԱՆ ՌՈՒՍՈՒՔԱՆ:

Հրատ. Դրիմեցի, 33, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 79, «Կռունկ», 38, Երզնկյանց, 22, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆադարյան, Հաղբատ, 190:

324. ԺԱՄԱՏՈՒՆ. Նախորդի հարավային կողքին, 1 տող. (ԺԳ դ.).

ՆՈՒՍԹԻ ՆՈՒՍԹԻ:

Հրատ. Դրիմեցի, 34, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 79, «Կռունկ», 38, Երզնկյանց, 22, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆադարյան, Հաղբատ, 190:

325. ԺԱՄԱՏՈՒՆ. արևմտյան մուտքի մոտ, նախորդի հարավային կողքին, 1 տող (ԺԳ դ.).

ՍԱՍՆԱՅ ՍԱՍՆԱՅ:

Հրատ. Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 79, «Կռունկ», 38, Երզնկյանց, 22, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆադարյան, Հաղբատ, 190:

Ծանոթ. Սասնան որդին է Ասլանափուի, իսկ Ռուսուքանը՝ Սասնայի կինը: Այդ արձանագրությունը թվագրված է 1242 թ., հետևապես մահացել են դրանից հետո:

326. ԺԱՄԱՏՈՒՆ. Նախորդի հարավային կողքին, 1 տող.

ՆԱՆԱՅ ՆԱՆԱՅ:

Հրատ. Ղրիմեցի, 35, Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 79, «Կռունկ», 38, Երզնկյանց, 23, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆթարյան, Հաղբատ, 190:

Ծանոթ. Գուցե և սա է Աբաս թագավորի կինը, Սանահնի կամրջի կառուցողը և ոչ թե Վանենին:

327. ԺԱՄԱՏՈՒՆ. Նախորդից դեպի հարավ, նույն շարքում, 4 տող.

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՄ
ՓԻԼԻՊՈՍԱՅՐՀ
ԵՊՍՅԱՌԸ
ՆՀԷՑԻ

ԱՅՍ է ՀԱՆԳԻՍՏ
ՓԻԼԻՊՈՍ ԱՅՐՀ
ԵՊ[Ի]ՍԿՈՊՈՍ] ՅԱՌԸ-
ՆՀԷՑԻ:

Հրատ. Բժշկյանց, 80, Ջալալյանց, Ա, 79, «Կռունկ», 37, Երզնկյանց, 22-23, «Ազգ. հանդ.», VII-VII, 401, Դաֆթարյան, Հաղբատ, 191:

Ծանոթ. Կ. Դաֆթարյանն այս տապանագիրը թվագրում է ԺՁ դարով: Գուցե թե նույն անձն է, որը 1498 թ. Հաղբատում ընդօրինակած «Մաշտոց»-ի հիշատակարանում ինքնանվաստացմամբ իրեն կոչում է «... զնուաստ ոգի զ*Փիլիպոս* եպիսկոպոս՝ սակաւ աշխատող տառիս» (ԺԵ դ. հայ. ձեռ. հիշ., մ. Գ, էջ 261):

328. ԺԱՄԱՏՈՒՆ. սալատապան, 1 տող.

ԽԱ, ՈՒ Ն ԽԱ[Թ]ՈՒՆ:

Ծանոթ. Դեսումյանց Հասան իշխանի դուստրը, Սենեքերիմի և Սևադայի քույրը, Խաթունաշեն Ս. Աստվածածին եկեղեցին կառուցողը, խաչենցի, Գագի, Տավուշի, Գարդմանի, Տերունականի տեր Զաքարիայի կինը:

329. ԺԱՄԱՏՈՒՆ. սալատապան, 1 տող (ԺԳ դ. կեսեր).

ՍԱԹՆ ՍԱԹՆ:

Ծանոթ. Սմբատի թոռը, Արտավազի որդին, Խորիշահի ամուսինը, որը ժամատան մի արձանագրության համաձայն, նվիրատվություն է արել վանքին և 6 պատարագաժամ ստացել:

330. ԺԱՄԱՏՈՒՆ. Նույն տեղում, 1 տող.

ԵՄԵՏՐԻԹԱՀՈԳՅՈՆ, ԵՍ Ե ՏԻՐԻԹԱ ՀՈԳՅՈՆ:

Ծանոթ. Լուսանկարում մենք կարդացինք հետևյալ տառակապակցությունը.

ԵՄԵՏՐԻԹԱՀՈԳՅՈՆ, որը, թերևս կարելի է վերծանել [Դ]ԵՄԵՏՐԻ ԹԱ[ԳԱՒՈՐԻ] ՀՈԳՅՈՆ: ԹԱ տառերի վրա ուրվագծվում է պատիվ նշանը, անմեկնաբանելի է վերջին բառը (խմբ.):

331. ՓՈՔՐ ԳԱՎԻԹ. հյուսիսային պատին, ներքուստ, 5 տող (ԺԳ դ.).

ԿԱՄԱՆԱՅ ՊԱՏՐՈՆԱԼՓԱԵՒՐԴԻՆԻՒՐԴԱՒԹ
ՄԵԾՅՈՒՍՈՎՄԲԱՆԵՑԱՆՄԲՈՒԽՍԻՍ ՀԱՂԲԱՏԱ։ ԵՒ
ՄԵՔՐՅՈՎՍ ԼՐՄԱԲԵ ԷԱՐՑՍ ՍԻՐՈՎԸՆԿԱԼԱՔ ԵԻՏՈՒ
ԱՔՆՈՑԱՊԱՏՐԱԳ ՁՏԱՒՆԵԿԵՂԵՑՈՒՐԾՈՂԱԿԱԹԱՍ
ՁԱՄԷՆԵԿԵՂԵՑԻՔՍ ԿԱՏԱՐԻՉՔՆԱՒՐՀՆԻՆՅԱՅ

ԿԱՍԱՒՆ ԱՅ, ՊԱՏՐՈՆ ԱԼՓԱՒ ԵՒ ՈՐԴԻՆ ԻՒՐ ԴԱՒԻԹ,
ՄԵԾ ՅՈՒՍՈՎ ՄԻԱԲԱՆԵՑԱՆ ՄԲ ՈՒԽՏԻՍ ՀԱՂԲԱՏԱ։ ԵՒ
ՄԵՔ՝ ՏՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ, ԼՐՄԱՄԲ ԵՂԲԱՐՑՍ, ՍԻՐՈՎ ԸՆԿԱԼԱՔ ԵՒ ՏՈՒ-
ԱՔ ՆՈՑԱ ՊԱՏԱՐԱԳ ՁՏԱՒՆՆ ԵԿԵՂԵՑՈ, ՈՐ ՇՈՂԱԿԱԹԻ ԱՍԻ,
ՁԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ։ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ։

Հրատ. Ջալալյանց, Ա. 67, Երզնկյանց, 46, Դաֆադարյան, Հաղբատ, 191։

Ծանոթ. Ալփաւ եզակի անուն է, մնում է չբացատրված։ Անձնանունը *Ալափէ* ձևով հանդիպում է Իջևան քաղաքի հարավակողմի մատուռի 1286 թ. արձանագրության մեջ։ Այս դեպքում պետք է լիներ *Ալափան։* Պատրոն մեծարումը վկայում է Ալփաի մեծատոհմիկ լինելու հանգամանքը։

332. ՓՈՔՐ ԳԱՎԻԹ. նախորդի տակին, 4 տող.

ՅՈՒՍՈՎՆԱՅՄԲԱՆԵՑԱՒՄԲՆՇԱՒՍՀԱՂԲԱՏԱ։ ՇԱՀԸՆՇԱՀԵՒ ԵՏ
ԱՐԴԻՒՆՍԸՍՏԻԻՐՈՒՄ ԿԱՐԻԵՒԼԵԲՐՅՎԷՍԵՒՄԱԲՔՍՍԱՀՄԱԵՑԱՔ
Ա։ ՊԱՏԱՐԱԳՅԱՄԷՆՏԱԻ ԻՍ ՍԻՆԻՍՐԲՈՅՆԱԹԱԱՍԻԿԱՏԱՐԻՉՔՆԱՒՐՀՆ
ԻՆՅԱՅԱՅԼԵՒ ԸՍՏ ՅՈՒՍՈՅՆՐԱՏՎԱՔՏԵԼՓԵՒԵՋԱՒ ԴՈՒԵԿԵԷՑՈՅՍ

ՅՈՒՍՈՎՆ ԱՅ ՄԻԱԲԱՆԵՑԱՒ ՄԲ ՆՇԱՆԻՍ ՀԱՂԲԱՏԱ ՇԱՀԸՆՇԱՀ ԵՒ ԵՏ
ԱՐԴԻՒՆՍ ԸՍՏ ԻՒՐՈՒՄ ԿԱՐԻ։ ԵՒ ՄԵՔ՝ ՏՐ Յ[Ո]Վ[Հ]ԱՆՆ[Է]Ս ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀ-
ՄԱՆԵՑԱՔ
Ա։ (1) ՊԱՏԱՐԱԳ ՅԱՄԷՆ ՏԱՐԻ [Ի] ՏԱՒՆԻ ՍՐԲՈՅՆ ԱԹԱՆԱՍԻ։ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆ-
ԻՆ ՅԱՅ։ ԱՅԼ ՈՒ ԸՍՏ ՅՈՒՍՈՅ ՆՈՐԱ ՏՎԱՔ ՏԵՂ Ի ԳԵՐԵԶՄԱՆԻ [Ի] ԴՐԱՆ ԵԿԵՂԵ
ՑՈՅՍ։

Հրատ. Ջալալյանց, Ա. 67, Երզնկյանց, 46, ՎՏ. 232, Դաֆադարյան, Հաղբատ, 192։

Ծանոթ. Կ. Դաֆադարյանն իրավացիորեն նկատել է, որ «Այստեղ հիշատակվող *Շահընշահը* Զաքարյանների կամ որևէ այլ իշխանական տոհմից չէ, որովհետև այդ մասին

ոչ մի հիշատակություն չկա արձանագրության մեջ և իշխանական որևէ տիտղոս չունի: *Շահնշահ* տիտղոսը 13-րդ դարում դարձել էր արական անձնանուն՝ հեռանալով իր նախնական իմաստից»:

333. ՓՈՔՐ ԳԱՎԻԹ. Համազասպի մուտքի կամարին և ճակատին, 7 տող (ԺԳ դ.).



ՅՈՒՍՈՎ[Ն] ՅԱՅ ԵՒ Ի ՍԲ ՆՇԱՆ[Ի]Ս ՀԱՂԲԱՏԱՅ, ՄԵՔ՝ Գ (3) ԵՂԲԱՐՔ ՍԻԱՆԴԱՐՍ ԵՒ ԱՒՀԱՆԴԱՐՍ, ԵՒ ԻՍ[Ա]-
ԲԱԼՍ, ՄԻԱՅԲԱՆԵՑԱՔ ԵՒ ՏՈՒԱՔ ԸՆՇԱՅ ԸՍՏ ՄԵՐՈՒՄ ԿԱՐԻ: ԵՒ ՏՐ ՅՈՎԱՆՆԷՍ, ԵՒ ՄԻԱ-
ԲԱՆՔՍ, ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ԵՒ ԷՏՈՒՆ
ՄԵՋ Ե (5) ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ԹԷՈԴՈՍԻ ԹԱԳԱՒՈՐԻ:
ՈՐՉԱՓ ՄԵՔ ԿԵՆԴԱՆԻ ԵՆՔ՝ ՄԵՐ ՇՆՈՂԱՑՆ ԱՌՆԵՆ՝ ԳՐԻԳՈՐՈ
ԵՒ ՍԱԹՈՒԹԻՆ, ԵՒ ՅԵՏ ՄԵՐ ԵԼԻՑ ՅԱՇԽԱՐՀԷՍ՝ :Գ: (3)՝ ՄԵՋ,
ԵՒ :Բ: (2)՝ ՆՈՑԱ: ԿԱՏԱՐՈՂՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ:

Հրատ. Զալալյանց, Ա, 68, Երզնկյանց, 46-47, ՎՏ, 232, Դաֆադարյան, Հաղբատ, 192-193:

Ծանոթ. Անսովոր են եղբայրների անունները: Կ. Դաֆադարյանը նկատել էր, որ *Աւհանդար* անվան մեջ առկա է Օհան անունը: *Դարը* իբրև առանձին անուն չի հանդիպում, եթե նկատի չունենանք Դարա ձևը (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Եր., 1944, էջ 20): Անվանը հավելված *դար* վերջնամասը նույնպես պարսկական ծագում ունի և հանդիպում է տարբեր անունների հետ (նույն տեղում, էջ 124, 388): Հ. Աճառյանն առաջարկում է *Միանդարի* փոխարեն *Սքանդար* անունը (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, էջ 492):

Տեղադրումը մնում է տարակուսելի. քանի որ Համազասպի ժամատան միակ մուտքը բացվում է արևմուտքից և կապ չունի Փոքր Գավթի հետ:

Սկզբում, ՅՈՒՍՈՎ բառից հետո, ըստ լուսանկարի, որոշակիորեն փորագրված է ՅԱԾ, ՅԱ-ն պատիվ նշանի տակ (Խմբ.):

334. ԱՄԵՆԱՓԱՐԿԻՉ ԽԱՉՔԱՐ. Փոքր Գավթում, կողքին, 16 տող.

ԹՎԻ ՉԻԲ	Ի թվականին Չիբ (1273),
ՅԻՇԽԱՆ	Յիշխան-
ՈՒԹԵՒ	ութե[ա]ն եւ ի
ՄԻՐՈՒԹ	տերութե[ան] ՍԲ
ՈՒԽՍԱՓԱ	ուխտիս աթաբ-
ԱԿ ԱՄԻՐ	ակ, ամիրսպա-
ՍԱԼԱՐ	սալար պար-
ՊՈՆ ՍԱՂ	ոն սաղո-
ՈՒՆԻՆ	ունին, եմ՝ ՏՐ
ԵՄ՝ ՏՐ	Յովանէս,
ՅՈՎԱՆԷՍ	Կանգնեցի Չխ-
ԿԱՆԳՆԵՑԻ	աշս ամենափրկի-
ՉԽԱՇՍ	չ աւգնական պարո-
ԱՄԵՆԱՓՐԿԻ	ն սաղունին եւ Յ-
ՉԱՒԳՆԱԿԱՆ	իշատակ հոգ-
ՊԱՐՈՆ	ոյգոյ իմոն:
ՍԱՂՈՒՆԻՆ	
ԵՒ Յ-	
ԻՇԱՏԱԿ	
ՀՈԳՈՅ	
ԻՄՈՆ	

Հրատ. Դրիմեցի, 45, Բժշկյանց, 78, Ջալալյանց, Ա, 71, «Կոունկ», 36, Երգնկյանց, 43-44, «Ազգ. հանդ.», VII-VII, 406, ԿՏ, 115, Հովսեփյան, Նյութեր, Բ, 68, Դաֆդարյան, Հաղբատ, 193-194:

Ծանոթ. «Յիշխանութեան և ի տերութեան սբ ուխտիս» արտահայտությունը վկայում է, որ Հաղբատավանքը ևս եղել է աթաբակ և ամիրսպասալար Սաղունի տիրապետության ներքո և ապահովաբար կրել է նրա բարձր հովանավորությունը: Հաղբատի Ամենափրկիչը նույնանուն հուշարձանների թվում առաջինն է, որի վրա պատկերված են Հիսուսի խաչելությունն ու ավետարանական այն անձինք, որոնք առնչվում են խաչից իջեցման պատկերագրությանը: Նույն Սաղունի պատվերով կանգնեցված Աշտարակի Ծակ Խաչը (1268 թ.) ևս հավակնում է խաչելության իմաստին, սակայն այս դեպքում այն դեռևս ներկայացուցչական չէ:

335. ԱՄՆԵԱՓԱՐԿԻՉ. Խաչքար. թիկունքին, 18 տող.

ՇՆՈՐՀԱՒՔ	Շնորհաւք ՍԲ Երրորդութեն եւ ողո-
ՍԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵՆ	րմութ[եամ]ք ՍԲ Նշանիւ, եմ՝ ՏՐ Յովանէս,
ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹ	Նուաստ ծառայս ծառայն ԱՅ Շինեցի
[ԵԱՄ]Ք ՍԲ	զգաւրթս, զգրատունս եւ զսրահ նորի-
ՆՇԱՆԻՒ, ԵՄ՝	ն. աճի զպաղատս, զլիճն եւ եռոր կազմե-
ՏՐ ՅՈՎԱՆԷՍ,	լ զմեծաճախ պահարանն ուրդաշորո ՍԲ Ն-
ՆՈՒԱՍՏ	շանին, գնեցի զգեղն բաւլա եւ ընծաեցի
ԾԱՌԱՅՍ	ՍԲ Նշ[ան]ին, կանգնեցի զխաշս վ[ա]ն[ն]արեւ-
ԾԱՌԱՅՆ	ատութե[ան] աթաբակ, ամիրսպասալար պար-
ԱՅ ՇԻՆԵՑԻ	ոն սաղունին եւ զաւակաց նորա եւ Յիշ-
ԶԳԱՒԹՍ	ատակ անանց ինչ, եւ ծնողաց իմոց
ԶԳՐԱՏՈՒՆՍ	
ԵՒ ԶՍՐԱՀ	
ՆՈՐԻՆ	
ԱՃԻ	
ԶՊԱՂԱՏՍ	
ԶԼԻՃՆ	
ԵՒ ԵՏՈՒ	
ԿԱԶՄԵԼ	
ԶՄԵԾԱՃԱԽ	
ՊԱՀԱՐԱՆՆ	
ՈՒՐԴԱՇՈՐՈ	
ՍԲ ՆՇԱՆԻՆ	
ԳՆԵՑԻ	
ԶԳԵՂՆ	
ԲԱՒԼԱ	
ԵՒ ԸՆԾԱԵՑԻ	
ՍԲ ՆՇ[ԱՆ]ԻՆ	
ԿԱՆԳՆԵՑԻ	
ԶԽԱՇՍ	
Վ[Ա]Ն[Ն]ԱՐԵՒ-	
ԱՏՈՒԹԵ[ԱՆ]	
ԱԹԱԲԱԿ	
ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ	
ՊԱՐՈՆ	
ՍԱՂՈՒՆԻՆ	
ԵՒ ԶԱՒԱԿԱՑ	
ՆՈՐԱ	
ԵՒ ՅԻՇԱՏԱԿ	
ԱՆԱՆՑ	
ԻՆՉ,	
ԵՒ ԾՆՈՂԱՑ	
ԻՄՈՑ	

ԵՒ ԵՂԲԱՐՑ, ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՈՐԴՈ ԻՄՈ ՍԱՐ-
ԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ: ԱՅԼ ԵՒ ՍԱՀԱՍԵ-
ՑԻ ԾԱՌԶԱՐԴԱՐԻՆ ԻՐԻՑ ԱՐԱՐԱՑ-
Ն Բ̄ (2) ՍՊԻՏԱԿ ՅԵՐԷՑՆ ՏԱԼ: ԵՒ ՄԻԱԲ-
ԱՆՔՍ ԷՏՈՒՆ ՄԵԶ ՁԱՏԿԻՆ Ճ-
ՐԱԳԱԼՈՅՑՆ ԶԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ
ՊԱՏԱՐԱԳԵԼ: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆ[ԻՆ]:

Հրատ. Ղրիմեցի, 45, Ջալալյանց, Ա, 70, Երզնկյանց, 47, ՎՏ, 115, Հովսեփյան, Նյութեր, Բ, 67-68, Ղաֆադարյան, Հաղբատ, 194:

Ծանոթ. Գավիթը և գրատունը, կառուցված լինելով ավելի վաղ, ակնհայտորեն նորոգվել են, սակայն ***սրահը, պաղատը*** (պալատ) և ***լիճն*** կառուցվել են Յովանէսի օրոք:

Եթե սրահ բառը հասկանանք ճարտարապետական իմաստով, ապա այդ պետք է լինի Ա. Նշան եկեղեցու արևելյան կողմի միջանցքը: Ինչ վերաբերում է պալատին, այն աշխարհիկ շինություն է, որը չի պահպանվել: Անհայտ է մնում նաև լիճը: Կ. Ղաֆադարյանը ***պահարանն Ուրդածորո*** հնարավոր է համարում կարդալ նաև ***պահարան Նուրդածորո***, սակայն ճիշտ է համարում առաջինը: Այս տեղանունը Գ. Հովսեփյանը ընթերցել է ***Բրդածոր*** (Նյութեր, Բ, 71):

Այս արձանագրությունն աննշան տարբերություններով փորագրված է նաև այլ խաչքարի վրա, որը Կ. Ղաֆադարյանի կարծիքով, փոքր-ինչ ավելի հին է:

336. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԽԱՉՔԱՐ. պատվանդանի վրա, 10 տող.



ԿԱՄԱՒՆ Ա̅Յ̅ [ԵՍ]՝ ՎԱՐԴԱՊԵՏՍ ՍԱՐԳԻՍ, ԱՊԱ
ԵՍ՝ ԱԽԱՏԷԼՍ ՈՒ ՌՈՒՋՈՒՔԱՆ ՀԱՒՐԱՔՈՅՐ, ՁՄ-
ԵՐ ՀԱՅՐԵՆԻ ԱՅԳԻՔՆ ԵՒ ԶԳՆՈՒԱԾՆ ԶՊԱՊ
[ԱՅ] ԱՅԳԻՆ, ԵՒ ԶՋԵՒՉԱՆՑ ՏՈՒՆՆ ԵՒ ԶՂԱՒԹԻ ՔԻՐԵՆՑ ՀԱ-
ՅՐԵՆԱՒՔՆ Ի ԿԱՑՈՑԻՆ Մ̅Բ̅ ՆՇԱՆԻՍ, ԸՆԾԱԵՑԱՒ
Ի ԳՐԱՏՈՒՆՍ: Տ̅Ր̅ ՅՈՎ[ՀԱՆՆ]ԷՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԷՏՈՒՆ: Ա̅: (1)
ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԲԱՐԴՈՂԻՄԷՈ-
ՍԻՆ ԶԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ: ՄԵՐ ԿԵՆԴԱՆՈՒԹԵ[ԱՆ] ՄԵՐ ՀԱՒ-
ՐՆ ԱՌՆԵՆ ԵՒ ՅԵՏ ՄԵՐ ԵԼԻՑ՝ ՄԵԶ: ԿԱՏԱՐՈՂՔՆ ԱՒՐՀ-
ՆԻՆ Յ̅Ա̅Յ̅:

Հրատ. Ղրիմեցի, 18, Երզնկյանց, 47, Ղաֆադարյան, Հաղբատ, 196:

Ծանոթ. Կ. Դաֆթաղարյանն *Սխատէլ* անձնանունը կասկածելի է համարում, բայց միանգամայն հարազատ է մնացել բնագրին: 3-4-րդ տողերի *զՊապանց այգին եւ Զեւչանց տունն եւ զԴաւթի քիրենց հայրենաւքն, ի կացոցին սբ նշանիս* կարևոր հատվածը տարակույսներ է հարուցել: Նրա կարծիքով՝ *պարզ չէ ի կացոցին սբ նշանիս:*

ՉՊապայ այգին (Պապից հետո գիր չկա և *այ* առաջին բառի վերջին ու հաջորդի սկզբի վանկն է), *եւ զՉեւչանց տունն եւ զԴաւթի քիրենց հայրենաւքն ի կացոցին սբ նշանիս,* այսինքն Պապայից գնած այգին, Զեւչանց տունն ու Դավթի քիրանց հայրենիքը (սեփականությունները) տվեցին, հատկացրին (=կացուցին) *սբ* Նշան եկեղեցուն:

ԱՍԵՆԱՓՐԿԻՉ ԽԱՉՔԱՐ. երեսին, քանդակների մեջ:

337. Քիվին, ուռուցիկ գրերով, 1 տող.



ՀԱՄԲԱՐՁԱՒ ԱԾ ԱՒՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՏՐ ՄԵՐ ՁԱՅՆԻՒ ՓՈՂՈՅ:

338. Հրեշտակների գլխին, սրբոց պատկերների մեջ, փորագիր, 2 տող.

ԱՒՐՀՆԵԱԼ ԵՆ ՓԱՌՔ ՏՆ Ի
ՏԵՂՒՈՋ ԻՒՐՈՒՄ

339. Խաչեցյալի գլխավերևի տախտակին, ելնդատառ, 2 տող.

ՍԱՅ Է ԹԱԳԱՒ
ՈՐ ՀՐԷԻՑ:

340. Խաչեցյալի լուսապսակի գլխին, խորագիր, 1 տող.

ՅՍ ՔՍ:

341. Տախտակի եզրակողերին, ուռուցիկ գրերով, 3 տող.

ՍԲ ՍԲ.
ՍԲ ՏՐ
ՁԱՐՈՒԹԵԱՆՑ:

342. Խաչի հորիզոնական թևերին, փորագիր, 4 տող.

ՁԵՌՔ, ՈՐ ՁԵ
ՐԿԻՆՍ ԱՐԱՐԻՆ, ՏԱՐԱԾԵՑԵ
Ր Ի ԽԱՉ
ԻՍ:

343. Քրիստոսի պարեգոտից ցած, խաչի կոթառին, փորագիր, 7 տող, կիսաշրջանի կամարին, ուռուցիկ, 9 տող.

ՍԲ ԱՕ
ՍԲ ԵԻ
ՀՁ-
ԱՒՐ, ՍԲ ԵԻ ԱՆՄԱՀ, ՈՐ
ԽԱՉԵՑԱՐ, ՈՂՈՐ-
ՄԵԱ ՏՐ ՅՈՎԱՆՆ-
ԻԱ-
ԻՆ, ՍՏԱՑՈՂԻ ՍՄԱ:
ԱՄԷՆ:

Հրատ. Ղրիմեցի, 46, Երզնկյանց, 42-43, «Ազգ. հանդ.», VII-VII, 406, Հովսեփյան, Նյութեր, Բ, 71-72, Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, 203-204:

Ծանոթ. Կ. Ղաֆադարյանի մենագրությունում «Ամենափրկչի» ճակատի մակագրությունները տրված են առաջին գրքի այլ էջերում, հիմնական արձանագրություններից անջատ:

Նպատակահարմար գտնվեց դրանք ի մի բերել, միատեղել, իբրև միմյանց շարունակություն, թեև այդ մակագրություններից ամեն մեկը առանձին իմաստ ու նշանակություն ունի:

Այս և մնացած «Ամենափրկիչ» խաչքարերի մանրակրկիտ ուսումնասիրությունը կատարել է խորագիտակ Գարեգին Հովսեփյանը (տե՛ս նրա «Հաւուց թառի Ամենափրկիչը եւ նոյնսնուն յուշարձաններ հայ արուեստի մէջ», Երուսաղէմ, 1937, աշխատությունը): Խաչքարի բարդ պատկերագրությունն արված է բուսական ու երկրաչափական զարդահենքի վրա, խաչակոթունի տակ շրջանակված Գողգոթան է՝ Ադամի գլխով, կենտրոնում խաչեցյալ Տերն է, որի թևերի տակ Մարիամ Աստվածածինն ու Հովհաննեսն են, իսկ նրանց տակ Հովսեփ Արիմաթացին և ունելիով Հիսուսի ոտքերից բևեռը քաշող Նիկոդիմոսը: Նիստերին վեցական ֆիգուրներ են՝ 12 առաքյալները: Քրիստոսից վեր արևի և լուսնի պատկերներն են շրջապատված հրեշտակներով ու սրբերով, իսկ ավելի վեր համբարձման շքեղ տեսարանն է, որն ամբողջացնում է Հիսուսի ողջ պատումը:

Քրիստոսի համբարձման տեսարանի գլխին գրված է Դավթի Սաղմոսների 46-րդ գլխի 6-րդ նախադասությունը, որի բնագիրն է. «Աստուած բարձրացաւ օրհնութեամբ, եւ մեր Տէրը՝ շեփորի ձայնով»:

Հաջորդ միտքը վերջինն է Եզեկիելի Մարգարեության 9 գլխի 12-րդ պարբերությունից, որի բնագիրն է. «Օրհնեալ է Տիրոջ փառքը՝ իր բնակատեղիում»: Այնուհետև գալիս են Պիղատոսի հեգնանքները, ըստ Հովհան Ավետարանիչի (Գլ. ԺԹ, 19), ուր ասված է, թե Հիսուսին Գողգոթայում խաչելուց հետո «Պիղատոսը մի տախտակ էլ գրեց, եւ խաչի վերայ դրաւ. եւ գրած էր. ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ»: Կ. Դաֆադարյանի ասելով՝ «մնացածներն աղոթքներ են պատարագի արարողությունից և այլ տեղերից, երբեմն որոշ փոփոխություններով»:

344. ՓՈՔՐ ԳԱՎԻԹ. մատուռների արևմտյան պատին, 14 տող.



Ի ԹՎԻՍ ՉԻԹ (1280) ՅԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՂԻՅ-
Ս ՍԱՂՈՒՆԻՆ, ԵՍ՝ ՊԱՇԱՇ, ՈՐԴԻ ԼԻՊԱՐՏԻ ԵՒ
ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԴՈՒՂԱ, ՅԱՋԳԷ ՄԱՍԻԿՈՆԵՆՑ,
ԱՒԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ ՆՇԱՆԻՍ, ՀԱՂԲԱՏԱ ԵՒ
ԶՍԲ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՉԻՆ, ՈՐ ՎԿԱՍԷՔ ՍՏՈ-
ՅԳ ՆՈՐԱ ՃԿՈՅԹԱՆ ԱՌ ՄԵԶ ԷՐ ՆԵԽՆԵԻՔ,
ԶԱՅՆ Ի ԽՆԴՐՈ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԵՒ ՍԲ ՄԻԱԲԱՆ-
ԱՑԱ ԸՆՉԱԵՑԱՔ Ի ՍԲ ԿԱԹՈՂԻԿԷՍ ԵՒ ԱՅԼ ԱՐԴԻՒ-
ՆԱ: ՏՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ
ՏԱՒՆ ՍԲ ԳՐԻԳՈՐԻ ՃԱԿԱՍՏԻՆ ՇԱԲԱԹ ԱՒՐՆ
ԵՒ ԶՇԱԲԱԹ ԵՒ ԶԿԻՐԱԿԷՆ ԶԱՄԷՆ ԵԿԵՂԵ-
ՑԵՑԱՆ ՊԱՏԱՐԱԳՆ ՄԵԶ ԱՌՆԵՆ: ԵՒ ԷՏՈՒՆ
ՄԵԶ ՏՈՒՆ ԵՒ ԱՅԳԻ ԶԻՆՉ ԷԼ ՄԻԱԲԱՆԻ:
ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ:

Հրատ. Դրիմեցի. 17. Բժշկյանց. 79. «Կռունկ». 37. Զալասյանց. Ա. 71. Երզնկյանց. 40. «Արարատ». 1887. 31. Brosset. Discription. 17. 66. Դաֆադարյան. Հաղբատ. 197-198. Ոսկյան. Գվ. 315-316:

Ծանոթ. Ինչպես վկայված է, Պաճաճն ու Դուդա Մամիկոնյանը անվանապես միաբանում են Հաղբատավանքի Ս. Նշանին և Ս. Գրիգորին (վերջինս փոքր բազիլիկ եկեղեցի է Մեծ ժամատան հարավային կողմում՝ կառուցված 1025 թ.) և Գրիգոր Լուսավորչի ճկույթը, որ *առ մեզ էր նախնեալք* ընծայում են Կաթողիկեին (Ս. Նշանին): Այս մեծագույն նվիրատվության առթիվ տեր Հովհաննես խաչենցին ու միաբանությունը նվիրատուների համար *սահմանեցին տաւն սբ. Գրիգորի ծակամտին շաբաթն աւրն եւ զշաբաթն եւ զկիրակէն զամէն եկեղեցեացս պատարագն մեզ առնեն:*

Հարկ է նշել, որ այս շատ կարևոր նախադասության իմաստը ճիշտ չի բացահայտվել, և եզրակացությունները մնում են վիճարկելի: Նախ, որ Կ. Դաֆադարյանը հակված է *ծակումուտն* այս դեպքում ևս վերագրել Գրիգոր Լուսավորչին Խոր Վիրապ գցելու օրվա

ծեսին: Սակայն այստեղ ևս խոսքը վերաբերում է *:Ծ: ակամտին (=յիսունակամտին)* (Ս. Ավագյան, ՀԱԲ, 224-227): Դա հայ եկեղեցու նշանավոր հանդիսություններից է, որը կոչվում է *յինունք, հինունք, հիսունք. հիսուն օր*, որն ընկնում է Զատկից մինչև Հոգեգալստյան 50-օրյա ժամանակը (տես Մաղաքիա արք. Օրմանյան. Ծիսական բառարան, Եր., 1993, էջ 31): Ուրեմն Պաճաճի և Դուդայի համար սահմանված պատարագաժամերը պետք է կատարվեն՝ *հիսունակամտին* (:Ծ: ակամտին), Տերունական այս տոների սկզբում, Նոր Կիրակեի (կամ Կրկնազատկի)՝ Քրիստոսի հարության օրվա նախաշեմին Ս. Գրիգոր եկեղեցում *(տաւն սբ Գրիգորի ծակամտին շաբաթն աւրն)* և շաբաթ ու կիրակի օրերը՝ բոլոր եկեղեցիներում: Այս դեպքում ինքնին վերանում է 11-րդ տողի *եւ զշաբաթն* գրչի սխալ ու կրկնություն համարելու հետևությունը:

Տարակույսները փարատելու համար տրվում է Ս. Ավագյանի առաջարկած վերծանությունը՝ *Տէր Հովհաննէս եւ միաբանքս սահմանեցին տաւն Սուրբ Գրիգորի յիսնակամտին շաբաթն աւրն, եւ զշաբաթն եւ զկիրակէն՝ զամէն եկեղեցեացս պատարագն մեզ առնեն:*

345. ՏԱՊԱՆԱՔԱՐ. փոքր գավթում, նախորդ արձանագրության տակ, 3 տող.

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՄԲԱ
ԵՊԱՃՄԻՇ՝ԱԻՊԱԾ
ԱԾԻՆ

ԱՅՍ է ՀԱՆԳԻՍՏ ԲԱՐ-
ԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԻ՝ ՊԱՃ-
ԱՃԻՆ:

Հրատ. Դրիմեցի, 17, Երզնկյան, 40, Դաֆադարյան, Հաղբատ, 198:

Ծանոթ. Նախորդ արձանագրությունից արդեն գիտենք, որ Պաճաճը Լիպարիտի որդին էր և Մամիկոնյանների փեսան: Այստեղ տրվում է ևս մի տեղեկություն, որ Պաճաճը եղել է իշխան:

346. ՓՈՔՐ ԳԱՎԻԹ. զույգ մատուռներից ձախակողմյանի ճակատին, սև ներկով, 8 տող.



[Շ]ՆՈՐՀԻ[Ն ԱՅ...ՄԻ]ա[ԲԱՆԵՑԱ]Ք [ՍԲ]
[ՈՒԽՏԻՍ]Հ[ԱՂԲԱՏԱ]. . . ԵՒ . . .
. . . ԻՔ . . . ԸՍՏ ԿԱՐԻ ՄԵՐՈՒՄ
ԸՆՃԱԵՑԱՔ [ԱՐԴԻՒՆՍ Ի ՍԲ ՆՇԱՆ]Ս ԵՒ ՄԻԱԲԱ-
ՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑ[ԻՆ ՄԵՋ ՊԱՏԱՐ]ԱԳ Ի ՏԱՒՆԻ

ՅՈՀԱՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ[Ն, ՈՐՉԱՓ[ԿԵՆԴԱՆԻ
ԵՆՔ՝ ՄԵՐ ՃՆՈՂԱՑՆ ԱՌՆԵՆ ՈՒ ՅԵՏ ՄԵՐ ԵԼԻՑ՝ ՄԵՋ
Յ[ԱՆԽԱՓ]ԱՆ,, ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ:

Հրատ. Ղալայանց, Ա, 71, Երզնկյանց, 40, ԿՏ, 234, Դաֆադարյան, Հաղբատ,199:

347. ԽԱՉՔԱՐ. բեկոր փոքր գավթի ներսում, 1 տող.

ՍԸԺԶ թուի[ն ԵԺԶ (1067):

Հրատ. Դաֆադարյան, Հաղբատ, 199:

348. ՓՈՔՐ ԳԱՎԻԹ. արևմտյան պատին, ներսից, 7 տող.

ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱԲՈՒԻՄ՝ԻՍ՝ԳԱԳԱՄ, Մ՝Ն ՅՈՎԱՆՆԻՍԻ
ԵՍԳԱԳԱԹՈՌ՝ՀԱՍԱՍՊԵՆՆՑ ՁՄԵՐ ՊԱՊԱՆՑՆ ՅԻՇԱՏԱԿ
ՈՐՁԱՄԽԱՉԵՐՆ՝ՄՈՒԵԷՆ ՈՒՁԻՄ՝ՀԱՐՆ՝ՄԱԲԱՆՈՒԹԻՆ՝ԱՐՁԱՆ
ԴՐՈՎ՝ՀԱՍՏԱՏԵՑԻՄ՝ՆԵՒ՝ԱՌԱՔՍՍԱ՝ՀՄՆԵՑԻՆԵՁՊԱՄՈՅՅՈՒԵՆԻ
ԱԵՄԵԱՑԱՇԱՑՆԻՆՁԱԷՆԵԿԵՂԵ ՑԻՔՍՈՐ ՁԱՓԱԲՔԿԵՆԴԱՆԻԵՆՔՍԵՐ
ՃՆՂԱՑՆԱՌՆԵՆԵՒ՝ ՅԵՄՄԵՐԵԼ՝ ՅՄԵՁՊԱՄՄԻՆԿԱՄԱՐԵԼԵ
ԽՈՐ՝Ի ՇԱՀԻԿԱՄԵՑՈՂՔԽՆԴՐՈՅՍԱԲՐՈԷՐՈՒՆՅԱՅ

Ի ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ[ԱՆ] ՄԲ ՈՒԽՏԻՍ ՀԱՂԲԱՏԱ ՏՆ ՅՈՎԱՆՆԻՍԻ,
ԵՍ՝ ԳԱԳԱ, ԹՈՌՆ ՀԱՍԱՋԱՍՊԵԱՆՑ, ՁՄԵՐ ՊԱՊԱՆՑՆ ՅԻՇԱՏԱԿ,
ՈՐ ՁՇԱՏԱԽԱՉԵՐՆ ՏՈՒԵԼ ԻՆ ՈՒ ՁԻՄ ՀԱՒՐՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻ[Ա]Ն ԱՐՁԱՆԱ-
ԳՐՈՎ ՀԱՍՏԱՏԵՑԻ: ՏՐ Ս ԵՒ ՄԻԱԲԱՆՔԱ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ՄԵՋ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆ[Ի]
ԱՒԵՏԵԱՑ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԻՆ ՁԱՄԵՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ: ՈՐՉԱՓ ՄԵՔ ԿԵՆԴԱՆԻ ԵՆՔ՝ ՄԵՐ
ՃՆՈՂԱՑՆ ԱՌՆԵՆ, ԵՒ ՅԵՏ ՄԵՐ ԵԼԻՑ՝ ՄԵՋ ՊԱՐՏԻՆ ԿԱՏԱՐԵԼ Ե[Ի]
ԽՈՐԻՇԱՀԻ: ԿԱՄԵՑՈՂՔ ԽՆԴՐՈՅՍ ՄԵՐՈ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ:

Հրատ. Ղալայանց, Ա, 69-70, Երզնկյանց, 46, ԿՏ, 235, Դաֆադարյան, Հաղբատ, 200:

Ծանոթ. Չի պարզվում՝ *Շատախաչերը* բնակավա՞յր է, թե՞ հողամաս: 3-րդ տողի *տուել ին* հյուսիսային Հայաստանին միանգամայն բնորոշ բարբառային արտահայտչաձև է (տվել էին):

349. ՓՈՔՐ ԳԱՎԻԹ. նախորդի տակին, 4 տող.

ԱՅԵՒԻԱՆԷԻ[illegible]ՔԱՂԱՔԱՑԱԵԾՅՈՒՍՈՎԵԿ՝,
ԱՆՍ ՀԱՂԲԱՏԱ ԵՒ ԸՆԾԱԵՑԸՍՓՍԿ ՄԻԵՄ՝Ր
ԱՍ ՊԵՒԻԲԱԲԱՆՔԱԷՄՈՒՆՈՒՆ ՁԷ՝ՊԱՄԱՑՍՄԱՆ
ՊԵՄ՝ՐՈՒՏԵՒԼԵՒՍ՝ԸՍԷՐՔԿԱՄԱԵՆԱՒՀԵՆ ՅԱՅ

[ԿԱՄԱՒՆ] ԱՅ ԵՍ՝ ԻՒԱՆԵ Ա[ՒԱԳ] ՔԱՂԱՔԱՑԻ, ՄԵԾ ՅՈՒՍՈՎ ԵԿՑ[Ի]
[Ի ՄԲ Վ]ԱՆՍ ՀԱՂԲԱՏԱ ԵՒ ԸՆԾԱԵՑԻ ԸՍՏ ԻՄ ԿԱՐԻ. ԵՒ ՏՐ [ՀԱՄ]-

[ԱՉ]ԱՍՊ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԷՏՈՒՆ ԻՆՉ : Գ : (3) ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆ[Ի]
[Ն] ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ԱԲԻՍՈՂՈՄԱ: ՈՐՔ ԿԱՏԱՐԵՆ՝ ԱՒՐՀՆԻՒՆ ՅԱՅ :

Հրատ. Զալալյանց, Ա, 70. Երզնկյանց, 46, Ղաֆադարյան, Հաղբատ, 200:

Ծանոթ. ***Աւագ քաղաքացի*** արտահայտությունը Կ. Ղաֆադարյանը մեկնում է՝ «Տփխիսի ավագների խորհրդի անդամ»: Այս ***Իվանե ավագ քաղաքացին*** և իր կին Վարդենին, համաձայն Ս. Նշանի հյուսիսային պատի կամարի վրա փորագրված արձանագրության, մի այլ առիթով շատ արդյունքներ են տվել սուրբ ուխտին: Այդ դեպքում Կ. Ղաֆադարյանը *աւագ*-ը համարում է «Իւանէի պատվո տիտղոսը» (Հաղբատ, էջ 147): Առաջին տողի *եկցի* հարկ է կարդալ *եկեսցի:*

350. ՓՈՔՐ ԳԱՎԻԹ. զույգ մատուռներից հարավայինի մուտքի կողքին, 5 տող.



ԵՍ՝ ՎԱՉԷ. Ի ՅԱԶԳԷ ՏՐ . . .[ԲԱՐ]
ԵԽԱՒՍ ՄԵՋ ԵՒ ՁԱՒԱԿԱՑ ՍՈՑԱ . . .[Ի ԹԱԳԱՒՈՐ-]
ՈՒԹԵԱՆՍ ԳՈՒՐԳԵՆԱ ԵՒ ԳԱԳԿԱ [ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԲ ՈՒԽՏ-]
ԻՍ ՀԱՒՐ ՅՈՎՍԷՓԱ: ԱՐԴ, ԱՂԱՉԵՄ . . .
Ն ԱՄԵՆԵՑՈՒՆ ՈՂՈՐՄԵՍՑԻ. . .:

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 199:

Ծանոթ. Առաջին տողի *Ես՝ Վաչէ, ի յազգե* վերծանությունը պայմանական է, այդ հատվածի տառաշարքը մնացել է անորոշ՝ *ՈՒԱՈՉԷԻ յազգէ* ..., որի իմաստն անհասկանալի է: Կ. Ղաֆադարյանը ժամանակը համարում է մինչև Գագիկ Ա թագավորի մահը (1020 թ.):

Քիչ հավանական է, թեկուզ պայմանական, X դարի սկզբի համար վերականգնել Վաչէ անունը: Կ. Ղաֆադարյանը թվագրման համար մատնանշում է նաև հայր Հովսեփի հիշատակությամբ Հաղբատի 1008 թ. արձանագրությունը (284) (խմբ.):

351. ՓՈՔՐ ԳԱՎԻԹ. նախորդի մոտ, լուսամուտի գլխին, 7 տող (ԺԳ դ.).



...[ԱՅՍ]ՍԵՐ ԳԻՐ Է ՏՆ ՀԱՄԱՁԱՍՊԱ ԵՒ
[ՄԻԱԲԱՆ ԵՂԲԱՐՑ, ՈՐ Տ]ՈՒԱՔ ԱՐՔԱՌԻՆ ԱԱՐԳԱՒ, ՈՐ ԵԿՆ Ե[Ր]-
[ԿՐՊԱԳՈՒԹԵՒՆ ՄԲ ՆՇ]ԱՆԻՍ ԵՒ ՄԻԱԲԱՆԵՑԱՒ: ԵՒ ՄԵՔ ՏՈՒ-
[ԱՔ ԵԱՍ ՄԲ ՅԱ]ԿՈԲԱ ՏԱՒՆԻՆ ՁԺԱԱՆ
[ՁԱՄԵՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ]ԱՆԽԱՓԱՆ: ԿԱՏԱՐ-
[ԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ Յ]ԱՅ,
[ԽԱՓԱՆՈՂՔՆ ՈՐ]ՈՇԻՆ Ի ՏԷ:

Հրատ. Դաֆադարյան, Հաղբատ, 201:

Ծանոթ. Արքաուն մականունը բարարական ծագում ունի: Այդպես նրանք անվանում էին քրիստոնյաներին (Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. Ա, 347):

352. Նախորդի տակին, 5 տող.



ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՍ՝ ՄԵՂՈՒՑԵԱԼ ԱՂԱԽԻՆ ՔԻ [ԱՐ]ՔԱԹ-
Ի՝ ԱՊԱՒԻՆԵՑԱ Ի ՄԲ ՈՒԽՏՍ ՀԱՂԲԱՏ ԵՒ ԵՏՈՒ :Ծ: (50)
ԴԱՀԵԿԱՆ ԸՆԾԱ ՄԲ ՆՇԱՆԻՍ: ԵՒ ՏՐ ՀԱՄԱՁԱ-
ՍՊ, ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ, ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ԻՆՁ Ա (1) ՊԱՏԱՐ-
ԱԳ Ի ՏԱՒՆԻՆ ԹԵԿՂԻ: ՈՎ ՁԻՄ ՅՈՅՍՍ ԽԱՓԱՆԻ՝ ԴԱՏԻ ՅԱՅ:

Հրատ. Ջալալյանց. Ա. 69. Երզնկյանց. 45-46. ԿՏ. 253. Դաֆադարյան. Հաղբատ. 201:

Ծանոթ. Նվիրատուի անունը Կ. Դաֆադարյանը համարում է անվերծանելի: Արքաթ անունը Ս. Ավագյանի կարծիքով, առաջ է եկել Արքաութիւն անվան համառոտագրությունից, տարածված է եղել ԺԲ-ԺԳ դարերում և գործածվել հավասարապես արական և իգական նշանակությամբ: Տվյալ դեպքում անվիճելիորեն կնոջ անուն է, քանի որ նվիրատուն իրեն անվանում է աղախին Քի (ՎԱԲ, 34-36): *Թեկղին (Թեկղեայ)* Պողոս Առաքյալի աշակերտուհին, առաջին վկայուհին է:

353. Փոքր գավթի արևելյան մուտքի գլխին, ներսում, 8 տող.



Ի թվիս ՉԺԶ (1267):
ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅ, ՄԽԻԹԱՐ Ք-
ԱՀԱՆԱ, ՈՐԴԻ ԱՒՇԻՆԻՆ, ՍՆՈՒՑԱՇ ՏՐ
ՅՈՎ[ԱՆՆԷՍԻ, ԵՏ ԱՐԴԻՒՆՍ Ի ՇԻՆՈՒԹԵ[ԱՆ] ՍՐԱՀԱՅԱՐԿ
Ի ԴՌԱՆ ԿԱԹՈՂԻԿԷԻՍ: ԵՒ ՄԵՔ՝ ՏՐ ՅՈՎԱՆՆԷՍ,
ԿԱՄԱԿՑՈՒԹԵ[ԱՄԲ] ԵՂԲԱՐՑՍ, ՍԱՀՄԱՆԵՑԱՔ Բ (2) ՊԱՏ-
ԱՐԱԳ ԲԱԽՏԱՒՈՐԻՆ Ի ՏԱՒՆԻՆ ՊԱՐԱՒՄԷԻ: ԿԱՏԱՐԻՉՔՆ
ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ:

Հրատ. Դրիմեցի, 17, Չալալյանց, Ա, 72, Երզնկյանց, 41, ՎՏ, 111, 155, Ղաֆադարյան, Հաղբատ, 202:

Ծանոթ. Կ. Ղաֆադարյանը գրում է. *«Սրահայարկ ի դռան կաթողիկէիս* կոչվել է այն շենքը, որ այժմ փոքր գավիթ ենք անվանում: Ճիշտը, իհարկե, հին անունն է, որովհետև նա գավթի ձև չունի, այլ մի սրահ է ... առաջ է եկել Համազասպի կառույցի և Կաթողիկե եկեղեցու արանքում եղած տարածությունը ծածկով փակելուց»:

354. *ՏԱՊԱՆԱՔԱՐ*. փոքր գավթում, 5 տող.

ԹՎ	Թվ[ԻՍ]
ՊԽԴ	ՊԽԴ (1395):
ԱՅՍ Է ՀԱՆԳԻ-	ԱՅՍ Է ՀԱՆԳԻ-
ՍՏ ՏՐ ՅՈՀԱՆՆԻՍ-	ՍՏ ՏՐ ՅՈՀԱՆՆԻՍ-
Ի	Ի:

Հրատ. Չալալյանց, Ա, 79, Երզնկյանց, 44, ՎՏ, 170, Ղաֆադարյան, Հաղբատ, 202:

Ծանոթ. Կ. Ղաֆադարյանի կարծիքով, Հովհաննեսը եղել է վանքի առաջնորդներից մեկը, իսկ Չալալյանցը նրան համարում է քահանա:

355. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Նախորդի կողքին. 1 տող (ԺԴ դ.).

ԱԲԼՀԱՍԱՆ ԱԲԼՀԱՍԱՆ:

Հրատ. Ղալայյանց, Ա, 79, Երգնկյանց, 44, «Ազգ. հանդ.», 401, ԿՏ, 170, Ղաֆադարյան, Հաղբատ, 203:

356. ՓՈՔՐ ԳԱՎԻԹ. Ներսում, հյուսիսային պատի ստորին մասում, մանր գրերով, 3 տող (ԺԳ-ԺԳ դդ.).

ԿԱՍԱՒՆ ԱՅ ԵՍ՝ ՄԻԹԱՇԷ ՍԱՆԱՀՆՈՒ, :Բ: (2) ՀՈ-
Ղ ԳՆԵՑԻ, ՏՎԻ ՍԲ ՆՇԱՆԻՆ ՎԱԽՄ:
ԱՒԵՏԱՑ Ա (1) ՊԱՏԱՐԱՔ ԻՄ Է ՀՈԳՈՅՆ ԵՒ ԱՄՈՒՆ:

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 203:

Ծանոթ. Կ. Ղևֆադարյանի մոտ մնացել է անվերծանելի վերջին ՀԳՆԵԱՄՈՒՆ տառաշարքը: Նա մտորել է. «Գուցե այդտեղ իր ամուսնու (*ամու(ս)ն(ոյ)*) անունն է, որ չենք կարողացել կարդալ և կամ պետք է կարդալ *Ի ՄԵՀ(Ե)Գ(Ա)Ն ամսուն (ի մեհեկան ամսոյն)*, դժվար է որոշակի ասել»: Իհարկե, նման հեռագնա ենթադրությունների հարկ չկա: Նախ որ ավետման տոնը կատարվում է ապրիլի 7-ին, և ապա տառաշարքի սկզբի *իգն* տառերի վրա դրված է ընդգծված պատվի նշան և այն համառոտված է, իսկ վերջին մասը բավականին պարզ է, ու այդ տողն ամբողջովին վերծանվում է. ԱՒԵՏԵԱՑ ՏԱՒՆԻՆ Ա. ՊԱՏԱՐԱՔ ԻՄ ԷՀՈԳՈՅՆ ԵՒ ԱՄՈՒՆ:

Ինչպես մի շարք վայրերում (Այունիք, Արցախ), այնպես էլ Հյուսիսային Հայաստանում (նաև վրացահայերը) *ամի* են կոչում հորեղբորը, մոտ ազգական տղամարդուն: Երբեմն այն փոխարինում է իսկական անվանը: Այսպիսով, Միքաշէ Սանահնեցին երկու հող է գնել և տվել Ս. Նշանին *վախմ* (նվիրել իբր կալվածք), որի դիմաց իր և Ամիի (հորեղբոր) համար ստացել է հայտնության՝ Գաբրիել հրեշտակապետի կողմից Մարիամին բերած ավետիսի տոնին մեկ պատարագաժամ:

Միքաշէն ևս վերանայելի է:

357. Ամենափոքրիկ խաչքարի ետևին գտնվող մատուռի հյուսիսային պատին, դրսից. 7 տող (ԺԳ դ.).

. . . . . .
. . . . . .
ԱՐ . . . . . ԱՐ . . . .
ՇԱՀԱՆ . . . . . ԱՐ ՇԱՀԱՆ՝ ՇԱՀ՝ . . . . ԱՐ-
ԱՆՍՈՍ . . . . . ԽՏ ԱՆՍ ՈՍ . . . . ԽՏ
ԱՑՆՆ . . . . . ԻՉ ԱՑՆ . . . . . ՀԿԱՏԱՐ ԻՉ-
Ք . . . . . Ք . . . . . .

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 205:

Ծանոթ. Արձանագրությունը գրեթե ամբողջությամբ հողմահարված է:

358. ՓՈՔՐ ԳԱՎԻԹ. արևմտյան պատին, դրսից, 8 տող.



ՉԼԷ (1288)
ԹՎԻՍ,
ՍԻՐՈՎՆ ԱՅ, ՄԻԱԲԱՆԵՑԱՆ ԱԲ ՈՒԽՏԻՍ ՀԱՂԲԱՏԱՅ ԱՒԱԳԵՐԷՑՆ ՏՓԽԵԼԱՅՑ
ՏԵՐՏԼԷՅՐՆ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՒՐ ՆԱԶՄԵԼԻՔ, ՀԱՆԴԵՐՁ ՈՐԴՈՎՔ ԻՒՐԵԼԱՆՑ ԵՒ ԵՏ-
ՈՒՆ ԸՆԾԱՅ ԱԲ ՆՇԱՆԻՍ. ԽԱՉ ՄԻ ԱՐԾԱԹԻ ԵՒ ԵՐԿՈՒ ՆԱՓՈՐՏ, ԵՒ :Լ: (30) ԴԱՀԵ-
ԿԱՆ: ԵՒ
ՄԵՔ՝ ՏՐ ՅՈՎԱՆԷՍ, ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ, ՍԱՀՄԱՆԵՑԱՔ ՆՈՅԱ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ
ՍՐԲՈՅ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՅՆ՝ ԳԱԲՐԻԷԼԻ ԵՒ ՄԻՔԱԷԼԻ ԶԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԱՆ-
ԽԱՓԱՆ:
ԵՒ ԶՏԵՂԻ ԱՌԱՋԻ ԳՐԻՍ ՇԻՐԻՄ Ի ԽՆԴՐՈՅ ՍՐԲԱԶԱՆ ՎԱՐԴԱՊԼԵՏԻՆ ՍՈՍԹԷ-
ՆԻՍԻ:ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ:

Հրատ. Ղրիմեցի, 30-31, Զալալյանց, Ա, 64-65, Երզնկյանց, 32, ԿՏ, 233, Դաֆթարյան, Հաղբատ, 205:

Ծանոթ. Թփղիսի ավագերեց Տերտերը քաղաքական ակտիվ գործիչ է եղել: Վարդան Արևելցին վկայում է, որ 1264 թ. Հուլավու խանի մոտ ուղևորված պատվիրակության կազմում ուղեկցել է իրեն (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 5, Եր., 1962, էջ 145.1):

359. ՓՈՔՐ ԳԱՎԻԹ. հյուսիսային պատին, դրսից, 5 տող (ԺԳ դ.).



ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ՝ ԴԵՂՈՒԿՍ, ՅՈՎԱՆԻՍԻ ՈՐԴԻՍ ԼՈՌԵՑԻ,
ՈՐ ԵՏՈՒԻ Ի ԱԲ ՈՒԽՏՍ ՀԱՂԲԱՏԱ ԶԻՄ ԿՈՒՂՊԱԿՆ Ի ԶԱ
ՀԷՂԲԲԵՆ ԳՆԱԾ: ԵՒ ՏՐ ՀԱՍԱԶԱՍՊ, ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ, ԵՏ-

ՈՒՆ ԻՆՁ Ի ՏԱԻՆԻ ԲԱՐՍՂԻ :Գ: (3) ՊԱՏԱՐԱԳ: ԿԱՏԱՐ-
ԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՒ ՅԱՅ ԵՒ ԽԱՓԱՆՈՂՔՆ [ՊԱՏԻՆ Ի ՏԷ]:

Հրատ. Ջալալյանց, Ս, 67, ԿՏ, 232, Ղաֆադարյան, Հաղբատ, 206:

Ծանոթ. Առաջին տողի սկզբի *յանուն* բառը Կ. Ղաֆադարյանի մոտ վրիպեալ դարձել է *կամաւն* (ինչպես և Ջալալյանցի գրքում): Նույն տողում *Ղեղ. Կ.* գրելով նա առաջարկել է վերականգնել *Ղեղիկս,* մինչդեռ բնագրում պարզորոշ է, առանց եղծումների՝ *Ղեղուկս* (որպիսին է և Ջալալյանցի մոտ): Երկրորդ-երրորդ տողերի *զիմ զկուղպակն իզա հեղբրեն (եղբորից) գնած* տեքստին հարազատ կապակցությունը նրա մոտ դարձել է անկանոն ու անհստակ՝ *զիմ կուղպակնի Զահէրէն գնած:*

Վերջին նախադասությունը մնացել է անավարտ (թեև տեղ կա), որն ամբողջացվում է պայմանականորեն, առավել կարճ (քարի վրա դատարկ մնացած տեղին համապատասխան) բանաձևով:

Ըստ Վ. Աբեղյանի ճշտման՝ արձանագրությունը գտնվում է ժամատան հյուսիսարևելյան մասում, դրսից:

Ս. Սաղումյանը ԶԻՄ ԿՈՒՂՊԱԿՆ բառից հետո վերծանել է ԻԶԱ ՀԷՂԲՐԷՆ ԳՆԱԾ: Նա ՀԷՂԲՐԵՆ բառում է տառից հետո Ր-ն վերծանել է կցագրված Ղ, Բ, Ր: Մեր կարծիքով, չնայած ոչ այնքան հստակ լուսանկարի (նաև Կ. Ղաֆադարյանի ու հետագայում արված գրչագրերում), տեղում միայն Ր տառն է և, թվում է թե, Ի ԶԱՀԷՐԷՆ ԳՆԱԾ՝ ավելի ճիշտ է (Զահէրը դիտարկելով որպես անձնանուն) (խմբ.):

360. ՓՈՔՐ ԳԱՎԻԹ. Նույն պատին, դրսից, 7 տող (ԺԳ դ.).

ԱՒՆԱՅԱՅՍԼ ՐԳԻ Է" ՝ ԲԱՆ ԱՒԹԷՊ ՄՈՒ ՎԼՈ
ԱԽՈՄՐՀԱՊԷԱՄԱՍԲՆԷԱՆԻՍԿԱՍՆՄԵՐՀՈԳՈՅՍԵԱԲՐՀԱԲՆ
ԶՍԲՍԱԳՍԻՆՁ ՄՆԱԷԶԱՌՆԵՆ ԱԷՆԵԿԵՂԵՑԻՔՍ:ԱԲԿԵՆԴԱՆՈՒԹԲ
ԱԲՐՀԱԲՐՆ:ԷՅԵՄԱԲԱԷԶԱՌՆԵՆԶԺՄՆԱՆԽԱՓԱՆ ՈԼԶԱՅՍԽԱՓԱ
ԷԿԱՀԱԿԱՌԱԿԻ ՅԱՅԵԻԲՆԾ ԱՆԷՍԵՅԱՄԷՆՍՐԲՈՅԱՅԱՆԻԺԱ
ԺԷՄԱԴՆԱՅՆԻԿԵՆՍԵԻՄԱՀ ԹԵԻՄԵՐ ՈՅՈՓԻՅԷԹԷ ՅԱՄԱ
ՐԱՅԿԱԵՆՈԵՅՈՒԴԱԻՄԱՍՆԱ ԿԻՅԷԵՄԵՐԱԷԶԱ ՅՆՄԵՐ

[ԿԱՄ]ԱԻՆ ԱՅ ՄԵՔ՝ ՏԻՐԱՏ[ՈՒՐ ԵՒ ՂԱՒԻ]ԹՍ ՏՈՒ[ԱՔ] . . . ԶՎԱ-
[Ր]ԱՁԱԽՈՏՈՐ ՀԱՂԲԱՏԱ ՍԲ ՆՇԱՆԻՍ ՎԱՍՆ ՄԵՐ ՀՈԳՈՅՍ ԵՒ ՄԵՐ ՀԱՒՐՆ:
ԶՍԲ ՍԱՐԳՍԻՆ ԺԱՄՆ ՄԵԶ ԱՌՆԵՆ ԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ, ՄԵՐ ԿԵՆԴԱՆՈՒԹԵ[ԱՄ]Բ
ՄԵՐ ՀԱՒՐՆ ԵՒ ՅԵՏ ՄԵՐ՝ ՄԵԶ ԱՌՆԵՆ ԶԺԱՄՆ ԱՆԽԱՓԱՆ: ՈՎ ԶԱՅՍ ԽԱՓԱ-
ՆԷ ԿԱՄ ՀԱԿԱՌԱԿԻ՝ ՅԱՅ ԵՒ Ի ՍԲ ՆՇԱՆԷՍ ԵՒ ՅԱՄԷՆ ՍՐԲՈՅ ԱՅ՝ ԱՆԻԾԱ-
Ծ Է, ՄԱՐԴՆ ԱՅՆ Ի ԿԵ[Ա]ՆՍ ԵՒ Ի ՄԱՀ[Ս], ԹԵ Ի ՄԵՐՈՅ ՈՔ ԻՅԵ, ԹԷ ՅԱԻՏԱ-
ՐԱՅ՝ ԿԱԵՆՈ ԵՒ ՅՈՒԴԱԻ ՄԱՍՆԱԿԻՑ Է ԵՒ ՄԵՐ ՄԵՂԱՅՆ ՏԷՐ:

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 206:

Ծանոթ. Արձանագրությունը վնասված է, պատված կրային շերտով: Առանձնապես տուժել է առաջին տողը, ուր եղել են նվիրատուների անունները:

Տեղում գննելով քարերի պահպանված մնացորդները՝ վերականգնում ենք որոշ բառեր ու հատվածներ *(Մեք՝ Տիրատուր եւ Դաւիթս, տուաք զՎարազախտոր* և այլն):

Վիմագրի ներկայացված վերծանության առաջին տողը խիստ հողմնահարված է, սակայն որոշ տառակապակցություններ նշմարվում են և դատելով դրանցից՝ տողի սկզբում վերականգնելի է ՅԱՆՈՒՆ բառը (վերջին Ն-ից առաջ որոշակի երևում է Ու տառը): Ա3-ից հետո կարդացվում է Ա3Ս, հետո, թերևս, Մ, մի տառատեղ հետո ՐԳԻ, մի տառատեղ հետո՝ է, ուստի հավանական ենք համարում Ա3Ս ՄԵՐ ԳԻՐ է բառակապակցությունը: Տողի վերջում ավելի հավանական է ՎՈ վերծանությունը (խմբ.):

361. ՓՈՔՐ ԳԱՎԻԹ. հյուսիսային մուտքի կիսակամար ճակատաքարին, 12 տող.



Ի թվ.ին՝ ՈՂԲ (1243):

ՇՆՈՐՀԻՒՆ Ա3 ԵՍ՝ ԴԱՒԻԹ, ԵԿԻ [Ի՝ ՍԲ ՆՇ-
ԱՆԻՍ ԱՌԱՋԻ ՈՒ ՋԻՆՉ ԻՍ ՊԱՊՆ՝ ՔՈՒՐԴՆ,
ՈՒՔԱՆԱՑ ԹՈՌՆ ՈՒ ԻՍ ՀԱՅՐՆ՝ ՈՒՔԱՆ, ՍԲ ՆՇԱՆ-
ԻՍ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԷԻՆ ՏՈՒԵԼ՝ ՀԱՍՏԱՏԵՑԻ. ՁՍՈՒՐԲ
ՍԱՐԳՍԻՆ ՄՈՒՏՔՆ, ՁԿԱԹԱՆԱՑՆ Ա3ԳԻՆ ՄԵՁՐՈՎ ԵՒ Գ (3)
ՇԻՆԱԿԱՆ, ՁԻԹԱՏՈՒ ԱՒԵՏԱՐԱՆ ԵՒ Ա3Լ ՍՊԱՍՔ ԵԿԵՂԵՑՈ:
ԵՒ ՏՐ ՀԱՄԱՁԱՍՊ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ Ձ ՍԲ ՍԱՐԳՍԻՆ ԿԻՒՐԱԿԵ-
ԻՆ ԵՒ Ձ:Բ: (2) ՇԱԲԱԹԻՆ ԺԱՄՆ ՁԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԱՆԽԱՓ-
ԱՆ ԷՏՈՒՆ ՄԵՁ ԵՒ ՁՄԵՐ ՏՈՒՆՆ: ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ ՄԵՐ Ա3Ձ-
ԳԻՍ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է ԱՌԱՋԻ Ա3, ԵՒ ՊԱՏԻ Ի ՔԷ,
ԻՍԿ ԿԱՏԱՐՈՂՔՆ՝ ԱՒՐՀՆԵՍՑԻՆ Ի ՏԷ:

Հրատ. Ղրիմեցի. 27. Ձալալյանց. Ա. 68-69. Երիցյան, 87. Երզնկյանց, 45, ՎՏ, 85, Դաֆթաղարյան, Հաղբատ, 206-207:

Ծանոթ. Կ. Դաֆթաղարյանի մեկնաբանությամբ՝ 10-րդ տողում *զմեր տունն* ասելով ուզեցել է նշել *իրենց տոհմին* և *ընտանիքին: Մեզրով՝ մազրա* արաբերեն բառից է, որ նշանակում է շրջապատ (Кавказская старина,1872 թ., էջ 87): Կարևոր է տրված հին նվերների հաստատման, նորերի ընծայաբերման, ինչպես նաև Ուքանանց տոհմագրության իմաստով:

362. ՓՈՔՐ ԳԱՎԻԹ. հյուսիսային մուտքի կամարի տակ, 13 տող.

ԵՍՍԱԼԱՄԻ Ց	ԵՍ՝ ՍԱԼԱՄԻ [Ց]
ՊԱՊՈՅՆՇԻՆԵՑԻ	ՊԱՊՈՅՆ, ՇԻՆԵԼ Ց Ի
ՍԲՆՇԱՆԻԽԱՉԿԱԼ	ՍԲ ՆՇԱՆԻ ԽԱՉԿԱ-
ԼՆՅԻՇԱՄԱԿԻՆՁ	ԼՆ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ
ԵՒԾՆԱՐԱՑԻՄՈՑ	ԵՒ ՇՆԱՐՈՒՑ ԻՄՈՑ՝
ՀԱՐՆԻՄՈՅԲԵՐՈ	ՀԱՒՐՆ ԻՄՈՅ՝ ԲԵՐՈ-
ՅԻՆՄՈՒՐՆԻՄՈՅ	ՅԻՆ, ՄՈՒՐՆ ԻՄՈՅ՝
ՇԱՄԱՆԴՈՒԽՏԻՆԵՒ	ՇԱՄԱՆԴՈՒԽՏԻՆ, ԵՒ
ԿՂԿՑԻՆԻՄՈՅԽԱ	ԿԼՈՂԱԿՑԻՆ ԻՄՈՅ՝ ԽԱ-
ՆՓՆԴԻՆԵՂԲԱՒՐՆԻ	ՆՓՆԴԻՆ, ԵՂԲԱՒՐՆ Ի-
ՄՈՅ	ՄՈՅ
ԵՒ ՈՐԴՑՆԻՄՈ	ԵՒ ՈՐԴՈՅՑՆ ԻՄՈ-
Ց ԹՈՒՑԴ	Ց: ԹՈՒԻՆ ՌՃԴ (1655):

Հրատ. Դրիմեցի, 27. Զալալյանց, Ա, 69, Երիցյան, 88, Երզնկյանց, 45, ՎՏ, 185, Դաֆթաղարյան, Հաղբատ, 207:

Ծանոթ. 3-4-րդ տողերում *շինեցի սբ Նշանի խաչկալն* ասելով պետք է հասկանալ, որ Սալամի Պապոյն շինել է եկեղեցու խորանի սեղանի վեմը, որի վրա դրվում էր մետաղական խաչը:

7-8-րդ տողերի *մուրն իմոյ Շամանդախտին* կարդացվել է Շահանդուխտին (Զալալյանցի մոտ ճիշտ է):

363. ԳՐԱՏՈՒՆ. մուտքի գլխին, 11 տող.



Թ[ՎԻՆ]: ՈՒԸ: (1172):

ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ՝ ԱՐԱՍՍ. ՈՐԴԻ ՀԱՄԱԶԱՍՊԻ, ՅԻՇԵՑԻ Զ-
ԲԱԶՈՒՄ ՅԱՆՑԱՆՍ ԻՄ ԵՒ ԵԴԻ ԶՅՈՅՍ ԻՄ Ի ԱԲ ՆՇԱՆՍ,
ԵՒ ԵԿԻ ԿՐԱՒՆԱՒՈՐԵՑԱ ԱՍՏ, ԵՒ ԵՏՈՒ ԶԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ ԱՅԳԻՆ, ՈՐ ԱՌ-
ԱՋԻ Է ԿԶԱՁՈՐՈ՝ Ի ԳՐԱՏՈՒՆՍ ՀԱՂԲԱՏԱ՝ ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՈ ԻՄՈ: ԵՒ ԵՏ-
ՈՒՆ ԻՆՁ Բ (2) ԺԱՄԱՐԱՐ Ի ՏԱՒՆԻ ՍՐ[ԲՈ]ՅՆ ԱՆՏՈՆԻ: ԱՐԴ, ՈՐ ԶԻՄ ԱՅԳԻՆ ՅԱՅՍՄ
ՏԱՆԷՍ ՀԱՆԵԼ ՋԱՆԱՅ, ԻՄՈՑ ԿԱՄ ԱՅԼ ՈՔ, ՉԿԱՅԵՆԻ ԵՒ ԶՅՈՒԴԱԻ Ն-
ՁՈՎՍՆ ԱՌՑԷ:

364. Նախորդի շարունակությունը.

ԵՒ ԵՍ՝ ԿՈՒՏՍ, ԻՄ ՀՈԳՈՅՍ ՊԱՇԱՐ ԶԻՄ ԱՅԳԻՆ ԱՅՆ ԳՐԱՏՈՒՆ ԵՏՈՒ:

365. Միացած առաջինի հետ.

ԵՍ՝ ՍԻՐԱՄԱՐԳՍ, ԶԻՄ ԱՅԳԻՆ ԵՏՈՒ:

366. Նախորդ երեք արձանագրությունների վերջին մասը.

ԵՒ ԵՍ՝ ՍԱՐԳԻՍ, ՈՐԴ-
Ի ՉԽԻՆ, ԶԻՄ ԱՅԳԻՆ ԵՏՈՒ: ՈՎ ՀԱԿ[ԱՌԱԿ]Ի ՉՎԵՐԱԳՐԵԱԼ ՆԶՈ-
ՎՍՆ ԱՌՑԷ:

Հրատ. Ղրիմեցի, 16, Երզնկյանց, 49, «Արարատ», 1887, 69-70, Brosset, Discription, 16, ԿՏ, 33, Ղաֆադարյան, Հաղբատ, 208:

Ծանոթ. Այս չորս նպաստավորագրերը, որոնք «միմյանց հետ կապ չունեցող մի քանի մարդկանց նվերներին է վերաբերվում» (Կ. Ղ.), գրվել են միաժամանակ և, չնայած որոշ ընդհանրությանը, տրվում են առանձին՝ դրանք ցայտուն դարձնելու համար: Երբեմն, եթե հատկապես ընծայի արժեքը շատ մեծ չէր, նվիրագրերը գրանցում-հավաքում էին ու հետո, միանգամից, արձանագրում պատին՝ նվիրատուներին հավաստիացնելով այդ մասին: Նման երևույթ նկատվում է այլ վանքերում ևս (Սաղմոսավանք):

Նգովքի բանաձևը գրված է առաջին՝ Արամի բաժնում և հավասարապես վերաբերում է բոլորին:

Հետաքրքիր է նաև, որ բոլոր ընծաներն այգիներ են և բոլորն էլ տրվել են գրատանը:

367. ԳՐԱՏՈՒՆ. Նավտրդից բարձր, 4 տող (ԺԳ դ).



ԿԱՍԱՒՆ ԱՅ ՄԻԱՅԲԱՆ[ԵՑԱ] ՍԲ ՆՇԱՆԻՍ [ՀԱՂԲԱՏԱ]
ԵՒ ՄԵՔ՝ ՏՐ Յ[ՈՎ]Հ[ԱՆԵ]ԷԱ, ԵՒ ՄԻԱԲԱՆ[ՔԱ], ՍԻՐՈՎ ԸՆԿԱԼԱ[Ք]
ԵՒ ՍԱՀՄԱՆԵՑԱՔ Ե (5) ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ՄԱԹ[ԷՈՍԻ]
ԱՒԵՏԱՐԱՆՉԻՆ: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՅՆԻՆ ՅԱՅ:

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 209:

Ծանոթ. Տարօրինակ է, որ ոչ նվիրատուի անունն է հիշատակված, ոչ էլ նվերը:

368. ԳՐԱՏՈՒՆ. մուտքի հարավային կողքին, 12 տող (ԺԳ դ.).



ԱՆՈ[ՒԱՄԲՆ ԱՅ ԱՅՍ]
ՄԵՐ ԳԻՐ Է ՀԱՂԲԱ[ՏԱ ԵՊԻՍ-]
ԿՈՊՈՍԻՍ ԵՒ ՄԻԱԲԱՆ[Ա-]
ՅՍ, ՈՐ ՏՈՒԱՔ ԱՍԼԱ[ՆԱ-]
ՓԻՆ, ՈՐ ԵԿՆ ԵՒ ՄԻԱԲԱՆ-
ԵՑԱՒ, ԸՍՏ ԻՒՐՈՒՄ Կ[ԱՐ]-
Ի ԸՆՉԱ ԵԲԵՐ ԵՒՍ:
Ի ՏԱՐՈՒՄՆ :Բ: (2) [ԺԱ]-
Մ ՏՈՒԱՔ ՍԲ Գ[ԷՈՐԳԻ]
Ն ՏԱՒՆ[ԻՆ]: ՈՐ ԽԱՓ-
ԱՆԷ՝ ՆՄԱ ՄԵ-
[Ղ]ԱՑՆ ՏԷՐ Է:

Հրատ. Չալալյանց. Ա. 73. Երզնկյանց. 49. Ղաֆադարյան, Հաղբատ. 209:

Ծանոթ. Նվիրատվական արձանագրություններում գերակշիռ մեծամասնությամբ սկզբում հիշատակվում է նվիրատուն կամ այն անձը, որը եկեղեցուն կամ վանքին մատուցել է ծառայություն: Արձանագրության երկրորդ մասում հանդես են գալիս հոգևոր ներկայացուցչական անձինք և վճիռ կայացնում:

Այս դեպքում խախտվում է ավանդական դրվածքը: Նվիրատուի փոխարեն սկզբից հանդես է գալիս միաբանությունը, շեշտում, որ *այս մեր գիր է Հաղբատա եպիսկոպոսին եւ միաբանցս,* այն մասին, որ նվիրատուի ընծաների դիմաց նրան տրվել է հատուցման պատարագ: Նման շարադրանքը, անշուշտ, կարող է դիտվել իբրև պատվաբեր միջոց: Ս. Ավագյանի բառաքննությամբ՝ անվան ուղիղ ձևն է *Ասլան ափա - մայր առյուծ* (ՀԱԲ, 33-34):

369. Նախորդի կողքին, 6 տող (ԺԳ դ.)



ԿԱՄԱԻՆ Ա՜Յ ԵՍ՝ ՎԱՐՀԱՄ ԿՈՒԼԱ-
ՁՆԱՆՑ, ՄԻԱԲԱՆԵՑԱ ՍՐԲՈՑ-
Ս ԵՒ ԷՏՈՒ ՁԻՄ ԳՆՈՒԱՃ ԱՅԳԻՆ, ՈՐ Ի
ԲԵՐԴԻԿ Է՝ Ի ԳՐԱՏՈՒՆ ԻՄ ՀՈԳՈՅՍ ՊԱՇ-
ԱՐ: ՏՐ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ԵՂԲԱՐՔՍ ԵՏՈՒՆ ՄԵՁ ՊԱՏԱՐԱԳ Ի-
ՏԱՒՆԻ ՍՐԲՈՑ ԱՏՈՄԵԱՆՑ ԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՍ:

Հրատ. Ղրիմեցի, 16, Ջալալյանց, Ա, 72-73, «Արձագանք», 1884, 628, Երզնկյանց, 49, ՎՏ, 234, Դաֆթարյան, Հաղբատ, 209:

Ծանոթ. Հայ իշխան Ատոմն ու իր զորագունդը կոտորվել են պարսիկների կողմից՝ քրիստոնեությունից չհրաժարվելու պատճառով՝ Ավարայրի ժամանակներում: Հայ եկեղեցին ամենամյա պատարագ է մատուցում նահատակների հիշատակին:

370. ԳՐԱՏՈՒՆ. հարավային պատին, ներքուստ, փորագիր խաչերի կողքին, 3 տող. (ժԵ դ.).



ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԼԵ՝ ԽԱՒՍ ԼԷ՝ ՓԻՐԻ-
ԱՂԻՆ ԵՒ ՔՎԵՐՆ՝ ԵԹ-
ԱՐՂՋԻՆ:

Հրատ. Դաֆթարյան, Հաղբատ, 210:

Ծանոթ. Թերևս պետք է կարդալ *եթար ղզին* (=եթար աղջկան):

371. ԳՐԱՏՈՒՆ. հյուսիսային պատին, ներքուստ, փորագիր խաչերի կողքին, փոքրատառերով, 5 տող (ժԵ-ժԶ դդ.).



ՍԲ ԽԱՉՍ
ԱՒԳՆԱԿ-
ԱՆ
ՆԱՒՌ
ՈՒՁԻՆ:

Հրատ. Դաֆթարյան, Հաղբատ, 210:

372. ՏԱՊԱՆԱՔԱՐ. գրաւոան հատակին, 1 տող (ԺԳ դ.).

ՊԱՊԱ. Պապա:

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 211:

373. ԽԱՉՔԱՐ. հենած գրաւոան հյուսիսային պատին, 3 տող.



Թվ[ին] ՉԿԸ (1519):
Սբ խաչս սրգ[նա]կ[ա]ն [է] Յովանէս-
հաբեղին:

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 211:

Ծանոթ. Կ. Ղաֆադարյանի մոտ՝ *Յովանէսին եւ Համեղին:*

374. ԳՐԱՏՈՒՆ. արևելյան պատին, խաչաքանդակի ձախ կողքին, 4 տող (ԺԶ դ.).



Սբ խաչս սրգ[նա]կ[ա]ն [է] մի-
նային
եւ հաջար-
հին:

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 211:

375. ԳՐԱՏՈՒՆ. ներսում, հարավային պատին փորագրված խաչերի մոտ, կամարի տակ, 4 տող (ԺԶ դ.).



Սբ նշանս տեր-
ունական,
խորիշին լեր
քաւարան:

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 211:

376. ԳՐԱՏՈՒՆ. նախորդի տակին, 2 տող (ԺԶ դ.).



Սբ խաչս բ[ար]եխ[ա]ս [է]
պ[ա]ր[ո]ն Ստխին:

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 211:

Ծանոթ. Անվան վերաբերյալ Կ. Ղաֆադարյանը գրում է. «Ստխ (հավանաբար Սատախ): Սատախ պարոնն անծանոթ է այլ աղբյուրներից, կարող է այդ անունը կրճատ-

ման պատճառով աղավաղված լինել»: Հարկ է նշել, որ կրճատման որևէ նշան արձանագրությունը չունի, և Ստխ-ը Սատախ կարծելու կամ առհասարակ կրճատված որևէ անուն ենթադրելու համար հիմք չկա:

377. ԳՐԱՏՈՒՆ. նախորդի մոտ, 2 տող (ԺԶ դ.).



ՅԻՇԿԷ ՄՊԻՆ ԵՒ ԾՆԱՑ ՅԻՇԱՏԱԿ է ԱՄՊԻՆ ԵՒ ԾՆԱԼԻՆԱՅ ՆՈՐԻՆ:

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 212:

378. ԳՐԱՏԱՆ ՄԻՋԱՆՑՔ. կամարակապ թաղի վրա, Հոնովարի խաչքարի մոտ, 10 տող.



[Ի] : ՉԺԱ : (1262) ԹՒԻՆ, ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹ[ԵԱՆ] ՏՆ ՅՈՎ[Ա]Ն[ԷՍԻ], ԵՍ՝ ԽԱԹՈՒՆ, ՀԱՐՍՆ ԱԿՆԵՑԻ ՎԱՉԷԻ, ԱՄՈՒՍԻՆ ԳԱՐԲԱՆԱԷԼԻՆ, ՈՐԴՈՎՔ ԻՄՈ[Յ]Ս ՎԱՉԷԻ ԵՒ ԾԻԹ-ԼՈՍԱՆԱ, ԸՍՏ ԿԱՐՈՂՈՒԹԵ[ԱՆ] ԻՄՈ ՄԻԱԲԱՆԵՑԱ Ի ՍԲ ՆՇԱՆԻՍ ԵՒ ԵՏՈՒ : Ը : ԵՁ[Ն: ՄԻՆՉ ՄԵՔ] ԿԵՆԴԱՆԻ ԵՆՔ, ՁՈՐ ԱՕ ՏԱ, ԱՅԼ ԱՐՆԵՆՔ ԱՐԴ-ԻՒՆՍ: ԵՒ ՏՐ ՅՈՎԱՆԷՍ, ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ, ՀԱՍՏԱՏ-ԵՑԻՆ ՄԵՁ ՊԱՏԱՐԱԳ ՍԲ ԳՐԻԳՈՐ[Ի ՏԱՒՆԻՆ] [ՁԱՐՆԵՆ] ՅԵԿԵՂԵՑԻՔՍ: ԿԱՏԱՐԻՉՔ [ԱՒՐՀ]-[ՆԻՆ] ՅԱՅ :

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 212:

Ծանոթ. Սույն վերծանությունը էապես տարբեր է հրատարակվածից: Աշխատել ենք որքան հնարավոր է հարազատ մնալ բնագրին, սակայն այն որոշ տեղերում եղծված ու կրաքրով ողողված է, գրերի փոսորակները լցված, ուստի սպրդումներն անխուսափելի են: Պրոֆեսոր Ղաֆադարյանի մոտ 2-րդ տողն ամբողջովին բաց է մնացել, իսկ հաջորդ

երեք տողերը լրացվել են ըստ հավանականության, այլ տեքստերի նմանակմամբ: Շատ կարևոր է հատկապես երկրորդ տողի Ակնեցի Վաչէի հարսի՝ Խաթունի և որդիների «գյուղը»: Տրված եզները նկատվել էր :Լ: (30), մինչդեռ բնագրում պարզ ուրվագծվում է Ը-ի վերին կորությունը, և թվանիշը հաստատող կետերն էլ բավականին ետ են դրված: Ուրեմն գուցե բանեցնելու համար 8 եզ էր լծվում:

Տեղական իշխանական այս տոհմը քանիցս հանդես է գալիս Հաղբատի վիմագրերում՝ առատ նվիրատվություններով: Նրանք ակնեցի են, Հաղբատից ոչ հեռու Ակներ (Որնակ) գյուղից: Այս և ժամատան արձանագրությունների հիման վրա կարելի է կազմել նրանց հինգ սերնդի տոհմածառը.

Գարբանիել
Վաչե Ակնեցի
Գարբանիել (կինը Խաթուն – 1262 թ.)
Վաչե, Ծիթլովսան
Գարբանիել (կինը՝ Ցացա, 1278 թ.), տր Յովաննես
Ծիթլաւսան, Վաչե, Բավքար, Աղբերադեղ:

Դատելով անուններից, գուցե թե տոհմը ծագում է Արագածոտնի Վաչուտյաններից, որոնք սերտ կապեր ունեին Դսեղի Սամիկոնյանների հետ:

Ըստ նվիրագրերի՝ սրանք վանքին են տվել այլ ընծաների թվում Ը և ԺԶ - 8+16=24 եզ, որը բավականին մեծ թիվ է և պետք է վերագրել ոչ միայն հոգատար բարեմտությանը, այլև աշխարհիկ ազնվականությունից սեփականության անցմանը հոգևոր տոհմակիցներին՝ թաքարների ծանրագին հարկերից կամ ուղղակի ունեզրկումից խուսափելու նպատակով: Իսկ վերջին Գարբանիելի եղբայր Տեր Հովհաննեսը վանքի առաջնորդն էր, որոնք դեռևս հարկային ծանր բեռից ազատ էին:

Ըստ ոչ հստակ լուսանկարի (որից արված է գրչագիրը), չորրորդ տողի վերջում, տրամաբանորեն ճիշտ՝ ՄԻԱԲԱՆԵՑԱ-ի տեղում այլ տառախումբ է (խմբ.):

379. Գրատան միջանցքում. կամարակապ մասի վրա, 8 տող.



[ԱՆ]ՈՒԱՄԲ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՅ [ՊԱ]ՏՐՈՆ ԽԱ-
[ԹՈՒ]ՆՆ՝ ՀԱՐՍՆ ԳԱՐԲԱՆԵՑԵԱՑ, ԵՒ ՈՐԴԻՔ ԻՒՐ ՎԱ-
ՉԷ ԵՒ ԾԻԹԼԱՒՍԱՆ, ՄԻԱԲԱՆԵՑԱՆ ՀԱՂԲԱՏԱ
ԵՒ ՆՈՒԻՐԵՑԻՆ ԸՆԾԱՅՍ ՍԲ ՆՇԱՆԻՍ: ԵՒ ՄԵՔ՝

ՏՐ ՅՈՎԱՆԷՍ, ԿԱՄԱԿՑՈՒԹ[ԵԱՄ]Բ ԵՂԲԱՐՑՍ, ԱԱՀ-
ՄԱՆԵՑԱՔ ՆՈՑԱ ՁՍԲ ԳՐԻԳՈՐԻՆ ՈՒՐԲԱԹՆ
ԱՒՐՆ ՊԱՏԱՐԱԳ ԶԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ:
ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ:

Հրատ. Ղրիմեցի, 15, Երզնկյանց, 39-40, Ղաֆադարյան, Հաղբատ, 212:

Ծանոթ. Բովանդակությունը հուշում է, որ՝ այս արձանագրությունը գրվել է նախորդից առաջ, նույն անձանց անունով, սակայն այստեղ ընծաները չեն նշվում, լոկ ակնարկվում է այդ մասին (***Նուիրեցին ընծայս***), իսկ պատարագը սահմանվել է ***ՍԲ Գրիգորի ուրբաթն աւրն,*** մինչդեռ նախորդում ցուցված է նվերը՝ ***ետու :Բ: եզ,*** իսկ պատարագները՝ ***ՍԲ Գրիգորի տաւնին***՝ վճիռը թողնելով անփոփոխ:

Ուշագրավ է, սակայն, որ այստեղ Խաթունը հանդես է գալիս տիտղոսով՝ ***պատրոն*** (ազնվական, իշխանավոր) և ամուսնու տոհմանունով՝ ***հարսն Գարբանեցեաց,*** որից կարելի է եզրակացնել, որ ***Գարբանաէլի*** հոր՝ Վաչեի հոր անունը ևս Գարբանաէլ է եղել, որով ճանաչում է ստացել այս տոհմը:

Փոքր-ինչ կասկածելի է երկրորդ տողում ՀԱՐՍՆ-ից հետո ԳԱՐԲԱՆԵՑԵԱՑ բառի վերծանությունը, որը չնայած իմաստային առումով հարիր է, սակայն լուսանկարում կարդացվում է ԱՐԱԱՆԵՑԵԱՑ (ինչպես գրչագրում) (խմբ.):

380. ԳՐԱՏՈՒՆ. միջանցք, թաղակիր կամարին, 15 տող (ԺԳ դ.).

ԾՆՈՐՀԱՒՔՆԱՅ	ՇՆՈՐՀԱՒՔՆ ԱՅ,
ՊԱՏՐՈՆԽԱԹՈ	ՊԱՏՐՈՆ ԽԱԹՈ-
ԻՆՆՀԱՐՍՆ	ԻՆՆ, ՀԱՐՍՆ Գ[ԱՐԲԱՆ]-
ԵՑԵՑ ՐՈԳ	ԵՑԵՑ,[ՆՈ]ՐՈԳ[ԵՑԱԻ]
ԻԴՌԷ	Ի ԴՐՍԷ [ԳԱՒԹԻ ՏԱՆԻ]
ՍՆՄԲԱ	ՍՆ: ՄԻԱԲԱ[ՆԱՑՆ]
ՏԻՆԸՆՆԱՒՐ	ՏԻՆ :Ը: ԱՒՐԱՒԱՐ Հ-
[illegible] ՆՔՐ	ՈՂՆ Ի ԱԿԻՆ, ՔԱՐԻ [ՆՁ]-
ՈՒՂԱՆԱԴԵՂԱ	ՈՒ ՂԱՐՍԱԴՆ ԵՂԲԱՐ
ՑՍԱՀՄԱՆՑԱՔ	ՑՍ: ՍԱՀՄԱՆԵՑԱՔ
ՆՈՑԱՊԱՏՐԱԳԶՈ	ՆՈՑԱ ՊԱՏԱՐԱԳ ԶՈ
ՒՐԱՆԻՆՍ [illegible] ՅՐ	ԻՐԱՒ[Ր]Ն ՍԱՐԳՍԻ ՍԲ
ԳՐԻԳՈՐՆԶԱԷՆ	ԳՐԻԳՈՐԻՆ ԶԱՄԷՆ
ԵԿԵՂԵՑԻՔՍ ԿԱՏԱՐ	ԵԿԵՂԵՑԻՔՍ: ԿԱՏԱՐ-
ԻՉՔՆԱՒՐՀՆԻՆՅԱՅ	ԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ:

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 213:

Ծանոթ. Հոսքաջրերից մաշվել-քայքայվել է հատկապես աջաթևյան շարքը, գրերը դարձել են անընթեռնելի: Այդ է պատճառը, որ պրոֆեսոր Կ. Ղաֆադարյանը չի բացա-

հայտել պարոն Խաթունի, Վաչեի և Ծիթլառանի մոր վավերագրերի իմաստը: Սույն վերծանության լրացումը նույնպես ունի խոցելի կողմեր, և բոլոր երկմտություններն ամենևին չեն փարատվել: Պարզվում է, սակայն, որ Խաթունը հոգացել է դրսի գավթի նորոգման ծախսերը, տվել է ութ օրավար հող Ակունքից (*ի Ակին*) և Մարցի ձորում գտնվող Քարինջի (ներկայիս Լոռվա մարզի համանուն գյուղի) *դարտաղն* (գլխատունը, դարադանը):

Յոթերորդ տողում Ը տառից հետո լուսանկարում ուրվագծվում են ԼԾ տառերը (ինչպես գրչագրում), ուստի հնարավոր է կարդալ ԸԼԾԱԵՑԻ: Ընդհանրապես, մի շարք հատվածների վերծանությունը կասկածելի է վիմագրի խիստ եղծվածության պատճառով (խմբ.):

381. ԽԱՉՔԱՐ. գրաբար միջանցքում, 20 տող.

+ՇՆՈՐՀԱՒՔ ՍԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԼԱՆ ԵՒ ՈՂՈՐՄ-
ՈՒԹԵԱՍ ՔՍԲ ՆՇԱՆԻՍ, ԵՍ՝ ՏՐ ՅՈՎԱՆ-
ԷՍ, ՆՈՒԱՍՏ ԾԱՌԱ ԾԱՌԱԻՑ
ԱՅ, ՇԻՆԵՑԻ ԶԳԱՒԻԹԱՍ ԵՒ Զ-
ԳՐԱՏՈՒՆՍ ԵՒ ԶՍՐԱՀՍ ՆՈ-
ՐԻՆ, ԱԾԻ ԶՊԱՂԱՏՍ, ԶԼԻԵ-
Ն ԵՒ ԵՏՈՒ ԿԱԶՄԵԼ ՄԵԾԱԾ-
ԱԽ ՊԱՀԱՐԱՆ ՈՒՐԴԱԶՈՐՈ ՍԲ
ՆՇԱՆԻՆ. ԳՆԵՑԻ ԶԳԵՂՆ ԲԱՒԼ-
Ա ԵՒ ԸՆԾԱԵՑԻ ՍԲ ՆՇԱՆԻՍ՝
ՎԱՍՆ ԱՐԵՒՇԱՏՈՒԹԵԼԱՆ ՊԱՏՐՈՆ
ՍԱՂՈՒՆԻՆ ԵՒ ԶԱՒԱԿԱՑ ԻՒՐՈՑ,
ԵՒ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԾՆՈՂԱՑ Ի-
ՄՈՑ, ԵՒ ԵՂԲԱՐՑ ԵՒ ՍԱՐԳԻՍ Վ[ԱՐ]Դ[ԱՊԵՏ]ԻՆ
ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԱՐԴԻՒՆԱՒՈՐԱՑ: ԵՒ
ՍԱՀՄԱՆԵՑԻ ԾԱՌԶԱՐԴԱՐԻՆ ԵՐԻ-
Ց ԱՐԱՐԱՑՆ :Բ: (2) ՍՊԻՏԱԿ ՏԱՑ ԵՐ-
ԵՑՆ: ԵՒ ՄԻԱԲՆՔՍ ԵՏՈՒՆ ՄԵԶ ՁԱՏ-
ԿԻ ԵՐԱԳԱԼՈՒՑՆ ՄԵԶ ՊԱՏԱՐԱԳԵԼ՝ ԴԱՒ-
ԹԻ ԵՒ ԶԿՆԻ ԵԼԻՑ ՄԵՐՈՑ՝ ՄԵԶ ԵՒ ԴԱՒԹԻ:

Հրատ. Դրիմեցի, 24. Երզնկյանց, 44. ՎՏ, 115. Դաֆադարյան, Հաղբատ, 213-214:

Ծանոթ. Այս արձանագրությունը, չնչին տարբերություններով, փորագրվել է 1273 թ. Ամենափրկչի վրա: Կ. Դաֆադարյանի կարծիքով՝ կառուցումների ավարտման կապակցությամբ նախ կանգնեցվել է այս խաչքարը և ըստ պատշաճի արձանագրվել: Սակայն մեկ-երկու տարի անց, երբ հնարավոր է եղել ավելի հանդիսավոր նշել շինարարական մեծածախ իրադարձությունը, կանգնեցվել է Ամենափրկիչ խաչքարը, և ճոխ վավերագիրը փորագրվել վերջինիս թիկունքին:

Քանի որ գավիթը վաղուց կառուցված էր, ուստի նրա հիշատակությունը կարող է կապված լինել նորոգման աշխատանքների հետ:

382. ԽԱՉՔԱՐ. գրատան միջանցքում, շրջանակներին և Գողգոթայի ձախ անկյունում.

ԵՍ՝ ՀՈՆԱՒԱՐ, ՈՐԴԻ ՄԿԱՆՆ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻ, ԱՆԺԱ-
ՄԱՆԱԿ ԵԼԻ Ի ԿԵՆԱՑ ԵՒ ՍՈՒԳ ՄԵԾ ԹՈՂԻ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ:
ԱՐԴ, ՈՐՔ ԿԱՐՂԱՅՔ,
ՁԻՍ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՍՁԻՔ
ՆՃԲ (1023) ԹՈՒԻՆ:

Հրատ. Ղրիմեցի, 14. Բժշկյանց, 77, Ջալալյանց, Ա, 79, «Կռունկ», 37, Երզնկյանց, 39, «Ազգ. հանդ.», VII-VIII, 404, Ղաֆադարյան,Հաղբատ, 214:

Ծանոթ. Հոնաւարի և Մկան անունները Հաղբատում հանդիպում են երեք անգամ (1016 և 1027 թթ.): Չնայած թվականների մերձավորությանը, սրանք տարբեր անձինք են: Առաջին Հոնաւարը Մկան հայրն է, երկրորդը՝ Մկան որդին, իսկ երրորդը՝ Վասիլի հայրը: Երկրորդում Մուկն իրեն մեծարում է *իշխանաց իշխան* տիտղոսով:

383. ԽԱՉՔԱՐ. նախորդի կողքին, քիվին և խաչաքագին 2 տող.

✠ՔՍՈՂՐՄԻՎԱՉԷ ՅԻՒՐՈՒՄ ԳԱԼԸՍՏԵԱՆ

Ո Ծ

ՔՍ ՈՂՈՐՄԻ ՎԱՉԷԻ ՅԻՒՐՈՒՄ ԳԱԼԸՍՏԵԱՆ:
|ԹՈՒԻՆ|ՈԾ (1201):

Հրատ. Ղրիմեցի, 15, Բժշկյանց, 78, «Կռունկ», 37, Երզնկյանց, 39, Ազգ. հանդ. VII-VIII, 404, ՎՏ, 15, Ղաֆադարյան, Հաղբատ, 214:

384. ՏԱՊԱՆԱՔԱՐ. նույն խաչքարի առաջ (ԺԳ դ.).

ԾԻԹԼՈՍԱՆ ԾԻԹԼՈՍԱՆ:

Հրատ. Ղրիմեցի, 15, Երզնկյանց, 39, «Ազգ. հանդ.», VII-VIII, 401, Ղաֆադարյան, Հաղբատ, 215:

Ծանոթ. Օիթլոսանը Գարբանիելի և Խաթունի որդին է, Հաղբատին միաբանած նվիրատուներից:

385. ՏԱՊԱՆԱՔԱՐ. գրատան շեմքի առաջ, միջանցքի հատակին, 6 տող.

ԱՅՍԷ ՏԱՊԱՆ
ԳԱՅՐԱՆԱՅ
ՄԱՀԴԱՍՈՒՆ
ՈՐԷ ՅԷՐԷՎԱՆ
ՑԻԹՌՃԻ
Ե

ԱՅՍ է ՏԱՊԱՆ
ԳԱՅՐԱՆԱՅ
ՄԱՀԴԱՍՈՒՆ,
ՈՐ է ՅԷՐԷՎԱՆ-
ՑԻ ԹՎԻՆ|ՌՃԻ-
Ե (1676):

Հրատ. «Արծագանք» 1884, 628, Ղաֆադարյան, Հաղբատ, 215:

386. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Նախարդի կողքին, 6 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ
ԱՋԻՋ ՄԱՀՎ-
ԱՍՈՒՆ, ՈՐ ՊԱՏՑԱ-
Ո ԵՂԵՒ ՍԲ ԵԿԵՂԵՑՈՒ-
ՑՍ ՎԵՐԸՍՏԻ[Ն] ՆՈՐՈՔ-
ՍԱՆ: ԹՎ[ԻՆ] Ո�ճԸ (1669):

Հրատ. Դրիմեցի, 4, Զալալյանց, Ա, 79, «Արծագանք», 1884, 628, Երզնկյանց, 50, «Ազգ. հանդ.», VII-VIII, 407, ԿՏ, 191, Դաֆադարյան, Հաղբատ, 216:

387. ԽԱՉՔԱՐ. սրահի պատի տակ, թևերից վեր և պոչուկին, 3 տող.



ԹՎ[ԻՆ] ՉԻՍ (1491):
ՍԲ ԽԱ[Չ]ՔԱ ԲԱ[Ր]Ե[Խ]ԱՒ[Ն] ՅԻՍ-
ԱՐԻՆ

ՀԱՄԱՋԱՍՊԻ ԺԱՄԱՏՈՒՆ

388. ՀԱՄԱՋԱՍՊԻ ԺԱՄԱՏՈՒՆ. արևմտյան մուտքի բարավորին, 5 տող.



Ի ԹՈՒԻՍ ՀԱ[ՅՈՑ] ՉԶ (1257),
Ի ՏԵՐՈՒԹԵ[ԱՆ] ՄԵԾԻՆ ՇԱՀՆՇԱ-
ՀԻ ԵՒ ՁԱՔԱՐԻԱՅԻ, ՇԻՆԵՑԱՒ ՄԵ-
ԾԱՓԱՌ ՏՈՒՆՍ ԱՅ Ի ՏՐ ՀԱՄԱՋԱՍՊԱ,
ՈՐՈՒՄ ՈՂՈՐՄԵՍՑԻ ՔՍ ԲԱՐԻ ՀՈԳՈՅ ՆՈՐԱ: ԱՄԷՆ:

Հրատ. Դրիմեցի, 21, Բժշկյանց, 78, «Կռունկ», 36, Երզնկյանց, 38, ԿՏ, 100, Կ. Դաֆադարյան, Հաղբատ, 217:

Ծանոթ. Շինարարական կարևոր այս արձանագրությունը վավերացնում է Համազասպի գավթի կառուցումը: Շենքի ճարտարապետության, ինչպես և դերի ու գործառության հարցերի շուրջ շատ է գրվել: Համազասպաշեն գավիթը վանական շինությունների մեջ ամենախոշորն է և ուշագրավ է իր ճարտարապետական ձևերի բարդությամբ ու լուծումներով: Ըստ արձանագրության՝ շենքը կոչվում է *մեծափառ տունս Աստուծոյ,* այսինքն այնպես, ինչպես բնութագրվում է եկեղեցին: Կ. Դաֆադարյանը անվանում է ժամատուն: Համազասպի գավիթը ունի նաև մատուռ-եկեղեցի, ուստի ավելի հարմար է այն կոչել գավիթ-ժամատուն:

389. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ժամատան առաջ, 2 տող (ԺԳ դ.).



ԳՐԻԳՈՐ ՔԱ-
ՀԱՆԱ:

Հրատ. Դաֆադարյան, Հաղբատ, 217:

390. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ժամատան ներսում, 3 տող (ԺԳ դ.).

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏԱՄԻՐ	ԱՅՍ [Է] ՀԱՆԳԻՍՏ ԱՄԻՐ
ԱԱՐԳՍԻԽԱՆՈՐԻՐԻ	ՍԱՐԳՍԻ, ԽԱՆՈՐ ԻՐԻ-
ՑՈՒՆՈՐԴՈՅՆ	ՑՈՒՆ ՈՐԴՈՅՆ:

Հրատ. Ղրիմեցի, 22, Երզնկյանց, 38, «Ազգ. հանդ.», VII-VIII, 403, Դաֆադարյան, Հաղբատ, 217:

391. ՏԱՊԱՆԱՔԱՐ. նույն տեղում, 5 տող (ԺԳ դ.).

ԱՅՍԷՀԱՆԳԻ	ԱՅՍ Է ՀԱՆԳԻ-
ՍՏԽԻԿԱՐ	ՍՏ ԽԻԿԱՐ-
ԻՆԳՐԻԳՈՐ	ԻՆ, ԳՐԻԳՈՐ
ԱԻԱԳԻՐԻՑ	ԱԻԱԳ ԻՐԻՑ-
ՈՒՈՐԴՈՅՆ	ՈՒ ՈՐԴՈՅՆ:

Հրատ. Ղրիմեցի, 22, Երզնկյանց, 38, «Ազգ. հանդ.», VII-VIII, 403, Դաֆադարյան, Հաղբատ, 218:

392. ՏԱՊԱՆԱՔԱՐ. նախորդի մոտ, 3 տող.

ՇՂԴ	ՇՂԴ (1145):
ՂԿ-ՆՈ	ՁՆՈՍ-
ՈՂՇ	ԱՂԻՆ:

Հրատ. Ղրիմեցի, 22, Երզնկյանց, 38, «Ազգ. հանդ.», VII-VIII, 403, ՎՏ, 29, Դաֆադարյան, Հաղբատ, 218:

Ծանոթ. Տապանաքարը նախապես եղել է դրսում և գավիթ-ժամատունը կառուցելուց հետո մնացել է ներսում:

«Երկրորդ և երրորդ տողերը գրված են գլխիվար, հակառակ ուղղությամբ» (Կ. Ղ.) (խմբ.):

393. ՏԱՊԱՆԱՔԱՐ. հարթ, խոշոր, երեսին և եզրակողերին, ըստ ընդօրինակող Աբելյանի՝ Համազասպի ժամատան հարավարևմտյան անկյունում, դրսում, հայերեն և վրացերեն.

ԳԱՍՊԱՐ:

ՀԱԶԱՐ ՃՀ ԸՆՆԻ (1178+551=1729) ԹՎԻ-

Ս, ԷՀԱՍ ՕՐ ՎԱԽՃԱՆ[ԻՍ]: ՅԻՇ[Է]Ա ԶԻՍ, ՏՐ Ի ՀՈՂԴ ԱՌ ԻՍ, ԳԵՏ[Ն] ԵՍ-

ՑԻ Ը[ՆԴ] ՏԱԲԱՆԻՍ:

ՕՆՈՒՆԴԱՒ ԱՒԱԶԱՆԻ՝

ԳՆԵՄ ԱՐՆԵ ՔՈՅ ՄԱՐՄՆԻ: ՕԱՌԱՅ ԳԱՍՊԱՐ ԹԻՖԼԻՍԷՑԻ,

ԱԶԳԱՍ ԶՏԵ[ՂՈՅՆ] ԿՈՂԲՑԻ:

Ծանոթ. Ուշ շրջանի տապանագրերը շատ հաճախ մորմոքուն բանաստեղծություններ են, ինչպես և այս դեպքում.

Գասպար
Հազար ճՀ ընՆի թվիս,
էհաս օր վախճանիս:
Յիշեա զիս, տէր, հողդ առ իս՝
Գետնեսցի ընդ տաբանիս:
Ծննդաւ աւազանի՝
Գնեմ արնէ քոյ մարմնի:
Ծառայ Գասպար Թֆլիսէցի,
Ազգս զտեղոյն Կողբցի:

394. ՄԱՏՈՒՈ. արևելյան պատին, արտաքուստ, 9 տող.



ԵՍ՝ ՄԻՆԱՍ ՎԱՐԻԱՊԵՏ, ԽՐԱՏ-
ԱՑՈ ԱՅԳԻՆ ԳՆԵՑԻ, ԲԱՀՐ-
ԷՆ ՍԲ ՆՇԱՆԻՆ ՎԱԽՄ ՏՎԻ-
Ն: ՈՎ ՈՐ ՀԱԿԱՌԱԿԻ
ՍՐԲՈՑԱՆԷ ԿԱՊԱՇ ԼԻՆ-
Ի: ԵՍ՝ ՓՈՒԼԱՏ ԲԷԿԱ, ՏԵ-
ՍԱՅ, ԱՅԼ ՎԵՐԸՍՏԻՆ ՀԱՍԻ-
ՏԱՏԵՑԻ: ԻՆՉ ՄԱՐԴ ԽԱԲԱՆ-
ԵԼ ՉԱՆԱՅ՝ ՆՉՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ:

Հրատ. Ղրիմեցի, 15, Երզնկյանց, 39, Ղաֆադարյան, Հաղբատ, 218:

Ծանոթ. Մինաս վարդապետի անվան առկայության շնորհիվ Կ. Ղաֆադարյանը թվագրում է մինչև 1651 թ.: Գրված է ոչ վայելչագեղ տառերով և սխալներով: Առաջին տողերի *Խրատացո այգին գնեցի, բահրէն սբ Նշանին վախմ տվին* ընթերցումից չի հստակվում միտքը: Անհասկանալի է մնում *Խրատացո* տոհմանունը կամ տեղանունը, ինչպես և այն, որ եկեղեցուն *վախմ*՝ սեփականություն տրված այգին պետք է մշակվեր կիսարարային եղանակով (= *բահրա*), և ստացված բերքի կեսը կամ տասանորդը տրվեր վանքին: Այս առումով, տվյալ հատվածը թերևս ավելի հավանական է վերծանել. *Խրամացո այգին գնեցի ի Բահրէն, սբ Նշանիս վախմ տվի,* ըստ որի *Խրատացոն* դիտվում է *Խրամացո*՝ պատսպարված տեղանք, ձոր. լեռնատակ, իսկ *Բահրան*՝ անձնանուն: Չի բացառվում նաև *Խրամատոյց* ընթերցումը, քանի որ բառի վրա պատվի նշան կա՝ ինչը նկատել է Կ. Ղաֆադարյանը:

395. ՄԱՏՈՒՈ. նախորդի ստորև, փորագրված խաչերի մոտ, 2 տող (ժէդ.).

ՍԲ/ՆՇ տր ՍԲ ԽԱՉԱՍ ՏՐ
ովանՆ/ին ՈՎԱՆԷՍԻՆ:

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 219:

Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ

396. Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան ճակատի սպիտակավուն խաչքարի շրջանակներին, 9 տող.



ՆՅՈ (1025) ԷՐ ԹԻՎԱԿԱ-
ՆՍ ԿԱՏԱ-
ՐԵՑԱՒ
ԵԿԵ-
Ղ
Ե
Ց
Ի
Ս:

Հրատ. Ղաֆադարյան, Հաղբատ, 255:

397. Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ. նույն պատին, սպիտակավուն քարի վրա, 2 տող.



ՍԲ ԳՐԻ
ԳՈՐ:

Հրատ. Դաֆադարյան, Հաղբատ, 255:

Ծանոթ. Այս երկու արձանագրությունները փորագրված են մանր գրերով, և «չեն ընդօրինակել նախորդ հրատարակիչները» (Կ. Դ.): Առաջինը եկեղեցու կառուցման վկայագիրն է, երկրորդը՝ անվանակոչման և նույն՝ 1025 թ. է: Այս երկու և 12 այլ արձանագրություններ Կ. Դաֆադարյանը զետեղել է մենագրությունը կազմելուց հետո, ուստի դրանք տեղադրվել են առանձին, գրքի 255-259 էջերում: Նպատակահարմար գտնվեց դրանք վերախմբավորել համապատասխան բաժիններում, նշված էջերից տեղափոխելով իրենց հուշարձանները:

398. Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան մուտքի կողին, 6 տող (ԺԳ դ.).



ԵՍ՝ ՏՐ ՀԱՄԱՋԱՍՊ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ, ՅՈՐԺԱՄ ԱԲՐԱՀԱՄ ՎԱ-
ՐԴԱՊԵՏՆ ԵՒ ԻՒՐ ՔՈՅՐՆ՝ ԱՆՆԱ, ԵԿԻՆ ՄԵՇ ՅՈՒՍՈՎ Ի ՍԲ ՆՇԱՆ-
Ա ԵՒ ՄԻԱԲԱՆԵՑԱՆ, ՅԱՌԱՋ Բ (2) ԳԻՐՔ ԷԻՆ ՏՈՒԵԼ ԵՒ ԱՅԺՄ՝ ԴՈՒ-
ՌՆ ՍԲ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՒ ԱՅԼ ԱՐԴԻՒՆՔ: ԵՒ ՄԵՔ ԸՆԿԱԼԱՔ ՍԻՐՈՎ
ԵՒ ՍԱՀՄԱՆԵՑԱՔ ՍԲ ԳՐԻԳՈՐԻՆ ԵԼՆ Ի ՎԻՐԱՊԷՆ Ա (1) ՊԱՏԱՐԱԳ
ՅԱՆՆԱԻ ՅԱՆՈՒՆ ՄԱՏՈՒՑԱՆԵԼ: ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ ՊԱՏԻ ՅԱՅ:

Հրատ. Դրիմեցի, 25, Զալալյանց, Ա, 62-63, Երզնկյանց, 34, ՎՏ, 236, Դաֆադարյան, Հաղբատ, 219:

Ծանոթ. Մեկնաբանելով արձանագրությունը՝ Կ. Դաֆադարյանը գրում է. «Առաջներում երկու գիրք նվիրելու մասին արձանագրություն չի կազմվել: Այդ երևում է նրանից, որ երկու գրքի մասին հիշատակություն կա այս արձանագրության մեջ առանց նշելու, որ արձանագրությամբ հաստատված են եղել այդ նվերներն, ինչպես սովորություն էր»: Նկատենք, որ հենց Հաղբատավանքի վիմագրերում գիրք նվիրելու փաստը արձանագրված է բազմիցս, իսկ այստեղ գրքերից զատ, տրվել է նաև *այլ արդիւնք,* որից հետո է փաստագրվել այս:

399. Ս. ԳՐԻԳՈՐԻ ԵԿԵՂԵՑԻ. մուտքից վերև, պատուհանի գլխին, 6 տող.



ԹՎԻՆ ՈԿ (1211)
ՆՈՐՈԳԵՑԱ-
Ի ԵԿԵՂԵՑԻՍ Ի ՁԵ-
ՌՆ ՏՐ ՅՈՀԱՆԻՍԻ ԵՒ

ՍԻԱԲԱՆ ԵՂԲԱՐՑՍ: ՅԻՇ-

ԵՑԷՔ Ի ՔՍ:

Գրատ. Դրիմեցի, 24, Չալալյանց, Ա, 63, Երզնկյանց, 34, ՎՏ, 51, Դաֆթաղարյան, Հաղբատ, 220:

Ծանոթ. 1025 թ. կառուցված եկեղեցին նորոգման ու ձևափոխության է ենթարկվել վանքի միաբանության միջոցներով ու նախաձեռնությամբ 186 տարի անց:

400. Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան մուտքից աջ, 2 տող.

ՍԲ ԽԱՉՍ ՏԱՆՈՒ
ՏԷՐ ԽԱՉԻ ԽԻՆ:

ԽԱԹՈՒՆԱՇԵՆ, Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

401. ԽԱԹՈՒՆԱՇԵՆ ԵԿԵՂԵՑԻ. արևելյան պատին, դրսից, 6 տող (ԺԳ դ.).

[illegible]

ԿՍՄԱՒՆ ԱՅ ՇԻՆԵՑԱՒ ՍԲ ԵԿԵՂԵՑԻՍ ԱՐՂԵԱՄԲՔ ԽԱԹՈՒՆԻՆ, ԴԱՏԵՐ ՀԱՍԱՆԱՑ, ՅԱՋՉԷ ԴԵՍՈՄԵԱՆՑ, ՈՐ ԲԵՐԱՒ Ի ԽԱՉԵՆՈՅ ՅԱՄՈՒՍՆՈՒԹԻՆ ՉԱՔԱՐԻԱ, ՈՐ ԷՐ ՏԷՐ ԳԱՂԱ ԵՒ ՏԱՒՇՈ, ԳԱՐՂՄԱՆԱ ԵՒ ՏԷՐՈՒՆԱԿԱՆԻՆ ԵՒ ԱՅԼՈՅ ԳԱՒԱՌԱՑ:

ԸՆԴ ՈՐՈՒՄ ԵԿԵԱԼ ԵՂԲԱՐՔ ԻՒՐ ՍԵՆԵՔԵՐԻՍ ԵՒ ՄԵՒԱՂԱ ԵՒ ՓՈԽԵԱԼ Ի ՔՍ ԵՂԱՆ ԱՌ ԴՐԱՆ ԿԱԹՈՂԻԿԵԻՍ, ԻՍԿ ԽԱԹՈՒՆՆ ՎԱՆԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՆՈՅԱ ԵՒ ԻՒՐ՝ ՇԻՆԵԱՑ ՁՍԱ ԵՒ ԵՏ Ի ՍԱ ՁՍԲ ՆՇԱՆՆ ՈՍԿԻ, ՈՐ ՈՒՆԻ ՄԱՍՈՒՆՍ, ԵՒ ՁԱՒԵՏԱՐԱՆՆ ՄԵԾԱԾԱԽ, ԵՒ ՍԿԻՀՔ ԱՐԾԱԹԻՔ. ԵՒ ԱՅԳԻ ՄԻ ԽԱԹՈՒՆԱՇԻՆԻ: ԵՒ ԵՍ՝ ՏՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՄԻԱ ԲԱՆՔՍ ՀԱՂԲԱՏԱ, ՏՈՒԱՔ ՍՈՅԱ Խ (40) ՈՒՆՔ ՄԻ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՐՈՁՆ: ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ ԴԱՏԷ ՁՆԱ ԱԾ ԵՒ ՁԿԱ ՏԱՐԻՁՔԴ ԱՒՐՀՆԵՑԷ ՔՍ ԱԾ: ԱՄԷՆ:

Գրատ. Դրիմեցի, 25-26, Բժշկյանց, 79, Չալալյանց, Ա, 65-66, «Կռունկ», 35, Երզնկյանց, 35, «Արարատ», 1886, 532 ՎՏ, 231-232, Դաֆթաղարյան, Հաղբատ, 220, Ոսկյան, Գվ, 178:

Ծանոթ. Արձանագրությունը վկայում է Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման մասին, որը եղբայրների հիշատակին արվել է Խաթուն Խաչենցու միջոցներով: Վանահայր Հովհաննեսն ու միաբանները նրանց՝ Խաթունի և եղբայրների համար սահմանում են քառասունք մի (Խ ունք) պատարագ:

402. ՏԱՊԱՆԱՔԱՐ (տեղահանված). ընկած խաթունաշեն եկեղեցու խորանի առջև, 9 տող.



ՅԻՇԵԱ ՏՐ ԶՀՈԳԻՍ ՀԱՆԳՈՒՑՅԵԱԼ
ՄԱՆԱՆԻԱՅԻ ԵՐԶՆԿԵԱՆՑ
ԵՒ ՎԵՑ ՈՐԴՈՑՆ՝ ԼԻԶԱՅԻ, ԱԼԵՔՍԱՆԴՐԻ,
ՇՈՒՇԱՆԻԿԻ, ԳԱՐԵԳԻՆԻ, ԿԱՏԱՐԻՆԵԻ, ԵՍ[Ա]ՅԻ:
ՄԱՆԱՆԻԱ, ԴՈՒՍՐ ՀՈՒԼԱԽ Պ[Ա]Ր[Ա]ՈՆ՝
ԲԱՐՍԵՂԻ [ԹԻ]ՎԼԻՍՑԻ ԽՈ-
ԺՐԱԳԼՈՒԽ ԿԻՆ Պ[Ա]Ր[Ա]Ն ՌՈՍՏՈՄԲԵԳԻ
ԵՐԶՆԿԵԱՆՑ ՀԱՂԲԱՏԵՑՈՅ. ՔՍԱՆ
ԱՄԵԱՅ Հ[ԱՍԱԿ]Ի. ՁՆՕ ԺԱՄ: 1893:

Ծանոթ. Խոսքը վերաբերում է «Հնախոսական տեղադրութիւն Հաղբատայ աշխարհահռչակ վանից սրբոյ Նշանի» աշխատութեան հեղինակ Ռոստոմ բեգ Երզնկեանցին:

ՁԱՆԳԱԿԱՏՈՒՆ

403. ՁԱՆԳԱԿԱՏՈՒՆ. արևմտյան մուտքի կիսաշրջան ճակատակալ քարի վրա, 8 տող.



Ի ՏԵՐՈՒԹԵՍՆ ԱՍՏՈՒԱԾԱՀԱՆՆ ԱՏԻ
Ի ԹՈՒԻ ՈՂԴԾԻՆԵՑԱՑ
ՂԵՑԿԱՁԱՐԴ ՏԱՃԱՐՍ ԱՅՁԱԹՈՒ
ՑԱՆՈՂՔԱՌ ԱԲԱՆ ՁԱՑՄՆԵԻԹՆԽՐԱ
ԱԻՄՐՀԱԱՁԱՍՊԱ ՊՈՒՄՈՂՊԱԼՍՑԻՔՍԵԻՏԱ
ՑԵԻԼՈՒԱՂԷՆՅԱԿԱՑԻՒՐՈՑ ՀՈԳՈՆՐԱԵԻՅՈՀԱՆ
ԻՍՔՈՒԵՐՊՊԴՈՒԻՐՈ ԵԻ ԱՅԼԱՇ ԽԱՄՈՂԱՑՆՁԻԲԱՁ
ՈՒՄՁԱՆԻԻԾԻԵԱՑՁՍԱԻԱՈՒՆՁՄԱԱԿՍՏԱԹՄԱՑ

Ի ՏԵՐՈՒԹԵՍՆ ԱՍՏՈՒԱԾԱՀԱՆՆ ԱՏԻ
ՈՒՄՁԱՆԻԻԾԻԵԱՑՁՍԱԻԱՈՒՆՁՄԱԱԿՍՏԱԹՄԱՑ

ՂԵՑԿԱՁԱՐԴ ՏԱՃԱՐՍ ԱՅ, ՁԱՐԹՈՒ-
ՑԱՆՈՂ ՓԱՌԱԲԱՆՁԱՑ ՏՆ՝ ԵՒԹՆ ԽՈՐԱՆ-
ԱՒ Ի ՏՐ ՀԱՄԱՁԱՍՊԱ, ՈՐՈՒՄ ՈՂՈՐՄԵՍՑԻ ՔՍ ՈՒ ՏԱ-
ՑԵ Ի ԼՈՒՍԵՂԷՆ ՅԱՐԿԱՑ ԻՒՐՈՑ ՀՈԳՈ ՆՈՐԱ ԵՒ ՅՈՀԱՆ-
ԻՍԻ՝ ՔՈՒԵՐՈՐԴՈ ԻՒՐՈ, ԵՒ ԱՅԼ ԱՇԽԱՏՈՂԱՑՆ, ԶԻ ԲԱՁ-
ՈՒՄ ՁԱՆԻԻ ՇԻՆԵԱՑ ԶՍԱ Ի ԴԱՌՆ ԺԱՄԱՆԱԿՍ ՏԱԹԱՐԱՑ:

Հրատ. Դրիմեցի, 19, Բժշկյանց, 78, Ձալալյանց, Ա, 76, «Կռունկ», 36, Երզնկյան, 51, «Արարատ», 1887, 72, ՎՏ, 88, Ղաֆադարյան, Հաղբատ, 222, Ոսկյան, Գվ. 234-235:

